

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ի Ց

Վաղ ժամանակներից պատմականապէս կապուած լինելով պարսիկ ցեղի հետ, հայերիս համար՝ ընտանի պահանջ պէտք է լինէր հիմնաւորապէս ու մօտիք ծանօթանալու այդ ազգի առանձնայատկութիւնների, կենցաղի, վարք ու բարքի, վարչական ընդունակութիւնների, մի խօսքով ողջ ցեղի ընոյթի հետ՝ իր լաւ ու վատ կողմերով։ Հին պարսիկները կեանքի մասին մեր հին մատենադրութիւնը որքան հարուստ տեղեկութիւններ է պարունակում իր մէջ, նոյնքան աղքատ է այդ կողմից մեր նորագոյն գրականութիւնը։ Ճիշտ է, թէև մեր պարբերական հրատարակութիւններում յաճախ է խօսուել արդի պարսիկների ու Պարսկաստանի մասին, և նոյնիսկ այդ ցեղի կեանքից գրուած են պատկերներ, սակայն մինչև օրս չունինք փոքր ի շատէ շնորհքով, միեւնոյն ժամանակ ամփոփ մի գրուածք, որն իր մէջ ճշգրիտ կերպով ցոլացնէր պատմական այդ մեծ ժողովրդի իրական պատկերը իր խոհերով ու ձգտումներով, իր բարքային մանրամասնութիւններով։ Մեր գրականութեան այդ էական պակասը լրացնելու դիտաւորութեամբ է, որ մենք թարգմանեցինք Ջէյմս Մորիէրի «Հաշի Բաքայի աշխածները Պարսկաստանում» գրուածքը, որի մէջ ներկայացրուած է պարսիկ ժողովուրդը իր դասակարգային վարք ու բարքով։ Խօսել չենք ցանկանում հեղինակի հմտութեան և բարեխղճութեան մասին, այդ բանը կը խոստովանի Պարսկաստանին ու պարսիկ ժողովրդի կեանքին քաջ ծանօթ Լորդ Պրերըն—Հնդկաստանի ներկայիս փոխ-արքան, որի կարծիքի թարգմանութիւնը անփոփոխ կցում ենք գրքին, որպէս ներածութիւն։

Գալով մեր թարգմանութեանը, այն կասենք, որ ամբողջ ընտելբը առանց կրճատումների վերածուած է հայերէնի, բացի սկզբի երկու-երեք գլուխների մէջ սրոշ հատուածներից, որոնց բովանդակութիւնն ենք միայն առել։

Մ. Կ.

Նոր-Ջուղա.

30 հոկտ. 1904.

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ներկայ դարուս առաջին տասնեակում՝ Պարսկաստանը, մի կարճ ժամանակ, անգլիական և հնդկական պետական մարդկանց արևելեան շահերի առանցքն (pivot) էր դարձել։ Այդ երկիրը՝ որ նախընթաց դարումը շատ քիչ էր ճանաչուել և ուսումնասիրուել, յանկարծ և միաժամանակ իր վրայ կենտրոնացրեց Ռուսաստանի փառասիրութիւնները, Մեծն Բրիտանիայի երկիւղները և Ֆրանսայի ասիական ծրագրները։ Մեծ պետութիւնների պատուիրակները եկան խոնուեցան նրա արքունիքում և մրցեցին միմեանց հետ ցոյցերի շքեղութեամբ և պարգևների շնայութեամբ, որոնցով նրանք աշխատում էին գրաւել նրա վեհի՝ Ֆաթ Ալի Շահի գերագոյն շնորհը։

Պարսկական դաշնադրութեան համար (որն այդ ժամանակ իր իսկական արժէքից աւելի բարձր էր գնահատում) աշխատող, մրցող ազերսարկուններից ամենափութաշանն ու ամենաառատաձեռն էին անգլիացիք, որոնց, փոփոխակի մի բոլոյէ յուզում, անհանգստացնում էր աֆղանների՝ Հնդկաստանի վրայ արշաւելու հաւանականութիւնը, և մի բոլոյէ Նապոլէօնի և Ցարի միացեալ զօրքերի ցամաքի վրայով Դէլիի վրայ յարձակուելու երկիւղը։

Այդ երկիւղները, սակայն, հաւասարապէս պատիր էին, բայց իրանց տեղութեան ընթացքում՝ պատճառ դարձան դեսպանների մի անընդհատ հոսանքի, ոմանք անգլիացոյց վեհի կողմից և ոմանք Կալիաթայի փոխարքայական պալատից, և շուտով հետեւեց մի շարք անգլո-պարսկական շփոթեցուցիչ դաշնադրութիւններ։

Սըր Ջոն Մալքըմը, Սըր Հարֆրէդ Ջոնզը, Սըր Գոր Օուզլին և Սըր Հէնրի Էլլիսը նշանակուեցին լիազօր գործակալներ բանակցելու այդ դաշնադրութիւնների համար, և վերջին երեք դիւանագէտների գլխաւոր օգնականն էր Ջէյմս Մորիէրը — Հաջի Բաքայի հեղինակը։

Մորիէրը ծնուել և մնուել էր արևելեան մթնոլորտում, բայց իր ուսումը ստացել էր Հարրոյում։ Նրան և նրա երկու

նորայրներին՝ նրանց հայրը, որ անգլիական հիւպատոս էր Կ. Պոլսում, նուիրեց արեւելեան Եւրոպայի կամ Ասիայի դիւանագիտական կամ հիւպատոսական ծառայութեանը: Նրա պարսկական փորձառութիւններն սկսուեցան այն ժամանակից՝ երբ 28 տարեկան հասակում նա ուղեկցեց Սըր Հարֆըրդ Զոնգին առանձին քարաուղարի պաշտօնով: Այդ՝ 1808—1809-ի անգլիական այն պատգամաւորութեան ժամանակ էր, որը զբոսեց հնդկական կառավարութեան դառն նախանձը և դրդեց նրան՝ անարժան ամբաստանութիւններ անելու:

Դաշնադրութիւնը վերջացնելուց յետոյ, Ջէյմս Մորիէրը վերադարձաւ Անգլիա, ուղեկցութեամբ պարսից պատուիրակի, որը Հաջի Բաքայի մէջ հանդէս է գալիս, որպէս Միրզա Ֆիրուզ, և որի՝ այս երկրում ցոյց տուած փորձառութիւնները նա յետոյ պատմում է Հաջի Բաքան Անգլիայում աշխատութեան մէջ:

Մինչդեռ իր հայրենիքումն էր, Մորիէրը զբոսեց իր երկու գործերից առաջինը (Պարսկաստանի վրայ), նաև այդ երկրում իր արած ճանապարհորդութիւնները ու փորձառութիւնները, որոնք, Սըր Զոն Մալքըմի գրուածքների՝ ինչպէս և Սըր Վ. Օուզլիի, Սըր Բ. Կէր Պորտերի և Յ. Բէյլի Ֆրէզի վերջնագոյն հրատարակութիւնների հետ միասին՝ աւելի շատ տեղեկութիւն ընծայեցին այս դարու առաջին քառորդում ապրող քաղաքակիրթ անգլիացուն, քան ունի այսօրուան անգլիացին:

1811—12-ին Մորիէրը Սըր Գոր Օուզլիի հետ, որպէս օգնական՝ վերադարձաւ Պարսկաստան, բանակցելու մի նոր դաշնադրութեան համար՝ Փրսնս-ուսական դաշնակցութեան նոր դրութեան առաջն առնելու նպատակով: Երբ նրա իշխանաւորը հեռացաւ Թէհրանից, նա մնաց այնտեղ որպէս *Chargé d'affaires*—Գործակատար— և 1814 թուականին նոյն կերպով օգնեց Սըր Հ. Էլլիսին, որը կապում էր մի ուրիշ դաշն, որի զօրութեամբ ոչնչացւում էր Օուզլիին, որ դեռ երբէք վաւերացրուած չէր:

Անգլիա վերադառնալուց յետոյ, 1815-ին երեաց նրա երկրորդ ճանապարհորդութիւնը, և վերջապէս, մօտաւորապէս տասը տարի դրանից յետոյ, 1824-ին, լոյս տեսաւ նրա պարսկական փորձառութիւնների և մտադիր խոկումների հասունացած արգելնքն այն անզուգական զրքի ձևով, որի համար գրում ենք սոյն ներածութիւնը:

Հաջի Բաքան իսկոյն կրթուած հասարակութեան սիրերելին դարձաւ և արագօրէն միջանի անգամներ հրատարակուեց: Այդ ժամանակից՝ նա ամենևին չէ կորցրել իր ժողովրդականութիւնը, և այն պահանջը, որ շարունակ կրկնւում է մի նոր հրատարակութեան համար, ապացոյց է ոչ միայն գործի իս-

կական արժէքին, որպէս մի ժամանակակից պատկեր՝ պարսիկ ժողովրդի կեանքի ու վարքի, այլ նաև նրա, այսպէս ասած, հաւատարմութեանը՝ որով շարունակում է երեք քառորդ դարուց յետոյ ևս, արտացոլել անփոփոխ մնացած մի արեւելեան ազգի ուշադրաւ և անփոփոխ յատկանիշները:

Դիւանագիտական պաշտօնից հրաժարուելուց յետոյ, Մորիէրը վախճանուեց 1849 թուականին, սակայն նրա ազգանունան համբաւը չմեռաւ, այլ պահպանուեց, և վերջերս աւելի ևս բարձրացաւ դիւանագիտական պատմութեան մէջ՝ շնորհիւ նրա եղբորորդի Սըր Բորերտ Մորիէրի, որը վախճանուեց 1893-ին, մինչդեռ անգլիական դեսպանութեան պաշտօն էր վարում ս. Պետերբուրգում:

Ջէյմս Մորիէրը թէ նկարիչ էր և թէ հեղինակ: Նրա երկու ճանապարհորդութիւնների մէջ տպուած պատկերների մեծագոյն մասը արտատպումներ են նրա իսկ ձեռքով նկարուածների: Իր մահից յետոյ, նա՝ թողեց մի խումբ տետրակներ կամ յիշատակարաններ, որոնք չեն հրատարակուած, բայց կարծում եմ հաւանականաբար լոյս կը տեսնեն:

Հայջի Բաքայի երկրորդ հրատարակութեան յառաջաբանում, հեղինակը, իմիջի այլոց խօսում է բաղմաթիւ ծանօթութիւնների մասին, որոնք նա հաւաքել է երկար ժամանակ Պարսկաստանում ապրելով, բայց ասում է, որ զրքի ծաւալը չստուարացնելու դիտաւորութեամբ՝ չէ կամեցել աւելացնել այդ ծանօթութիւնները: Եթէ դրանք երբէք գոյութիւն են ունեցել, որպէս մի առանձին կամ ամփոփուած դործ, այժմ չեն գտնուում նրա ընտանիքի ձեռքում, և հետեապէս կարելի է ասել, որ դրանք այլևս գոյութիւն չունին: Դրանց պակասը, ինչևէ, կարելի է միայն շատ թոյլ կերպով լրացնել, ինչպէս ներկայ դէպքում, նոյն ընտանի երկրում ճանապարհորդած, նոյն բեղմնաւոր անդաստանում ստորագրած հասկաքաղների արած գիտողութիւններով:

Ահա, այսպէս էր այն պատմական mise-en-scène-ը որով Ջէյմս Մորիէրը պատրաստեց իր մեծահամբաւ երգիծաբանութիւնը: Ես այժմ պիտի դառնամ բուն գործին:

Քննադատել՝ ևս առաւել երգիծաբանել մի երկիր կամ մի ազգ, մի կեղծ պատմիչի ծպտման տակ՝ սովորական է շատ երկրների գրականութեան մէջ. բայց աւելի սովորական ձևը՝ մի օտար երկրի կամ կլիմայի պատկանող մարդու բերանով երգիծաբանելն է: Այստեղ, ինչպէս և անմահ սանտիկոնցի Ժիլ Բլասի դէպքում, որի հետ յարմարապէս համեմատուած է Հայջի Բաքան, գերադասելի է այն համեմատաբար շատ աւելի դժուար ձևը կամ ծրագիրը՝ որով մի ազգի թերութիւնները

ցոյց են տրուում նոյն ազգին պատկանող մի անհատի բերանով:

Հաջի բաբան պարսիկներէց պարսիկն է—մի տիպ՝ որ բնորոշուած է ոչ միայն իր հայրենակիցներէ կեանքն ու շրջապատը, այլ նաև նրանց բնաւորութիւնը, բնազդներն ու մտածելու եղանակը, բայց և այնպէս հէնց նրա բերանից է, որ հոսում է անկիղձ խոստովանութիւնների և կծող, խայթող հեզնութեան զուարճացուցիչ վտակը, որը երբէք ոչ արուեստակեալ է, և ոչ ևս չարամտութեան արդիւնք, բայց որը զարկում, մտրակում է առանց վրէժխնդրութեան և քերում, պլուկում առանց չարամտութեան:

Այսպիսի մի կենդանատիպ ստեղծագործութեան պատասխանատուութիւնը յանձն առնող մի ոչ-արեւելցի գրողի տաղանդը պիտի գնահատել այն համեմատական չափով՝ թէ նրա գրութեան ծրարը որքան մօտ են ճշմարտութեան, Ո՛չոք, արդարև, չէ կարողացել և այժմ ևս չէ կարող գրել այդպիսի մի գիրք, եթէ նա խոր և լուրջ ուշադրութեամբ չէ ուսումնասիրել ոչ միայն արեւելցոց կեանքը, այլ և նրանց մտքերի արտայայտութեան ձևերը, նրանց ոճերը և նրանց մտածելու յատուկ եղանակը: Եւ բացի այդ յատկութիւններից՝ նա նաև պիտի ունենայ երկար դիտողութեան, լուրջ խելամտութեան և ուսումնասիրութեան մեծ կարողութիւն:

Մորիէրը միայն մօտ վեց տարի մնաց Պարսկաստանում, բայց եթէ նոյն իսկ իր ամբողջ կեանքն այդ երկրում անցկացրած լինէր՝ նա չէր կարող աւելի կատարեալ դարձնել իր ուսումնասիրութեան արդիւնքը որ նա ընծայել է մեզ, որով նա պակաս բան չէ թողել: Եթէ նրա պարսկական պատկերների մէջ (բացի Յովսէփի և Մարիամի պատմութիւնից) պակասում են բեմական և բանաստեղծական այն կատարեալ գոյներն ու յաւելուածները որ պէտք է լինին՝ այդ համեմատական պակասը լրացնում է այն դրամատիկական յատկութիւնների աներկբայ ճշտութեամբ՝ որ ունի ամեն մի անցք իր պատմութեան մէջ:

Հերոսը մի իսկական կամ բնորոշ բախտախնդիր պարսիկ է—մի անձն՝ որի մի մասը բարի է և երեք մասը սրիկայ և որը միշտ բախտի խաղալիքն է: Թէ սափրիչ, թէ ջրկիր թէ ծըխախոտավաճառ, թէ դէրվիշ, թէ բժշկի ծառայ, թէ դահճապետի օգնական, թէ գրագիր, թէ մուլահ, թէ աքսորեալ, թէ հալածական, թէ ծխածորճավառ, թէ տաճիկ վաճառական և թէ դեսպանի քարտուղար եղած ժամանակ՝ նա միշտ հաւասարապէս և՛ ընդունում է բախտի ապտակները և՛ շահւում է նրա գգուանքներից: Նա երբէք դժկամակ չէ ստախոսութիւն,

խաբէութիւն և գողութիւն անելու կամ օգտուելու որևէ մէկից մի կուուի մէջ՝ ուր ամեն մարդ իրան պէս ճիգ էր թափում իրանից օգտուելու: Նա՝ միշտ պատրաստ է այս կամ այն պատճառաբանութեամբ արդարացնել բարոյական գրգռի օրէնքների դէմ կատարուած զեղծումները:

Բայց Հաջի Բաբան ամենեւին սխալ լարին չէ զարկում: Նա երբէք չէ ասում կամ անում որևէ բան՝ որ իսկապէս անհաւականական լինի, բայց թէ յաջողութեան և թէ ձախորդութեան մէջ, թէ ուրիշի աւաղակութեանը զոհ և թէ ինքն աւաղակ՝ նա միշտ հաւատարիմ է մարդկային բնաւորութեան այն տիպին, որի նմանը արդի ժամանակը և եւրոպական շքեղապատը անընդունակ են արտադրելու, բայց որը բնական է մարդկային ընկերութեան մի վիճակի մէջ՝ ուր մարդիկ ապրում են իրանց խելքով-մտքով, ուր այսօրուան խոհարարի աշակերտը կարող է վաղուան մեծատունը դառնալ, ուր ամենաբարձրաստիճան անձնաւորութիւնը գերծ չէ բախտի ծայրայեղ փոփոխութիւններից, և ուր մի բռնաւոր վեհապետ՝ գլուխ է կանգնած՝ նախանձոտ, հակառակող, մաքառող ստրուկներից բաղկացած մի հասարակութեան:

Ազգային բնաւորութեան թերի կողմերը նկարագրելիս՝ Մորիէրը թերեւ ամենից խիստ կերպով ծանրանում է այն դանադանակերպ խաբէութիւնների վրայ, որ այլևայլ հնարքներով ու խորամանկութիւններով անում են արդի պատիկները: Նա հրճուանքով մերկացնում է մուսուլման մահմէդականի բարեպաշտութիւնը, Ղումի դալիպդէմ երկրպագուների կեղծ առաքինութիւններն ու սրբակեցութիւնը, և սուրբ շիրմներն այցելող ուխտաւորների դիւրախարութիւնն ու կեղծութիւնը:

Մորիէրի ամենալաւ պատկերներից մէկն է թափառական դէրվիշը, որ նախ բարեկամանում և դաստիարակում է Հաջի Բաբային և վերջը կողոպտում է նրան: Դա այն դէրվիշն է, որ իր արհեստի կամ գործի գաղտնիքը բացատրում է այսպէս:

«Դէրվիշ լինելու համար մեծ ուսում՝ ու գիտութիւն հարկաւոր չէ. բաւական է ունենալ մի քիչ համարձակութիւն եւ վստահութիւն՝ մարդկանց յիմարացնելու համար: Ես ինքս իմ աներեսութեամբ ու յանդուութեամբ կարողացել եմ՝ նրաշքներ գործել, մահամեծ հիւանդներին առողջացրնել, եւ այժմ, մի խօսքով մեծ հանգստութիւն եմ՝ վայելում եւ մեծապէս յարգում եմ՝ ըստ մարդկանցից՝ որոնք, ինչպէս դու, չգիտեն թէ դէրվիշներն ի՞նչեր են»:

Նոյն խտութեամբ Մորիէրը մերկացնում է մահմէդական եկեղեցու մեծանուն և մեծապատիւ սխներին—մուլահներին

և մուշտէհիդներին, ինչպէս տեսնուում է Թէհրանի մոլլահ բաշու և մոլլահ Նազանի գեղեցիկ պատմութիւնների մէջ: Նա ծաղրում է տեղական բժիշկների տգիտութիւնն ու կեղծութիւնները, որոնք մինչև օրս ոչ մի կերպով չեն յառաջադիմել: Ղադուն կամ օրէնքի պաշտօնական թարգմանչին նա վարձկան է համարում: Մի ծերունի քիւրդի բերանով՝ նա պարզ և անկեղծ կերպով գնահատում է պարսիկների բնաւորութիւնը, որոնք սրի եւ նիզակի տեղ գործ են ածում՝ դաւանանութիւնը, խաբէութիւնը եւ ստույթիւնը, եւ որոնց՝ ազգային մոլութիւնն է ստախոսութիւնը: Այդ ծերունու ասածները հաստատելու համար շատ նորագոյն փաստեր կան:

Մորիէրը մեծ ղուարճութեամբ է գրում պարսկական վախկոտութեան պատմութիւնները: Նա իր տիպերի մէկի բերանով կրկնում է այն նշանաւոր խօսքը, որ շատ ժամանակուայ մի պարսիկ զօրագլուխ իսկապէս արտասանել է, այն է՝ Ալլահ, Ալլահ, եթէ մեռնել չլինէր՝ պարսիկներս ինչպէ՛ս կը կոռէինք:

Սրիկայութեան և խաբէութեան այս մթնոլորտում, անազնութիւնը այն ծայրայեղութեանն է հասնում, որ Հաջի Բաբայի մայրը խաբում և գրեթէ բոլորովին զրկում է նրան իր ժառանգութիւնից, այսինքն իր հօր ունեցածից՝ որ՝ նրա իրաւունքն էր: Այս և նման երեւոյթների մէջ, պարսիկների ազգային բնաւորութեան թերի կողմերը այնքան մեծ տեղ են բռնում, որ այդ ազգին լաւ չճանաչող, նրա բնաւորութիւնը լաւ չուսումնասիրած միքանի անգլիացի քննադատներ՝ հետեւից, իրանց աթոռների վրայ նստած՝ մեղադրում են հեղինակին, նկատելով որ նա, իբր թէ անզգայութեամբ է վերաբերուել դէպի Իրանի ժողովրդին աւելի լաւ յատկութիւնը և միմիայն նկարագրել է նրանց վատ կողմերը: Նոյնպէս էլ Սըր Հաբֆըրդ Բրիդլը—Մորիէրի իշխանաւորը, Պարսկաստանից գրած իր տեղեկագրերի մէկի ներածութեան մէջ՝ գրում է, անշուշտ դեսպանական խոհեմութեամբ, հետեւեալը:

«Հաջի Բաբայի» միքանի էջերի վրայ մարդ ուզում է ժպտալ, քայց գնահատել պարսիկների ազգային բնաւորութիւնը այս կեղծ մարդու արկածներից՝ նոյնքան արդարացի կը լինէր, եթէ մարդ գնահատէր սպանիացոց ազգային բնաւորութիւնը՝ Դոն Բաֆայէլի կամ՝ նրա արժանաւոր օգնական Ամբրոզ դը Լամբլայի արկածներից... Նս որքան ճանաչում եմ պարսիկներին, կարող եմ վստահութեամբ ասել, որ նրանց մոլութիւնների մեծագոյն մասը սկիզբ են առել նրանց կառավարութեան մոլութիւններից, եւ

այնպիսի առաքինութիւններ որ նրանք ունենալ յառաջանում են մօրքի յատկութիւններին»:

Այս սիրուն, բայց ըստ իս, բոլորովին կեղծ, առերես տարբերութեանը կամ որոշմանը, որ Սըր Հարֆըրդ Բրիգլը դնում է պարսիկների առաքինութիւնների և մոլութիւնների աղբիւրների մէջ՝ կարելի է, որպէս բաւական լաւ պատասխան՝ ցոյց տալ, որ Հաջի Բաքան գրելիս՝ Մորիէրը ձեռք է առել պաշտօնական երգիծարանի գրիչը—մի գործիք՝ որ ոչ մի երգիծարան, սկսեալ ժուլէնալից մինչև Մուլֆտը, մինչև այսօր չէ թաթախել միմիայն մեղրի մէջ:

Բայց դրանից մի աւելի անկեղծ, և անշուշտ աւելի զուարճալի պատասխան՝ այն էր, որ Հաջի Բաքան հրատարակուելուց յետոյ, Մորիէրը ստացաւ պարսից ղեկավանից, որին նա ուղեկցել էր դէպի Անգլիա, հետեւեալ խօսքերը, խեղաթիւրուած անգլիերէնով:

Մենչի համար դուք գրի Հաջի Բաքան: Թագաւորը շատ բարկացած: Ես նրան երգում, որ դուք երբէք ստեր չէ գրում. բայց նա ասի, այո, գրի: Բոլոր ժողովուրդը շատ բարկացած ձեզ հետ, պարոն: Այդ շատ վատ գիրք, պարոն: Բոլորը ստեր, պարոն: Ո՞վ ասի ձեզ այդ բոլոր ստերը, պարոն: Ինչո՞ւ դուք չխօսեց հետս: Շատ վատ գործ, պարոն: Պարսիկ ժողովուրդը գուցէ շատ վատ ժողովուրդ, պարոն, բայց ո՞ր ձեզ հետ լաւ են եղել, պարոն: Ի՞նչի համար դուք հայոցից նրանց այդքան վատ»:

Անգիտակից կամ այսպէս ասած՝ կոյր խոստովանութեան մի ամբողջ աշխարհ կայ շղագիր այս նախադասութեան մէջ, որը կարող է պաշտպան հանգիստանալ Մորիէրի այրող՝ բայց ոչ երբէք չարամիտ երգիծարանութեանը:

Ըստ իս, ինչևէ, գրքի մէջ կան աւելի շատ հետաքրքրական բաներ՝ քան պարսիկների փոքրիկ յանցանքների զուարճալի գանահարութիւնը: Զիշտ ինչպէս որ Սըր Թովմաս Մորի ժամանակակից պատմութեանն ու առաջնորդող անձանց անձանօթ մարդը չէ կարող գնահատել նրա Ութուպեան, կամ Գուլիվերի ճանապարհորդութիւնները, նոյնպէս էլ նա, որ չէ եղել Պարսկաստանում և լաւ չէ նուիրուել ժամանակակից դէպքերի ուսումնասիրութեանը, չէ կարող լաւ հասկանալ, թէ Հաջի Բաքան ինչպէս ճշմարիտ պատկեր է ներկայացնում իսկական անձնաւորութեանց և ինչքան ճշմարիտ իրողութեանց արձանագրութիւն է: Դա լոկ երևակայական երգիծարանութեան խաղ չէ. դա պատմական փաստաթուղթ (document) է:

Բեմի վրայ շարժուող անձինք նկարչական ստեղծագործութիւններ չեն, այլ կեղծ անուններով կենդանի անձնաւորու-

թիւններ, որոնց Մորիէրն ամեն օր հանդիպում էր Թէհրանում հղած ժամանակ:

Անցքերի մեծագոյն մասը, որ այդպէս հմտաբար հիւսուած է հերոսի արկածների պատմութեան մէջ՝ իրօք պատահել են, և այն ընթերցողը, որ ծանօթ է այն ժամանակուայ դէպքերին՝ կարող է նոյնացնել (identify) նրանց:

Ամենից վեր, Հաջի Բաքան որպէս ազգային սովորութիւնների մի նկարագիր շատ թանկագին մի նպաստ է ընկերաբանութեան (sociology) և պարսից սովորութիւնների, ձևերի, հայեցակէտերի և վարք ու ընթացքի մասին աւելի ճշմարիտ և կրթիչ տպաւորութիւն է թողնում, քան որևէ մի ուրիշ հետազոտութիւն, որ ես տեսել եմ պետական մարդկանց, ճանապարհորդների և այլ գործի վարդկանց աւելի լուրջ աշխատութիւնների մէջ: Ես այժմ կըսկսեմ նոյնացնել անձաւորութիւններից և անցքերից մի քանիսը:

Հաջի Բաքայի մէջ չկայ աւելի ճշգրիտ պատկեր, քան այն՝ որ ներկայացնում է Ֆաթ Ալի Շահին—երկրորդ Ղաջար թագաւորին և այժմեան իշխող Շահի մեծ պապին: Նրա սնապարծութիւնն ու ցուցամոլութիւնը, նրա փողասիրութիւնն ու կնասիրութիւնը, նրա շողոքորթասիրութիւնը, նրա՝ կրօնաւորներին խոհեմութեամբ յարգելը (ինչպէս տարին մի անգամ ապաշխարութեան զգեստով նա գնում էր Ղում այցելելու Ֆաթիմէի շիրամը), նրա արքայական փառքն ու շուքը, նրա գոհարները, նրա ամբըստական մօրուքը—այդ բոլորի մասին ժամանակակից գրողները գրել են, սակայն սոյն գործի մէջ փայլուն գոյներով վերարտադրուած են: Արքայական թափօրները—թէ կիսապաշտօնական՝ երբ նա այցելում էր իր հպատակներից մէկին, և թէ պաշտօնական՝ երբ նա դուրս էր գնում մայրաքաղաքից—նաև արքայական ընտանիքի տարեկան Սուլթանիէ ամարանոց գնալը՝ իրական կեանքից են վերցրած: Այժմեան Շահի օրով այդ թափօրները բաւականաչափ կորցրել են իրանց նախկին փառաւորութիւնը:

Պատմութեան մէջ յիշուած մեծ վէզիրը—այդ փոքրիկ, զառամեալ և չար մարդը՝ որ յայտնի էր իր վայրագ և անողոք բնաւորութեամբ՝ Միրզա Շէֆին էր, որին Ֆաթ Ալի Շահը յաջորդէ նշանակեց այն Միրզա Իբրահիմ նախարարին՝ որին Ֆաթ Ալի Շահի հօրեղբայրը պարտական էր իր գահը և որի՝ եղբօր որդին Ֆաթ Ալի Շահը վարձատրութեան տեղ սպանեց:

Ամին էդ Դովլէն կամ արքունի գանձապահը—այդ բարձրահասակ, հաստամարմին մարդը՝ Մոհամէդ Հօսէյն խանն էր, որը պալատական երկրորդ անձնաւորութիւնն էր, և որը

մի սպահանցի կանաչավաճառի որդին էր: Միայն մի փոքրիկ տառական փոփոխութիւն է հարկաւոր՝ Շահի բժշկապետ Միրզա Ահմադի անունը Միրզա Ահմադ դարձնելու համար: Նամարդ խան դահճապետը, որ Հաջի Բաբայի երկրորդ աղան էր, և որի վախկոտութիւնը վառ գոյնեղով նկարագրուած է՝ իրական կեանքում Ֆարաշ Օլլահ խանն էր: Արքունի բանաստեղծ Ասքէր խանի իսկական անունը Ֆաթ Ալի խան էր, և այն պատմութիւնը թէ՛ մի անգամ Շահը հրամայել էր նրա բերանը ոսկով լցնել և մի ուրիշ անգամ էլ շաքարով՝ որպէս արքայական հաւանութեան նշան՝ իրողութիւն է: Երեանի Սարգարը — այդ հեշտասէր, անառակ բայց և առատաձեռն ու մեծ գործերի ձեռնարկելու յանդգնութիւն ունեցող անձնաւորութիւնը՝ Հասան խանն էր, և հայ երիտասարդ Յովսէփի և Մարիամի սիրարանական պատմութեան ամենափոքրիկ մանրամասնութիւնն անգամ (ինչպէս հայոց ստորերկրեայ բնակարանների մէջ ուսմը գցելը, և Մարիամի դուրս նետուելը՝ Սարգարի երեանի պալատի կանանց սենեակների մէկի պատուհանից) վերարտադրութիւններ են այնպիսի անցքերի, որոնք իսկապէս պատահել են այդ թուականի ուսուպարսկական պատերազմի ժամանակ:

Վերջապէս, Միրզա Ֆիրուզ խանը — պարսից դեսպանը, որ ուղարկուեց Անգլիա և որը Հաջի Բաբան Անգլիայում է հերոսն է՝ Միրզա Աբու Հասան խանն էր և եղբորորդին էր այն նախկին մեծ վեդիբի, որն այցելեց Լոնդոն (1809—10-ին), որպէս Շահի ներկայացուցիչը և որը յետոյ նոյն պաշտօնով ուղարկուեց Ս. Պետերբուրգ: Այս անձնաւորութիւնը բաւական մեծ տպաւորութիւն թողեց Անգլիայում իր ազնիւ վարքով և զուարճալի սրախօսութիւններով, որոնցից մէկն արժէ այստեղ յիշել: Երբ մի անգամ մի տիկին նրան հարցնում է «Պարսկաստանում դուք չէ՞ք պաշտում արեւին», նա պատասխանում է, «Այո, տիկին, մինք պաշտում ենք, և դուք էլ կը պաշտէիք Անգլիայում, եթէ երեք տեսնէիք նրան»:

Հաջի Բաբայի մէջ լուրջ տեղ է բռնում նաև միջազգային քաղաքականութիւնը: Ֆրանսական դեսպանը, որը խայտառակութեամբ հեռացաւ Թէհրանից՝ գնեցրաւ Գարդէնն էր — Նապոլեօնի դեսպանը, որը (երբ իր տէրը ստորագրել էր Տիլզիթի խաղաղութիւնը Յարի հետ) տեսաւ որ պարսից պալատը տարբեր արժէքով էր գնահատում ֆրանսական դաշնակցութիւնը: Անգլիական դեսպանը, որի փառաւոր ընդունելութիւնը նկարագրուած է՝ Սըր Հարֆըրդ Զոնգն էր: Գլխարկների, գուլպաների, աթոռների և այլ քաղաքավարական կէտերի վրայ տեղի ունեցած վիճարանութիւնները՝ պատմական են, և Մորիէրի

նկարագրած իւղաներկ պատկերը դեռ ևս գոյութիւն ունի Նազարիստանում պարսից արքունիքի պատերի վրայ: Այնտեղ տեսնուում են Սըր Հարֆըրդ Զոնդի, Սըր Զոն Մալքըմի ինչպէս և գեներալ Գարդէնի պատկերները, որոնք ներելի անաքրոնիզմով խմբուած են նոյն նկարի մէջ: Այնտեղ է թաղաւորն իր բարակ (սարդի մէջքի պէս) մէջքովը, և իր իշխանական մօրուքովը, այնտեղ են նաև այն արքայազներն ու նախարարները, որոնց մասին մենք կարդացել ենք: Ճշմարիտ և ստոյգ է այն պատմութիւնը թէ՛ անգլիացիք մարդասիրաբար ջանք էին անում Պարսկաստանում տարածել ծաղկի պատուաստումը, յետ մահու (post-mortem) քննութիւնը և գետնախնձորը:

Կան մի խումբ աւելի փոքրիկ օրինակներ, որոնց մէջ, այն՝ ինչ որ միմիայն պատմութեան մի լուսարանող անցք է երևում, իսկապէս պատմական ճշմարտութիւն է, օրինակի համար, թիւրքմէն աւազակներն աւելի քան մի անգամ քշեցին իրանց ալամանները հեռու մինչև Սպահան:

Այն ցեղը, որ գերեց Հաջի Բաբային, ինչպէս երևում է, աւելի Ատրէկ գետի միւս կողմում բնակուող Նօմութի ցեղն է, քան Ախալ թէքի թէք-թիւրքմէնները: Ես ինքս անցել եմ այն ճանապարհով՝ որ ընկած է Աբասաբադի և Շարֆուդէի մէջ, ուր այդ աւազակները սովորութիւն ունէին յարձակուելու անպաշտպան ու ահաբեկուած կարաւանի վրայ, և ամենևին չափազանցութիւն չկայ այն նկարագրութեան մէջ, որը ցոյց է տալիս, թէ նրանք ի՞նչ սոսկում պատճառեցին իրանցից աւելի մեծ թուով պարսիկներին:

Մի գրական հանդիսի մէջ նկատուած է, որ իբր թէ տաւաբախտ Զինարի պատմութիւնը բնորոշում է աւելի Ստամբուլի՝ քան Թէհրանի հարեմի կեանքը: Բայց սա բոլորովին սխալ դիտողութիւն է, որովհետև այդ ձևի սպանութիւնն աւելի քան մի անգամ կատարուել է Փաթ Ալի Շահի թաղաւորութեան օրով: Շիրազում դեռ գոյութիւն ունի այն շատ խոր հորը, որի մէջ, մինչև վերջերս իսկ ձգւում էին սլոնիկութեան համար դատապարտուած կանայքը: Երբ 1888-ին ես Բոխարայում էի, դրա նախընթաց տարումը մէկից աւելի սպանութիւն էր եղել, դատապարտուածին վայր գլորելով Մինարէ Գալանի (Մեծ Մինարէտի) գլխից:

Հետաքրքրական, բայց այժմ բոլորովին մոռացուած իրողութիւն է այն քրիստոնեայ դէրվիշի պատմութիւնը, որը վիճաբանում էր մուլաների հետ Սպահանի մազրասաններից մէկում և գրում էր մահմէդական կրօնի դէմ: Այդ դէրվիշը ոչ այլոք էր, եթէ ոչ այն յայտնի Հէնրի Մարտինը, որը Շիրազում շատ մեծ տպաւորութիւն թողեց իր անվախ և համարձակ վի-

ճարանութիւններով, և որը յետոյ մեռաւ Թոխատում (Ասիական Տաճկաստանում) 1812 թուին:

Երկու բանով միայն Հաջի Բաբայի ժամանակուան Պարսկաստանը տարբերուած է այսօրուայ Պարսկաստանից: Առաջինն այն է, որ ազգային և պալատական տարազը, բաւական տարբեր ձև է ստացել: Քաշմիր շալերն ու չալմաներն և կարմիր կտաւէ դանկապանները, որոնք Ֆաթ Ալի Շահի արքունիքում de rigueur էին՝ այժմ, Նասր-էդ-դին Շահի օրով տեսնուում են միմիայն «Սալամի»-ի օրերում: Թէհրանի պէնամուլ երիտասարդն այլևս չէ գործ ածում այն երկար և ծայրը ներս ծալուած փափախը, որպիսին առաջները նա թեք դնում էր իր գլխին: Այժմ աւելի կարճ տեսակ մի գլխարկ է վարդարում fin de siècle իրանցի galant-ի ճակատը:

Երկրորդն այն է, որ Հաջի Բաբայի ժամանակուայ Թէհրանը այժմ գրեթէ բոլորովին կերպարանափոխուած է. մասնաւորապէս նախկին դաջարների պարսպապատ պալատը իր աշտարակներով, մեծ դռների վերևում շինուած երեսը—բաց սենեակները, ուր թաղաւորը նստում էր տեսնելու իր զօրահանգէմները, և այն բարձր աշտարակը, որի գլխից Զինաբին վայր գլորեցին՝ դրանք այժմ չկան: Այժմեան Շահի օրով՝ դրանք կործանուել են և նրանց տեղն աւելի լայնարձակ շինութիւններ են կառուցուել:

Անփոփոխ են մնացել այն սովորութիւնները, որոնցով այն ժամանակ՝ ինչպէս և այժմ, արքայից արքայի հպատակները խոհեմ խթանի աղղկցութեամբ սովորեցնում էին բարեգործութիւն անել—լցնել արքայական գանձանակը կամ նրա փողի բոակը: Այժմ ևս Շահի այցելութիւնն իր հպատակներից մէկին՝ պարզ նշան է, որ մի խոշոր գումար պիտի տրուի ի փոխարինութիւն չհայցուած պատուի: Այժմ ևս ով Շահից մի պարգև է ստանում, պարտաւոր է իր ստացածի արժէքից աւելի մեծարժէք ընծայ տալ նրանց՝ որոնք բերել են արքայական շնորհը: Այժմ ևս Շահի պարգևած խալաթը (պատույ զգեստը) համարուած է որպէս մի խելօք միջոց վճարելու նախարարների կամ ծառաների ռոճիկներին մնացորդը:

Փոխ—դահնապետի օգնականը, ինչպէս տեսնում ենք ԼԳ. գլխում, սքանչելի կերպով նկարագրում է, թէ ի՞նչ ձևերով (ձևեր, որ այժմ ևս գործադրուում են) են Պարսկաստանում լրացնում ռոճիկների պակասը, և ես վստահ եմ, որ Մեծ Վէզիրի խօսքերը թէ Պարսկաստանում ինչպէս են հասկանում քաղաքական բարոյականութեան նշանակութիւնը՝ կը կրկնուին ամեն մի յաջորդի բերանով:

Այն արհեստը, ինչևիցէ, որի մէջ Մորիէրը ժամանաւորա-

պէս գերազանցում է, այն է, որ նա մտցնում է իր պատմութեան մէջ միջանի ստորակարգ դէպքեր, որոնք իր *dramatis personae*-ի ինքնաբերական մեկնարանութիւնների հետ միասին ընծայում են մեզ լուաբանող ծանօթութիւններ տեղական հանգամանքների և ժողովրդի ընկերական սովորութիւնների վերաբերմամբ: Օրինակի համար, նա օգտւում է Մէշհէթ լինելուց, որպէսզի առաջ բերի Հօսէյնի չարչարանաց ներկայացումը, որ ամեն տարի մոհարրամ ամսում կատարում են շիա մահմէդականները. նա իր հերոսին տանում է Ղում, որպէսզի նկարագրի *Բապտը* (ապաստարան), և ցոյց տայ թէ յանցաւորն ինչ տարօրինակ իրաւունքով է ազատւում պատժից: Նա նրան տանում է Բաղդադ, որպէսզի նրա վրայ դրոշմի այնտեղի խոցի կամ պալարի նշանը:

Նա լաւ նկարագրում է թիւրքմէնների բանակի կեանքը, բայց ճշտութեան տեսակէտից՝ գերազանց է նրա այն համապատասխան պատկերը, որով նա ներկայացնում է սահմանազրկի թափառական քիւրդերի գոյութիւնը: Ոչ մի տեղ այնքան կենդանի կերպով նկարագրուած չէ թափառականների կեանքը, նրանց կարգադրութիւնները, ուտելը, կարգ ու ձևերը, վրան խփելն ու հաւաքելը, նրանց ցեղերի մի տեղից մի ուրիշ տեղ արշաւելը իրանց տաւաճներով՝ ընչպէս նկարագրուած է Զինաբի-բիրդ գերուհու մանկութեան պատմութեան մէջ:

Պիտի նկատել, որ Մորիէրը Զինաբին ներկայացնում է որպէս մի եզիդի կամ դիւապաշտ (թէպէտ աւելի քան կասկածելի է թէ արդեօք կարելի է եզիդուն իրաւամբ դիւապաշտ կոչել), և նրա ծագումը վերագրում է գիշերային այն բազոսական կերուխումին, որ ինչպէս ասւում է, կատարում էր այդ ժողովուրդը—մի սովորութիւն՝ որից ծագեց *Ձէրաղ Սունդերուն* (ճրագ հանգցնող) մակդիրը: Պիտի նկատել, որ այդ դէպքում, Զինաբը պիտի ճանաչէր իր գոյութեան հեղինակին աւելի մօր կողմից՝ քան հօր, այն ինչ Մորիէրը մի տարօրինակ սխալով ներկայացնում է նրան, որպէս մէկը՝ որ ճանաչում է իր հօրը, բայց ամենևին չգիտէ թէ ով է իր մայրը:

Հաջի Բաբայի զանազան գլուխները մեզ ծանօթացնում են պարսկական կեանքի ու սովորութիւնների հետ: Մենք տեսնում ենք, որ յարգանքի նշան է համարւում այն սովորութիւնը որ պարսիկը պարտաւոր է իր ձեռներն ու ոտները ծածկուած պահել իր զգեստի ծալքերի տակ: Երկու տեղում մենք տեսնում ենք թէ՛ որպէս սգի նշան, պարսիկներն ինչպէս են քանդում իրանց զգեստի այս կամ այն կարը, փոխանակ պատտաւելու զգեստը: Մենք տեսնում ենք այն հասարակ սովորութիւնը թէ՛ նրանք ինչպէս են ֆալ բաց անում Հաֆէզից և Սաադիից,

գուշակելու իրանց ապագան կամ անելիք գործի լաւն ու վատը: Մենք բաւական ծանօթանում ենք թիւրքմէնների, պարսիկների և քիւրդերի խոհարարական ձևերի հետ. ծանօթանում ենք համմամի (բաղնիքի) մէջ՝ կատարուող գործողութիւններին և հերոսի հետ միասին գաղտագողի կերպով մտնում ենք պարսկական անդէրունի (հարեմի) գաղտնիքների մէջ և լաւ տեսնում ենք, թէ ինչքան նախանձ, գաղտնի դաւադրութիւն և յիմարութիւններ են աւերում այնտեղ: Ծերունի սափրիչի մահն և յուղարկաւորութիւնը մեզ առիթ է տալիս լաւ ըմբռնելու և նկարագրելու այն սովորութիւնները, որոնց համեմատ վարւում են պարսիկներն այդպիսի դէպքերում:

Մորիէրը նոյնպէս Յովսէփի և Մարիամի պատմութեամբը մեզ ընծայում է շատ հետաքրքրական նկարագրութիւն հայոց հարսնախօսութեան, նշանադրութեան և ամուսնութեան մասին: Ասքէր բանաստեղծի վերադարձը իր գերութիւնից՝ մեզ ծանօթացնում է պարսկական այն տարօրինակ սովորութեան հետ, որ մեռած համարուած մարդը՝ իր տունն է մտնում ոչ թէ տան դռնովը, այլ կտուրի վրայով, և երբ Հաջի Բաբան հաքիմ բաշու տան կտուրի վրայ կանգնած ականջ է դնում թագաւորի երաժշտական խմբի թմբուկների ու փողերի ձայներին, որոնք յայտարարում են արևմուտը, նա ցոյց է տալիս մի սովորութիւն՝ որը շիշած արեւապաշտութեան մնացորդն է, և որն այժմ ևս պահպանւում է արքայական կամ իշխանական աթոռանիսաներում, ինչպէս թէհրանում, Սպահանում և Շիրազում:

Ի դէպ, պիտի յիշել, որ Մորիէրը լաւ հմուտ էր թէ մըշակուած և թէ ժողովրդական պարսկերէնի և լաւ ծանօթ էր պարսկական կլասիկների հետ: Արևելեան փոխաբերութիւնները (metaphor) որչափ էլ որ չափազանցական են, այնքան հեշտութեամբ սահում, թռչում են նրա շրթունքներից, որ կարծես թէ նրանք միշտ պատրաստ են եղել նրանց վրայ:

Նրա խօսակցութիւնների (dialogue) մէջ կան այնքան խօսքեր Հաֆէզից և Սաադիից, որքան այսօր ևս կան այն բարեկիրթ ասիացու խօսակցութեան մէջ, որը մեծացել է այնպիսի երկրներում, ուր պարսկերէնը գրական լեզուն է: Ո՛վ որ չէ եղել արևելքում, չէ կարող կատարեալ կերպով գնահատել այն տաղանդը, որով Հաջի Բաբայի հեղինակին աշողուել է գործածել օտարազգի մտածելու և միտք արտայայտելու եղանակը, որպիսին պահանջւում է այդպիսի մի աշխատութեան համար:

Մենք չպիտի մեր աչքերը փակենք այն կողմնակի լոյսերի դիմաց, որոնք ձգւում են օտար ազգերի վրայ (թէև դաբուն գործի նպատակից դուրս է) և որոնք հաստատում են ոչ

միայն Մորիէրի մեծ հմտութիւնը կամ խոր ուսումնասիրութիւնը, այլև ցոյց են տալիս թէ ասիացի մուսուլմանները, այն ժամանակ՝ ինչպէս և այժմ, մեծ մասամբ, ինչ համարում ունին եւրոպական հաստատութիւնների և սովորութիւնների վրայ: Որքան զուարճալի է այն նկարագրութիւնը, որ Մորիէրը հաքիմ բաշու բերանով անում է, ցոյցտալով պարսիկների և եւրոպացիների միջև եղած գլխաւոր, արտաքին տարբերութիւնը, նոյնպէս և այն ժամանակուայ եւրոպական տարազը, որ պարսիկների աչքում այնքան անպատշաճ, անվայելուչ էր երևում:

Այն օրերում, պարսիկները ֆռանգներից ճանաչում էին միայն անգլիացիներին, ռուսներին և ֆրանսացիներին, և անշուշտ պարսից դեսպանը իրաւունք ունէր զարմանալու, երբ նա Պոլսում տեսաւ, որ ֆրանգները բաղկացած էին շատ ազգերից և ունէին շատ թագաւորներ:

Պարսիկները մասնաւորապէս հետաքրքրւում էին ճշմարտութիւնն իմանալ անհաւատ Բոլնապոլըտի մասին, որի վերայ նրանք զմայլւում էին, որովհետեւ ենթադրում էին թէ նա իր վարքով, ընթացքով ու գործով՝ նման էր իրանց հերոս Նադիր Շահին: Քիչ զուարճալի չէ այն փորձը, որ Հաջի Բաբան անում է առաջադիմելու ֆրանսացիների լեզուի ուսումնասիրութեան մէջ՝ զրի անցկացնելով այն բառերը, որ նա յաճախ լսում էր նրանց դեսպանի խօսակցութեան մէջ—sacré, Paris և l'Empereur:

Թէ պարսից պալատը գիտակից էր այն մրցութեանը, որ տեղի ունէր միմեանց նախանձող, հակառակող երկու պետութիւնների մէջ (Անգլիայի և Ֆրանսայի), թէհրանում քաղաքական բարձրութիւն շահելու համար՝ ապացուցւում է այդ ժամանակուայ պատմութեամբ, բայց սքանչելի կերպով լուսաբանւում է այն տիպլոմատիկ վիճաբանութեան մէջ, որ Մորիէրը դրել է Ֆաթ Ալի Շահի բերանը:

Կարո՞ղ է, վերջապէս, Կուսակցական կառավարութեան (Party Government) աշակերտը, և աւելի ևս՝ Համայնքների Տան (House of Commons) անդամը առանց անոյշ յուզմունքի կարդալ աշխարհիս ամենամեծ կայսրութեան կառավարութեան սխտեմի հետեւեալ նկարագրութիւնը:

«Նրանք որոշ տներ ունեն, որ լի են խենթերով, որոնք ամբողջ տարուայ կէսը հաւաքւում են վիճելու Եթէ նրանցից մի խումբը ասում է «սեւ», միւսը գոռում է «սպիտակ», եւ մի հասարակ խնդիր վերջացնելու համար՝ նրանք շատ անելի խօսքեր են վատնում, քան մեր մուֆտիներից մէկը մի ամբողջ թագաւորութեան ընթացքում: Պետական ո՛չ

մի գործ—ինչ էլ որ լինի դա, չէ կարող կարգադրուել առանց այդ խնթերի միջամտութեանը: Դիցուք թէ հարկատր է մի ապստամբ աղայի գլուխը կտրել եւ նրա ստացուածքը գրաւել, ո՛չ որ ո՛չինչ չէ կարող անել՝ մինչեւ այդ խնթերը չվիճաբանեն:»

Սրանք են, ի միջի այլոց, այն արժանաւորութիւնները, որ ունի այս սքանչելի և, ես ուրախութեամբ կ'աւելացնէի՝ անմահ գիրքը: Եթէ պարսից ազգը մինչև անգամ ջնջուէր, այլևս գոյութիւն չունենար աշխարհում, եթէ մինչև անգամ թէհրանը, Մէշհէզը և Շիրազը Պերսեպոլիսի և Շոշի վիճակին հասնէին՝ այս գիրքը—Հաջի Բաքան կը մնայ որպէս անդուգական զուարճալի և ճշգրիտ պատկեր մի ժողովրդի, որը թէպէտ այժմ իր անկման վիճակին մէջ է, բայց խաղացել և այժմ ևս խաղում է ո՛չ աննշան դեր ասիական քաղաքականութեան խառն դրամայում: Դա պատկերն է մի ուրախասիրտ, սրահանձար, փոփոխամիտ, բայց և խորամանկ, կեղծաւոր ժողովրդի, որը միևնոյն ժամանակ բնազանցազէտ ու դիպուածազէտ (casuistes) է, պալատական է և թափառական աւազակ, ազնիւ է և ստախոս—ժողովուրդ՝ որ hommes d'esprit է, բայց որի վախկոտութիւնը անբուժելի է:

Ահագին հատորներ են գրուած այս խառն ժողովրդի պատմութիւնը բացատրելու և նրա բնաւորութիւնը լուսաբանելու համար: Ես ինքս ևս բաւականաչափ նպաստել եմ այդ հատորներին, բայց եթէ վաղը այդ բոլոր հաստատուն գրականութիւնը այրուելու լինէր մի միջազգային դահճի ձեռքով և մնային միայն Հաջի Բաքան և Սըր Զոն Մալքեմի Ուրուագրերը (sketches). ես հաւատում եմ, որ ապագայ դիպլոմատը կ'ամ ճանապարհորդը կ'ամ այն դպրոցականը, որ հետուից պիտի ուսումնասիրէ Պարսկաստանը, նրանց էջերից աւելի ճիշտ տեղեկութիւններ կը ստանայ պարսիկների վարքի ու ձևերի մասին, և աւելի հմտութիւն՝ ձեռք կը բերի նրանց բնաւորութեան մասին, քան կարող է նա ունենալ՝ ամիսներ ապրելով այդ երկրում և տարիներ անկախօրէն ուսումնասիրելով այդ ազգի կեանքը:

Այդ երկու գործերը միասին ամփոփում են իրանց մէջ արդի և մահաժեռ Իրանի ժողովրդի կեանքը:

Հորդ ԶԵՕՐԶ ԿԸՐԶԸՆ

նում էի. ուստի վճռեցի իմ առաջուան ծրագրի համեմատ հեռանալ այդ երկրից: Շորերիս, ձիուս և նրա զարդարանքի կորստի համար ես ինձ մխիթարեցի իմ 95 թումանովը, որ ինձ կը բաւականանար իմ այժմեան պակասները լրացնելուն համար, և յետոյ Մօղա ըողորդ աստ (Աստուած մեծ է) բառերը ծառայեցին ինձ, ինչպէս ծառայել են ինձպէս շատ ուրիշ թշուառների, որպէս ուտեստի պաշար ապագայիս համար և որպէս պաշտպանութիւն ընդդէմ բոլոր չկանխատեսնուած թշուառութիւնների, որ ճակատագրի ձեռքը պատրաստում է մեզ համար:

ԴԼ. ԿԲ.

Հաջի Բաբան լսում է՝ բաղնիքում իրան պատահած արկածի պատմութեան շարունակութիւնը եւ սաստիկ վախենում է:

Հագնուելով ու պատրաստուելով որպէս մի վաճառական, որովհետեւ արդէն վաղուց վճռել էի հրաժարուել մուլայութիւնից այդ պաշտօնի մէջ յաջողութիւն չգտնելուս պատճառով, ես գնացի Գիրմանշահ գնացող մի կարաւանի ջորեպանի մօտ և նրա հետ խօսեցի որ մի ջորի էլ ինձ տալու: Բարեբախտաբար նա մէկ ջորի ունէր որ վարձուած չէր և առանց բեռ կըրելու թէհրանից եկել էր մինչև այնտեղ: Մի չնչին վարձով նա ինձ յատկացրեց դրան, և որովհետեւ ես ոչինչ բեռ չունէի նրա վրայ դնելու, մենք՝ ջորին ու ես շատ լաւ սազուեցինք իրար հետ:

Մենք ճանապարհուեցինք և հօթերորդ օրը հասանք Գիրմանշահ, ուր ես պատրաստուեցի մի ուրիշ ջորի վարձել. բայց ինձ ասացին որ դեռ մինչև մէկ ամիս ինձ չէր յաջողուի ջորի վարձել, որովհետեւ սահմանազլխում ահ ու սաբսափ տարածող քիւրդ աւաղակների պատճառով ոչ մի կարաւան չէր համարձակուի ճանապարհ ընկնել, եթէ դա բաղկացած չլինէր մեծ թուով ճանապարհորդներից: Ինձ նաեւ ասացին որ ուխտաւորներից և մեռած մարմիններից բաղկացած մի մեծ կարաւան մեզանից մէկ օր առաջ ճանապարհուել էր դէպի Գէրբէլա, և որ եթէ ես աշխատէի, կարող էի հասնել նրանց ետևից նախքան նրա վտանգաւոր տեղերից անցնելը:

Ես ամեն բոլոր ճանաչուելու և ձերբակարգուելու վտանգի մէջ էի. ուստի առանց ուշացնելու, ոտքով ճանապարհուեցի հասնելու կարաւանին: Փողս ապահով էր գօտուս մէջ, և առանց

ուրիշ բան վերցնելու, բացի մի դագանակից, հեռացայ Քիր-
մանշահից:

Երբորդ օրուայ երեկոյիսն դէմ, երբ գրեթէ բոլորովին
ուժասպառ էի եղել, ես հեռուից տեսայ կրակի լոյս, որի ծուխը
որորապատոյտ բարձրանում էր մի բլի ճակատի վրայ: Մօտենա-
լով՝ ես տեսայ որ դաշտը ծածկուած էր խաշինքով, և ինձ
յայտնուեց, որ ենթադրածիս պէս, մօտ էի կարաւանին: Քիչ
էլ մօտենալով այն բեռներին որոնք մի փոս ընկած տեղում
դիզուած էին իրար վրայ, և որոնց մօտ, ես գիտէի, պիտի
հանդիպէի չաուշին, ես տեսայ մի փոքրիկ սպիտակ վրան, որ
կանգնած էր քիչ հեռու և որը ցոյց տուեց, որ նրա մէջ էին
նշանաւոր ուխտաւորները: Այդ վրանի մէջ կանայք կային, ո-
րովհետեւ նրա մօտ դրուած էր մի թախտրեւան (պատգարակ)
և մի զոյգ քաջաւա (սակաւ, pannier):

Ես ինձ ձեռքերի ո՞րպէս թէ մի ուխտաւոր էի, և խօսելով
Չորեպանի հետ, նա ուրախութեամբ խոստացաւ մի ջորի տալ
ինձ: Ես շատ անհանգիստ էի. դրութեանս նայելով՝ ուզում էի
աննկատ մնալ, բայց գօտուս միջի 95 թումանը այնքան ար-
ժանապատուութիւն տուեց ինձ, որ ես չկարողացայ զսպել այն
ցուցամոլութիւնը՝ որ յատուկ է իմ բոլոր հայրենակիցներին:

Դիզուած բեռներից մի քիչ հեռու, ուր ես նստած էի,
կային հաստ թաղիքներով ծածկուած երկար ու նեղ հակեր,
կամ աւելի լաւ ասած՝ սնդուկներ, որոնք զոյգ-զոյգ դրուած
էին գետնի վրայ: Ես հետաքրքրուեցի թէ դրանք ինչէ՞ր են,
որովհետեւ առաջին անգամն էր որ ես այդ ձևի բեռներ էի
տեսնում, և ինձ ասացին, որ դրանք մեռած մարմիններ էին
որ տարւում էին Քէրքէլա:

—Դու ննտարակոյս օտարական ես, ասաց Չորեպանը, որ
այնքան շատախօս և այնքան ընդաբոյս հանճարի տէր մարդ
էր՝ ինչքան են իր համըրարները (համապաշտօնները) ընդհանը-
րապէս, եթէ ոչ՝ այդպէս տգէտ չէիր լինի: Դիտո՞ս, մենք շատ
հազուադիւտ բաներ ենք տանում Քէրքէլա:

—Այո, ասացի ես, ես օտարական եմ. ես գալիս եմ
շատ հեռու տեղից և սարերից եկած մարդու եմ նմանուած:
Յանուն Ալլահի, ինչէ՞ր են այդ հազուադիւտ բաները, որ դուք
տանում էք Քէրքէլա:

—Ի՞նչ, զարմացաւ նա, միթէ դու ոչինչ չես լսել թէ՛հրա-
նի մօլլա բաշու տարօրինակ մահուան մասին. միթէ դու չես
լսել թէ նա ինչպէս մեռաւ բաղնիքում, թէ նրա ուրուականը
ինչպէս տեսնուեց հեծած իր ձիուն, և յետոյ էլ հարեմումը, և
թէ ինչպէս յետոյ նա հեծաւ դահճապետի ամենալաւ ձիերից

մէկը և աներևութացաւ։ Ես զարմանում եմ, միթէ դու մինչև հիմա ձրտեղ էիր ապրում, որ ոչինչ լուր չունիս, աւելացրեց նա ուսերը վեր քաշելով։ Զորեպանի խօսքերից սարսափած՝ ես կեղծեցի իբր թէ ոչինչ, ոչինչ չգիտէի, և խնդրեցի նրանից որ բաւականութիւն տար հետաքրքրութեանս պատմելով ինձ բուլոր պատմութիւնը։ Նա պատմեց, և եթէ այդ պատմութեան մէջ ես ինքս մեծ դեր խաղացած չլինէի, անչափ կը զուարճանայի դրանով։

— Ուրեմն իմացիր, ասաց նա, որ ինչ որ ես այժմ պիտի պատմեմ քեզ՝ բոլորն էլ ճշմարիտ է։ Որովհետև ինքս անձամբ այնտեղ էի երբ այդ զարմանալի դէպքը պատահեց։

Եւ նա սկսեց այսպէս։

«Մոլլա բաշին մի օր մութը կոխած ժամանակ ճիշտ երեկոյեան աղօթքից յետոյ դնում է բաղնիք, լողանում, դուրս է գալիս և իր ծառաներով շրջապատուած՝ վերադառնում է տուն, մտնում է իր հարեմի խալվաթը, ուր նա պառկում է քնելու։

Դու, իհարկէ, գիտես, որ Պարսկաստանում, հասարակաց բաղնիքներից շատերը ամեն առաւօտ բաց են լինում կանանց համար մինչև մի որոշ ժամ, որից յետոյ տղամարդիկն են գընում։ Ինչպէս ասացի, իրիկունը մոլլա բաշին է բաղնիք գնում, իսկ միւս առաւօտը՝ լուսաբացին երբ բաղնիսպանը փչելով կովի եղջիրը բաղնիք է հրաւիրում ըր մուշտարիներին, նրա կէնը շրջապատուած իր աղախիճներով՝ գնում է բաղնիք։ Նրանք առաջինն են լինում որ մտնում են ներս։

«Իրանց խանումին յարգելու համար աղախիճներից ոչ մէկը չէ համարձակւում նրա ներկայութեամբ մտնել տաք ջրի աւազանը։ Բաղնիքի ւմբէթը հաղիւ թէ շատ աղօտ կերպով լուսաւորուած է լինում, և մոլլա բաշու կինը գրեթէ բոլորովին մթութեան մէջ է մտնում տաք ջրի աւազանը։ Երևակայիր թէ նա ինչպէս է զարհուրում, երբ մի-երկու քայլ առաջ դընալով, նրա ձեռքը դիպչում է ջրի երեսին տատանուող մի մեծ կտոր մսի։ Նա մի սարսափելի ճիչ է արձակում, իսկոյն դուրս է վազում ջրի միջից—կարծես թէ մէկը հալածում է նրան—և ուշաթափւում է։

«Հեշտութեամբ կարելի է երևակայել այն վախն ու սարսափը որ խանումը ձգեց իր աղախիճների մէջ, որոնք մէկ-մէկի ետեից, ճրագը ձեռքնեցում, ներս են վազում, ահաբեկուած այսուայն կողմն են նայում և իսկոյն դուրս վազում առանց հասկանալու թէ ինչն է որ իրանց այդքան սոս-խում է պատճառում։

«Ի վերջոյ պառաւ դուէնան սիրտ առնելով համարձակ-
ւում է նայել աւազանի մէջ, և որքան է զարմանում և սարսա-
փում երբ այստեղ մի մեռած մարդ է տեսնում»

«Աղախիններն սկսում են սոսկալ և այնպէս աղաղակել
որ նրանց ձայնից խանումը ուշքի է գալիս, և նրանց հետ
միասին աշխատում են քննել աւազանի միջի դիակը: Իհարկէ
զժուար է լինում ճանաչել ջրի մէջ փնացած և ուռած մարմի-
նը, բայց իվերջոյ, երբ գլուխն ու երեսը դէպի նրանց է դառ-
նում, և երբ որ պառաւ դուէնան ճրագի լոյսը նրանց վրայ է
ձգում, բոլորն էլ միաձայն գոչում են. «Ու՛ր Ալլի, մոլլա բաշին
է, մոլլա բաշին է»:

«Յանումը նորից ուշաթափւում է, և աղախինների մէջ
այնպէս իրարանցում է ընկնում, որ կ'ասես թէ այստեղ նը-
րանք լսում են «յարութեան փողերի սոսկալի հնչիւնը»:

«Հացուկոծի ձայնից, բաղնիքի շինութեան մէջ գտնուող
բոլոր կանայքը ներս են թափւում և յանկարծ աղախիններից
մէկը աղաղակում է. «Բայց դա չէ կարող մեր աղան լինել,
որովհետեւ ես իմ աչքով տեսայ որ նա վերադարձաւ բաղնիքից,
ես ինքս իմ ձեռքով պատրաստեցի նրա անկողինը, և վստահ
եմ որ նա շուտով ընեց: Անկարելի է որ նա միևնոյն ժամա-
նակ թէ բաղնիքում աւազանի մէջ խեղդուած լինի և թէ իր
անկողնում ընած լինի: Դա ուրիշ մարդ է, մեր աղան չէ»:

«Գերուհու այս խօսքերը աւելի մեծ սոսկում են պատճառ-
ւում կանանց, որովհետեւ նրանք մտածում են որ նրա տեսածը
իրանց աղայի ուրուականն է եղել: Շնայեցէք, ասում է խա-
նումը որ կրկին ուշքի է գալիս, նայեցէք դիակի երեսին, ես
վստահ եմ որ դա իմ ամուսինն է, տեսէք, անհ եղունկներին
տեղը, ես հէնց երեկ ճանկոեցի նրան»: «Եւ տեսէք, խանում,
ասաց գերուհիներից մէկը, տեսէք նրա մօրուքի այն տեղը,
որտեղից դուք երեկ մի փունջ մազ փետեցիք»:

«Այս տխուր յիշատակութիւնների վրայ խեղճ այրի խա-
նումն սկսում է այնքան դառնութեամբ լալ ու ողբալ, մինչեւ
որ աղախիններից մէկը մօտենում է նրան և հաւատացնում է
թէ մոլլա բաշին դեռ կենդանի է: Երբ նա կարող ճը-
րագը ձեռքիցս առնել, ասում է նա, ի՞նչպէս էր նա կարող ճը-
րուր փակել, ի՞նչպէս կարողացաւ ինձ ասել «դնա», ի՞նչպէս
նա խոմիալով քնեց»: Նա այնքան վստահ է լինում իր ասածի
ճշմարտութեան վրայ, որ իսկոյն շորերն հագնում է և ցան-
կութիւն է յայտնում գնալ իր աղայի ննջարանը, ուր նա կար-
ծում է թէ նա դեռ ընած է:

—Բայց եթէ աղան այնտեղ է, ապա սա ով է, ասաց մի
դին ցոյց տալով դիակը:

—Սա, սա նրա ուրուականն է, ասաց մի ուրիշը, որով-
հետեւ ոչոք չէ կարող երկու մարմին ունենալ—մէկն ապրելու
համար, իսկ միւսը՝ պահեստի:

—Ո՛հ, ասաց մի երրորդը կատակի ձևով, այդպիսի բան
բոլորովին նորութիւն կը լինի: Եթէ այդպէս լինի, ուրեմն նա
կարող է դրանց գործածել այնպէս՝ ինչպէս նա գործ է ածում
իր քաղաքի տունն ու ամառանոցը:

«Մինչև այս ժամանակ՝ բաղնիքը արդէն լցուած է լի-
նում շատ ուրիշներով: Մոլլա բաշու կինն ու աղախինները
աեւանջ են խլացնում իրանց սուր ճիչերով ու աղաղակներով:
Նրանց լացուկոծը աւելի սաստկանում է, երբ գերուհին
վերադառնալով ասում է. «Մոլլա բաշին խալվածութեամբ չէ, մի-
այն նրա քնած տեղն էր երևում նրա անկողնում, էլ ուրիշ ոչ
մի հետք չկայ»:

«Մոլլա բաշու մահուան լուրն իսկոյն տարածւում է, ամ-
բխը հաւաքւում է բաղնիքի շուրջը և ուզում է ներս մտնել,
և մինչև կանայքը ժամանակ են գտնում հազնուելու, բաղնիքը
լցւում է տղամարդերով: Թէհրանում դեռ ոչ մի հասարակաց
բաղնիքում այդպէս իրարանցման ու շփոթութեան տեսարան
չէր տեսնուել: Մոլլա բաշու կինն ու աղախինները լալիս, ող-
բում են, միւս կանայք էլ զայրացած յանդիմանում, հայոյում
են տղամարդկանց որ համարձակուել են թափուել բաղնիքի
մէջ: Յոյզն ու աղմուկը ծայրայեղութեան է հասնում:

«Վերջը գալիս են հանգուցեալի ազգականներն ու բարե-
կամները, նրանց հետ գալիս են և՛ մորդեշուրները, որոնք վեր-
ջնելով դիակը, տանում են լուանում, զմռսում և պատրաս-
տում են Գէրբէլա ուղարկելու, ուր յարմար է դատւում որ նա
թաղուի: Խանումը ցանկութիւն է յայտնում դիակի հետ ճա-
նապարհորդելու, և իմ ջորիները վարձւում են: Տեսնում ես
այն վրանը, նրա մէջ են նա և իր աղախինները, և այնտեղ
(ցոյց տալով բռնները), այնտեղ է նրա ամուսնու դիակը: Միւս
դիակներն էլ որ այնտեղ են՝ այն մարդիկն են, որոնք մոլլա
բաշու մահից ընչ առաջ ու յետոյ մեռել են Թէհրանում և ճա-
նապարհին. նրանք էլ ուղարկւում են թաղուելու մէկի պաշտ-
պանութեան ներքոյ, որը, յոյս ունենք, օգնութեան ձեռք պի-
տի մեկնէ նրանց դրախտը մտցնելու»:

Այստեղ ջորեպանը լռեց: Նրա պատմութեան վերջին մա-
տնն այնքան ազդեց ինձ որ ես վախից պապանձեցի: Ես աշ-
խատում էի փախչել, բայց այժմ իսկ վտանգի մէջ էի: Եթէ

մուլլա բաշու ծառաները որոնց միքանիսի հետ ես մտերիմ էի, ճանաչեին ինձ, հետո խօսէին՝ նրան ճանաչելով՝ շուտով կը յայտնուէր իմ սով լինելը:

— Բայց մուլլա բաշու ղիակը բաղնիքից դուրս տարուելուց յետոյ էլ լիճ պատահեց, հարցրի ես ջորեպանին, որովհետեւ ես սաստիկ հետաքրքիր էի իմանալու թէ արդեօք մարդիկ գտել էին ջորերս որ թողել էի բաղնիքի անկիւններից մէկում:

— Ալիի գլուխը վկայ, ասաց նա, ես լաւ չեմ յիշում: Այսօր քանը գիտեմ որ շատ պատմութիւններ էին անում մարդիկ, ամենմէկը տարրեր բան էր պատմում: Ոմանք ասում էին որ մուլլա բաշին խեղդուելուց յետոյ տեսնուել էր իր անդէրունումն, տեսնուել էր որ նա մտել էր իր ննջարանը, ուրշներն ասում էին թէ նա միւս առաւօտը տեսնուել է դահճապետի տան դրան և վերցնելով նրա ամենալաւ ձիերից մէկը՝ հեծել, գնացել էր: Դահճապետը մի նամակ է ցոյց տալիս որ մուլլա բաշին է գրել ու կնքել, և դրանով նրան արտօնութիւն է շնորհել գինի խմելու: Վերջապէս, այնքան շատ և հակասական են նրա մասին տարածուած լուրերը, որ մարդ չէր հասկանում թէ որքան հաւատարմ Բոլորն էլ ապշած, զարմացած էին թէ մի մարդ լիճ պէս է կարող կենդանի դուրս գնալ բաղնիքից, ինչպէս վկայում են նրա ծառաները ու բաղնիսպանը, և միևնոյն ժամանակ էլ խեղդուած լինել աւաղանումը: Մարդիկ ինչքան աւելի էին վիճում նրա մասին, այնքան աւելի էին շատանում շփոթութիւններն ու դժուարութիւնները, մինչև որ մի բան յայտնուեց որ դարմանալի կերպով պարզաբանեց խնդիրը:

«Բաղնիքի մի մութ անկիւնում, շարունակեց ջորեպանը, մի մարդու շորեր գտնուեցին, և առանց մեծ դժուարութեան՝ իմացուեց որ դրանք պատկանելիս են եղել Հաջի Բաբա անունով մի յիմար ախուդի, որը մուլլա բաշու երդուեալ թշնամի՝ վատահամբաւ մուլլա Նադանի հետեւորդներից մէկն է: Յետոյ բոլորը գոռացին՝ «Հաջի Բաբան է մարդասպանը, անկասկած նա է սուրբ մարդու խեղդողը, նա պիտի վճարի նրա արեան գինը»: Ամբողջ քաղաքը սկսեց որոնել նրան: Շատերն ասում էին որ ոճրագործը մուլլա Նադանն է եղել: Վերջապէս բոլոր կողմերը մարդիկ ուղարկուեցին բռնելու երկուսին էլ և նրանց մոտած կամ կենդանի թէ՛հրան բերելու: Ես միայն ցանկանում եմ որ բախտս ասի՝ նրանք երկուսն էլ իմ ձեռքն ընկնեն, նրանք ինձ համար աւելի շահ կ'ունենան քան բոլոր ջորիներն իմ վարձը մինչև Բէրլէլա:

Թող ընթերցողը գուշակի թէ ջորեպանի վերջին խօսքը—

ըր ինչ աղղեցութիւն ունեցան վրաս, այս, ինձ վրայ՝ որ երբէք անուանի չէի որպէս դժուարութիւններին քաջութեամբ յաղթող մէկը, և որ վտանգից աղատուելու համար՝ փախչելը իբրև առաջին քայլ գերադաս կը համարէի քան որ ևէ ուրիշ միջոցի դիմելը. սակայն այստեղից վերադառնալն աւելի վտանգաւոր կը լինէր ինձ համար. աւելի լաւ էր որ շարունակէի ճանապարհս, որովհետև շուտով մի ուրիշ կառավարութեան հողի վրայ կը լինէի: Ուստի վճռեցի, սուս-փուս շարունակել ճանապարհս, մօտալուտ վտանգով շրջապատուած մարդու զգուշաւորութեամբ և խոհեմութեամբ:

ԴԼ. ԿԳ.

Հաջի Բարան բռնում է, բայց նրա բարի աստղը կրկին հաշտում է նրա հետ ևւ ազատում է նրան:

Յաջորդ առաւօտը կարաւանը ճանապարհորդեց: Ես գնում էի ջորեպանների և միջանի հացկատակների խմբի հետ, որոնցից (վերջիններից) շատերը միշտ ուղեկցում են կարաւաններին, որպէսզի ինձ վարագործուած պահէի: Բոլորի առաջ գնում էր մոլլա բաշու կնոջ պատգարակը, որին հետևում էին նրա աղախիները, յետոյ դիակներով բեռնաւորուած ուղտերը, յետոյ մնացած կարաւանը որ բաղկացած էր գլխաւորապէս բեռնաւորուած ջորիներից:

Ես նախանձում էի նրանց՝ որոնք ինձանից աւելի աւագակային կամ սրիկայական կերպարանք և աւելի պատառուտուած շորեր ունէին, որովհետև ես սաստիկ վախենում էի, որ միգուցէ դէմքս բաւական գեղեցիկ երևար ճանապարհորդներին և նրանք ուշադրութիւն դարձնէին վրաս: Ես յատկապէս սոսկում էի այրի խանութի ծառաներից. երբ նրանք ինձ մօտենում էին, ջանս դող էր ընկնում, թէպէտ ես սաստիկ հետաքըրքիր էի տեսնելու թէ նրանց խմբում կային իմ մտերիմներից թէ չէ: Երբ նրանք մօտենում էին ինձ, ես իսկոյն երեսս միւս կողմն էի դարձնում, որպէսզի նրանք չտեսնէին դէմքս:

Այդ օրուայ ճանապարհորդութիւնը անվտանգ անցաւ, և երբ իջանք գիշերելու, ես գլուխս մի բեռան վրայ դրի ու քնեցի մինչև միւս առաւօտը: Երկրորդ օրն էլ բախտաւոր էի, որովհետև ինչիչ չպատահեց ինձ: Այս աջողութիւնը այնքան վստահութիւն ներշնչեց իմ մէջ, որ ես փառասիրաբար ցան-

կացայ ջորեպաններից մի քիչ աւելի լաւ մարդկանց ընկերակցութիւնը վայելել:

Ես՝ ծանօթացայ ճանապարհորդներից մէկի հետ, որը, ինչպէս ինձ ասացին, հայ եպիսկոպոս էր, և որին ես հաղիւ հասկացրել էի որ ինքը շատ բախտաւոր պիտի համարէր իրան և շատ էլ շնորհակալ որ արժանացել էր ինձպէս մի ճշմարիտ հաւատացեալի ուշադրութեանը, երբ յանկարծ խանութի ծառաներից մէկն եկաւ անցաւ մեր մօտից, և ես յանձին նրա ճանաչեցի այն մարդը՝ որ աշխատել էլ ինձ ամուսնացնել մի մոթու հետ երբ ես նոր էի մտել մոլլա Նադանի ծառայութեան մէջ, Ես լեղապատառ եղայ երբ նրան տեսայ: Եթէ մոլլա բաշու ուրուականն երևար աչքուս, ես այդքան չէի վախենայ: Իսկոյն երեսս միւս կողմը դարձրի, բայց նա անցաւ գնաց առանց ուշադրութիւն դարձնելու վրաս, այնպէս որ ոչինչ չպատահեց ինձ, միայն թէ սաստիկ վախեցայ: «Ձէ, մտածեցի ես, էլի պիտի մտնել ջորեպանների խմբի մէջ», և իսկոյն թողնելով եպիսկոպոսին զբաղուելու իր մտածմունքներով՝ գնացի ընկայ նրանց մէջ:

Յաջորդ օրը մենք պիտի անցնէինք այն կիրճերով՝ ուր բռն էին դրել քիւրդ աւաղակները: Իհարկէ, այդ տեղերից անցնելիս՝ ամեն մարդ այնքան տարուած կը լինէր իր անձն աւաղակներից փրկելու մտածութիւններով, որ ոչ ոք ժամանակ չէր ունենալ ուշադրութիւն դարձնելու վրաս: Բաւական էր, որ պարսից հողից անցնէինք տաճկացը, այլևս վտանգ չէր լինի ինձ համար, որովհետեւ եթէ ես բռնուէի՝ տաճիկների պաշտպանութիւնը կը խնդրէի:

Այդ օրը—մի օր՝ որ լաւ յիշատակուած է իմ արկածալից կեանքի պատմութեան մէջ, կարաւանը զօրախմբի կերպարանք ստացաւ: Ո՛վ որ մի բան ունէր որ կարող էր իրան ծառայել որպէս ղէնք, հանում, ցոյց էր տալիս: Ամբողջ կարաւանը յիշեցնում էր ինձ մի նոյնանման տեսարան, որ ես նկարագրել եմ պատմութեանս առաջին էջերում—թիւրքմէնների յարձակումը՝ երբ ես Օսման աղայի ծառայութեան մէջ էի:

Այս դէպքում էլ նոյն երկիւղի նշաններն էին երևում, և ես հաւատարմութեամբ պիտի խոստովանուեմ, որ ժամանակն երբէք չէր ուժեղացրել նեարդերս, ոչ էլ ինձ որևէ իրաւունք էր տուել «առիւծ ուտող» մակդիրը աւելացնելու անուանս վրայ:

Կարաւանը դնում էր համախմբուած: Բոլորի առաջ գնում էին չառնն ու ջորեպանը, որոնք մոլլա բաշու կնոջ ծառաների հետ միասին կաղմում էին մի տեսակ առաջապահ զօրք

(vanguard). Իսկ ես, որ աւելի բան մէկ պատճառով ստիպուած էի միմիայն իմ ազանովութեան վրայ մտածել՝ ընկել էի բազմութեան մէջ, և ուրախ էի նրա համար, որ բացի գօտուս մէջ պահուած 95 թումանից՝ ուրիշ ոչնչով ծանրարեւոնուած չէի:

Մենք առաջ էինք գնում լուելեայն: Ոչ մի ձայն չէր լսուած բացի ջորինների և ուղտերի զանգակների զնգզնգոցներից: Մինչդեռ խորապէս մտածում էի թէ ինչ կերպով պիտի ծառայեցնէի փողս երբ որ Բաղդադ հասնէինք, յանկարծ գլուխս բարձրացնելով տեսայ մի լաւ զինուած պարսիկ որ ջորեպանի հետ գալիս էր գէպի ինձ:

— Զէնց սն է ասածս մարդը, ասաց ջորեպանը, մատնացոյց անելով ինձ:

«Ալիի գլուխը վկայ, մտածեցի ես, որ բարի բաղդս խոժոռուել է վրաս, նեղացել է ինձանից»:

Ես նայեցի զինուած պարսկին ու ճանաչեցի նրան: Նա հէնց այն Արդիւլ Բէրիմն էր, որից ես առել է հարիւր թումանը Սէյդաբադ գիւղում: Սաստիկ վախենում էի և մտածում էի որ արդէն կորած եմ, բայց մի քիչ հանդատացայ երբ ջորեպանն ինձ ասաց.

— Դու վերջին մարդն ես, որ միացար մեր կարաւանին, և գուցէ կարող ես մեզ ասել թէ այժմ Բէլլը Ալի խան աւազակը սահմանագլխի սր կողմումն է:

Ես մեծ վրդովմունքով պատասխանեցի նրան. բայց խօսելիս աչքերս Արդիւլ Բէրիմի վրայ էի պահում, որը նայում էր ինձ իր սուր, թափանցող աչքերով, որոնք մօտ էր լեզաւ պատառ անէին ինձ: Կասկածանքի մէջ ընկած մարդու պէս, նա սկսեց զննել ինձ, ես էլ աշխատում էի խոյս տալ նրա հայեացքների տակից, սակայն նա կարծես թէ յանկարծ մի բան յիշեց և բացազանչեց. «Զէնց ինքն է. ես ճանաչում եմ դրան. դա այն մարդն է որ խաղ արեց մօրուքիս հետ և հարիւր թումանը ձեռքիցս առաւ»: Յետոյ դառնալով մեզ մօտ դառնուող մարդկանց՝ ասաց. «Եթէ դուք աւազակ էք ուզում բռնել, ահա ձեզ մէկը. այս մարդը աւազակ է. յանուն Մարգարէի, բռնեցէք դրան»:

Ես սկսեցի վիճել, հակառակել, ժխտել այդ ամբաստանութիւնը, և հաւանականաբար ինձ կը յաջողուէր համոզել շրջապատողներին որ ես զուր տեղն էի ամբաստանում, բայց յանկարծ դժբախտաբար վրայ հասաւ «ամուսնութեան պաշտպանը», իսկոյն ճանաչեց ինձ և գոչեց. «Օհօ, Հաջի Բաբան»: Իմ ամբողջ պատմութիւնը լոյս ընծայուեց: Ես հրատարակուեցի մոլլա բաշու սպանողը, և այս հանգամանքը այնպէս ընդ-

հանուր ազմուկ բարձրացրեց ամբողջ կարաւանի մէջ, որ աւազակներէ վախը մոռացուեց, բոլոր ճանապարհորդները թափուեցին շուրջս և զարմանքով նայեցին ինձ:

Ինձ բռնեցին, թեկրս կապեցին, և պատրաստուած էին շան պէս քաշ տալ մոլլա բաշու խանուսի մօտ, բայց բարի աստղս օգնութեան հասաւ և ցոյց տուեց իր զօրութիւնը: Յանկարծ մի աղաղակ լսուեց քիչ հեռուից, և ես տեսայ մի խումբ ձիաւորներ՝ որոնք արագ-արագ իջնում էին մի բլրի վրայից: Քիւրդ աւազակներն էին նրանք: Ամբողջ կարաւանը շփոթութեան մէջ ընկաւ. դիմադրութիւնը օգուտ չունէր, որովհետեւ «ոչ սիրտ կար, ոչ ձեռք»:

Կարաւանը ցրուեց: Նրանք որ հեծած էին՝ փախան: Զորեպանները իրանց շորիներին փրկելու համար՝ իսկոյն կտրտեցին բեռների պարանները, բեռները վայր ձգեցին և թողնուեցին աւազակների ողորմութեանը: Ուղտապաններն էլ նոյն բանն արին. դիակներն էլ թափուեցին ճանապարհների վրայ: Ես նկատեցի որ նրանցից մէկը՝ որ մոլլա բաշուն էր՝ ընկել էր մի առուի մէջ. կարծես թէ ճակատագիրը դեռ չէր յղգնել նրան խեղդելուց:

Մասնաշփոթ փախուստը ընդհանուր և կատարեալ դարձաւ: Բոլորը փախան, ցրուեցին, և ես մնացի մենակ: Մի եղանակով թեկրս արձակեցի. ես տեսայ որ քիւրդերն իրանց աչքերը տնկել էին խանուսի պատգարակի և նրա հետեողների վրայ, որովհետեւ նրանք ընականաբար յոյս ունէին հարուստ գերիներ ունենալ: Ես ուրախացայ երբ տեսայ որ նրանք՝ որոց վրայ ես դեռ միջանի բոպէ առաջ նայել էի որպէս այնպիսիների՝ որ նշանակուել էին ինձ հողին հաւասարացնելու, գուցէ և շան պէս սատկացնելու, այժմ հէնց ինքները մի անել դրութեան մէջ էին, որ նոյնքան աղէտալի էր, ինչքան իմս, իմս, որից ես այժմ ազատուած էի:

Այրի խանուսի ծառները սպառնացին, երդուեցին, հայհոյեցին, խրոխտացին, բայց բոլորն էլ զմէր եղաւ. ոչ մի կերպով նրանք չկարողացան ողորել վայրենի թշմալիների սրտերը: Անիրաւացի վճարներ անելու պատրուակով՝ աւազակներն սկսեցին կանոնաւոր կերպով թալանել կարաւանի այն մասը որ չէր կարողացել փախչել:

Կրկին իմ բարի աստղը օգնութեան հասաւ և ցոյց տուեց իր զօրութիւնը, որովհետեւ այժմ աւազակների ուշադրութիւնը դարձաւ այնպիսիների վրայ, որոնք իրանց շորերով փոքրիշատէ պատուաւոր մարդիկ էին երևում, և ես ու ջորիս բախտ ունեցանք այնքան աննշան, ուշադրութեան այնքան

անարժան երևալ, որ *հնոք չմօտեցաւ մեզ, ու մենք շարունակեցինք մեր ճանապարհը:*

Ես որևէ ազգականի զիակ չէի տանում Քէրբէլա. ես օգի պէս ազատ էի, և հէնց որ տեսայ վտանգ չկար ինձ համար, և ինձ ազատուած գտայ այն հազարումէկ թշուառութիւններէց, որոնցով ես շրջապատուել էի, և որոնք կարծես թէ կախարդութեամբ հեռացրուել էին ինձանից՝ ես գոչեցի. «Բարիբալան, բարիբալան, *հմ իմ բախտ», և քըշեցի ջորիս:*

Գլ. ԼԴ.

Հաջի Բարան հասնում է Բաղդադ, հանդիպում է իր առաջին աղային և որոշում է վաճառականութիւն անել:

Թողնելով մոլլա բաշու այրի խանութին, նրա աղայիններին և ծառաներին քիւրդերի ձեռքում, ես շտապեցի դէպի Բաղդադ: Ես ամենևին ցանկութիւն չունէի ճանապարհին որևէ մէկի հանդիպել, որովհետեւ ես աշխատում էի այնպէս գնալ որ *հնոք չնկատէր ինձ:* Բայց ես հանդիպեցի շատերին՝ որոնք փախել էին աւազակներից, և որոնք հետաքրքիր լինելով կարաւանի դրութեան մասին՝ քաջ էին գալիս տեսարանի վայրի մօտերքում, յուսալով ետ ուղել կամ իրանց ընկերները կամ նրանց սեփականութիւնները:

Մենակ ես էի որ բոլորովին անկախ էի, և երկու կամ երեք ֆարսաղ հեռացած լինելով վտանգի տեղից, կրկին մնացի մենակ: Կրկին և կրկին անգամ մտածեցի ինձ պատահած արկածների վրայ ու եկայ այն վերջաւորութեանը, որ քանի որ ճակատագիրս ինձ զօրեղ կերպով պաշտպանում էր, կարելի էր կրկին քայլերս ուղղէի դէպի փառասիրութեան ճանապարհը, յուսալով որ շուտով մի լաւ հարստութիւն ձեռք կը բերէի, որ փոխարինէր ինձ այն կորուստը որ առաջադիմութեան հասնելու անյաշնող փորձերը պատճառել էին ինձ:

«Գօտուս մէջ 95 թուման փող ունիմ, մտածեցի ես, և ամբողջ աշխարհը առջևս է, ուստի լիայոյս եմ որ կը հասնեմ նպատակիս: Հոգս չէ թէ նազանին հրասանդով (mortar) կը սպանեն, կամ թէ քիւրդ աւազակները վերջին աստիճան կը թշուառացնեն մոլլա բաշու կնոջը: Ես չեմ հասկանում թէ ինչո՞ւ չպիտի գլխարկս թեք դնեմ ինչպէս անում է ամենալաւ մարդը Պարսկաստանում:

Վերջապէս Բաղդադի աշտարակներն ու պատերն երևա-

ցին, և քիչ յետոյ ես մտայ քաղաքը: Ես բոլորովին օտար էի
այնտեղ, ոչ մի տեղ չէի ճանաչում. բայց գիտէի, թէ որ կող-
մըն էլ գնայի՝ մի քարվանսարայի կը հասնէի. ուստի անտար-
բեր թէ որ կողմն եմ գնում, թոյլ տուի ջորուս գնալ, որ կող-
մը որ ինքն ուզէր:

Բոլոր փողոցներին լաւ ծանօթ լինելով, ջորին ինձ տա-
րաւ մի մեծ քարվանսարա, ուր, անկասկած նա երկար ժամա-
նակից ի վեր եկել, գնացել էր: Քարվանսարայի կամարակապ
դաւանը մտնելով, ջորին սկսեց երկար խանչել. կենդանին
կարծում էր որ այնտեղ պիտի հանդիպէր իր ընկերներին: Ես
բախտաւոր էի (եթէ ինձ կարող էի բախտաւոր համարել)
տեսնելու քարվանսարայի բակում միքանի հայրենակիցներ, և
ես շուտով իմացայ որ այդտեղ նրանց յաճախատելին էր:

Ես կարծում էի թէ իմ անձնաւորութիւնը, որտեղ էլ որ
գնայի՝ չէր գրաւելու մէկի ուշադրութիւնը. սակայն այդպէս
չեղաւ, որովհետեւ քարվանսարան մտնելուս պէս մարդիկ իսկոյն
հաւաքուեցին շուրջս ու հազարումէկ բաներ հարցրին ինձա-
նից: Նրանք ամեն ժամ սպասում էին կարաւանի հասնելուն.
վաճառականները անհամբեր էին ստանալու իրանց ապրանք-
ները և ինձնից լուրեր էին հարցնում կարաւանի մասին: Ես
նրանց հետաքրքրութեանը բաւականութիւն տուի այնպիսի
պատասխաններով՝ որ ես յարմար և հարկաւոր համարեցի.
սակայն վճռեցի իսկոյն հետանալ այդ հետաքրքրի մարդկանցից
և գնալ, առանձնանալ: Հետեւաբար ջորուս իր բախտին յանձ-
նելով—մտածելով որ նրա տէրը շուտով կը հասնէր և կը խնա-
մէր նրան—ես դուրս ելայ քարվանսարայից ու քայլերս ուղղե-
ցի դէպի մի այլ կողմ:

Ինձ անյայտ պահելու համար ես ամենից առաջ փոխեցի
իմ փոշաթաթախ և արեից գոյնը թռած ոչխարի մորթէ գըլ-
խարկը տեղական գլխարկի հետ: Դա մի երկար քսականման
կարմիր կտաւ է՝ որ մետաքս կտորով կապւում է գլխին և եր-
կար ծայրը կախւում է ետեի կողմից: Ես գնեցի նաև մի զոյգ
բաց-կարմիր մաշիկներ, և մի գործածուած տաճկական ընկիշ
(վերնագգեստ), որ հագնելով իմ պարսկական շորերի վրայ,
օսմանցու ընդհանուր տեսք ստացայ:

Այս անելուց յետոյ խելքիս եկաւ որ շատ լաւ կը լինէր
ծանօթանալ Օսման աղայի ընտանիքի հետ, որոնց միջոցով,
հեշտութեամբ կը ծանօթանայի ամբողջ քաղաքի հետ, և նպա-
տակիս շուտով կը հասնէի: Ուստի ես անցայ գլխաւոր բազար-
ները և բեզեստանները միջով, որպէսզի տեղեկութիւններ ըս-
տանայի, և դիտմամբ կանգնեցի բազարի այն տեղում, ուր

գառան մորթու առնտուր էր լինում, որովհետեւ ես լաւ յիշում էի որ Օսման աղան մորթու վաճառականութեամբ էր պարապում: Ես նաեւ յիշեցի շատ մանրամասնութիւններ, որ նա հաճոյքով ինձ պատմել էր մեր ճանապարհորդութեան ժամանակ, և ինձ թուաց որ ես կարող էի նրա տուած նշանաբաններով ուղղակի զնալ նրա տունը, առանց մէկից հարցնելու:

Ինչեւէ, նեղութիւնս շուտով վերջացաւ. որովհետեւ կանգ առնելով բոխարացի գլխաւոր վաճառականների մէկի խանութի առաջ և հետաքրքրուելով Օսմանի մասին՝ մէկն ինձ շատ ծանօթ ձայնով ասաց. «Ո՞վ է կամենում տեսնել ինձ. յանուն մարգարէի, ես Օսման աղան եմ»:

Երևակայեցէք զարմանքս և ուրախութիւնս: Նա հէնց ինքըն էր— Օսման աղան էր: Ես գրեթէ այնքան զարմացայ որ նրան Բաղդադում գտայ, որքան զարմացել էի նրան Թէհրանում հանդիպելիս: Ես պատմեցի նրան իմ պատմութիւնից այնքանը միայն՝ որ հարկաւոր համարեցի նրա համար, և նա էլ պատմեց իրանը:

Նա հեռացել էր Թէհրանից Ստամբուլ զնալու և այնտեղ վաճառելու իր ապրանքը. բայց երբ լսել էր, որ ճանապարհին Երևանի և Էրզրումի միջոցում զոդերից թալանուելու վտանգ կ'սր, խոհեմութիւն էր համարել Բաղդադ զնալ, ուր նա այժմ ապրում էր շատ տարիներ բացակայելուց յետոյ:

Նրա որդին օրինական տարիքին հասնելով և իր հօր կուրուստը պատշաճ արարողութիւններով ողբալուց յետոյ՝ ծառանկել էր նրա ստացուածքը, որից, ըստ օրինաց, նա բաժին էր հանել իր մօրն ու քրոջը, բայց երբ որ հայրը կենդանի վերադարձել էր հայրենիք, նա առանց իր դէմքը թթուացնելու, բարի մուսուլմանի պէս գործադրել էր զործադրել էր զործադրել թէ՛ մարդ պիտի յարգի ու գթայ իր ծնողներին, և ոչ թէ նրանց արհամարհի: Երբ վերջապէս Օսմանը վերադարձել էր, նրա կինը կենդանի էր եղել ու աղջիկն էլ ամուսնանալու տարիքին հասած:

Իր արկածները համառօտ կերպով պատմելուց յետոյ նա դարձաւ ինձ և սովորականից աւելի սուր կերպով ասաց.

— Բայց, հնչի, բարեկամս, ասա ինձ յանուն մարգարէի, ի՞նչը քեզ ստիպեց ինձ ամուսնացնել Թէհրանում ապրող այդ սատանայի հետ: Երդուում եմ այն աղով որ միասին կերել ենք, երդուում եմ, որ Թէհրանում ես աւելի թշուառ կ'եմք ունեցայ քան ունեցել էի Թիւրքմէնների մէջ: Ասա, հնչի, ինձպէս մի մի վաղեմի բարեկամի հետ այդպէս վարուելը, այդպէս խաղա-նելը իրաւացի էր:

Ես նրան հաւատացրի որ իմ միակ նպատակն էր եղել երջանկացնել իրան, համոզուած լինելով, որ քանի որ այդ կինը մի ժամանակ Պարսկաստանի վեհապետի սիրելին էր եղել, կարող էր իր վերջին օրերումն էլ դեռ աւելի հրապոյրներ ունենալ քան բաւական էր մի մարդու համար, որ իր կեանքի ամենալաւ տարիներն մի քանիսը անց էր կացրել ուղտերի մէջ:

— Ուղտերի մէջ, գոչեց Օսմանը. ես քեզ հաւատացնում եմ, ուղտերն այդ կատաղի քածի հետ համեմատած՝ հրեշտակներ են: Հազար անգամ երանի կը լինէր, եթէ դու ինձ ամուսնացրած լինէիր մի ուղտի հետ, որովհետեւ այդ խեղճ կենդանին գոնէ հանգարտ ու ծանր կը նստէր իր տեղում և ինձ հանգիստ կը թողնէր, այն ինչ՝ այդ վիշապը, այդ իժը ամբողջ ժամանակը հոգիս հանում էր ինձ ասելով թէ՛ ես ինչպիսի բախտաւոր պիտի համարեի ինձ, ինչպիսի փառք ու պարծանք պիտի ունենայի՝ որ արժանացել էի ամուսնանալու իրան հետ, որ մի ժամանակ Շահին կատարել էր տալիս իր բոլոր քահանայքները: Այդ օձը, այդ կատաղած քածը ամեն մի բառ խօսելիս՝ կամ մի ապտակ էր զարնում երեսիս, կամ սաստիկ ճանկրտում էր: Ա՛խ, աման, աման, դա ի՛նչ դե էր, հաւաչեց Օսմանը իր ձեռքի թաթը քսելով իր թշին, աման, կարծես թէ մինչև հիմա էլ նրա ճանկոտածների տեղը ցաւում է:

Ծերունի Օսմանը վերջը հաւատաց, որ իմ նպատակն էր եղել իրան երջանկացնել, և շատ բարեսրտութեամբ ինձ հրաւիրեց իր տան մէջ բնակուել որքան ժամանակ որ Բաղդադում մնալու լինէի: Ես իհարկէ, մեծ հաճոյքով ընդունեցի նրա հրաւերը:

Մեր խօսակցութիւնը տեղի ունեցաւ Օսմանի խանութի ներքնասենեակում, ուր նա ինձ համար հինգ փարայի սուրճ բերել տուեց հարկան սրճարանից: Երբ սուրճը խմեցի և մեր խօսակցութիւնը վերջացաւ, նա ինձ հրաւիրեց գնալ իր որդու խանութը, որ գտնւում էր նոյն բազարումը, ոչ շատ հեռու: Նրա որդու անունը Սուլէյման էր. իր հօր բացակայութեան միջոցին նա սկսել էր բազազութիւն (կտաւալածառութիւն) անել. բաւական լաւ ապրուստ էր հայթհայթել և օրուայ մեծագոյն մասը (բացի այն ժամանակից երբ հարկաւոր էր աղօթքի գնալ) անց էր կացրել նստած իր խանութի առջև դրուած փոքրիկ փայտէ տախտի վրայ, շրջապատուած իր ապրանքներով, որ մաքուր կերպով դարսուած էին դռնակների վրայ: Նա մի պարարտ, գունդ-կլոր մարդ էր իր հօր պէս. երբ նա լսեց, որ ես Հաջի Բարան եմ, ուրախացաւ, շնորհա-

ւորեց գալուստս և հրաւիրեց ինձ իր չիբուխը, որ ինքը ծը-
խում էր:

Օսման աղայի ընտանիքի հետ բարեկամանալով, ես բա-
ւական հանգիստ ու երջանիկ կեանք ունեցայ Բաղդադում:
Նրանց ընկերակցութեան շնորհիւ, պանդխտութիւնս ամենեւին
դառն չէր անցնում. բայց որպէսզի ցոյց տայի որ ես երբեք
դիտաւորութիւն չունէի կախուած լինել նրանցից, ես նրանց
յայտնեցի իմ 95 թումանի մասին և խորհուրդ հարցրի թէ
ինչ կերպով ծառայեցնէի այդ փողը կամ ինչ ապրանքի առե-
տուր անէի որ ամենից շատ շահաւէտ լինէր:

Նս նրանց հասկացրի, որ ձանձրացած լինելով արկածա-
լից կեանքից, ցանկանում էի ապագայում ժրջանութեամբ
աշխատել, փող վաստակել անկախ կեանք վարելու համար:
«Շատերն ինձանից աւելի քիչ դրամագլխով հարստացել են»,
ասացի ես նրանց: Նրանք ընդունեցին այդ, և քանի որ ես
նախահաշիւներով էի ուզում հարստանալ՝ Օսման աղան լուրջ
կերպով կրկնեց ինձ համար պարսկական բանաստեղծութեան
այն միակ խօսքը որ իր ճանապարհորդութեան ժամանակ լը-
սելով սովորել էր—«Չուրը ժայռից կաթիլ-կաթիլ թափուելով,
ծով է կազմում»:

Այս վերջաւորութեանը գալով, մենք՝ այսինքն Օսմանն
ու ես, դնացինք Նրա (Օսմանի) տունը, որ գտնւում էր բա-
զարներից ոչ շատ հեռու:

Գլ. կե.

Հաջի Բարան ծխամորճների վաճառականութիւն է սկսում:—Նա լսնոյս
սէր է ներշնչում Օսման աղայի աղջկայ սրտի մէջ:

Օսման աղայի տունը գտնւում էր մի նրբափողոցում, որ
ընկած էր դէպի բազարները տանող պողոտայի վրայ: Նրա
տան առջև աւելուկի մի կոյտի վրայ կային կատուի միջանի
նոր ծնուած ձագեր, որոնք նվւղում էին երբ մենք անցնում էինք,
և նրանցից քիչ հեռու, նոյն տեսակ կոյտի վրայ կային շատ ձա-
գեր, որոնց վրայ հսկում էր նրանց քոսոտ մայրը, և որոնք ի-
րանց միացեալ վնդվնդոցով յագուրդ տուին մեր՝ աններդաշնակ
խմբերդ լսելու ցանկութեանը:

Այս երկուսի, այսինքն շան ու կատուի ձագերի բնակա-
բանների մէջ տեղ բացւում էր Օսմանի տան դուռը: Մենք
ներս մտանք: Դա մի փոքրիկ տուն էր, միջանի անմաքուր,

խղճուկ սենեակներով։ Ոչ մի բեռ չունենալով, բացի մի փոքրիկ կարպետից՝ ես հեշտութեամբ տեղափոխուեցի, և ինձ համար բնակարան ընտրեցի հիւրընկալիս հիւրասենեակի մէկ անկիւնը, ուր նա պահոււմ էր իր անկողինը։

Գալուստս շնորհաւորելու կամ տօնելու համար, Օսմանն ինձ հիւրասիրեց տապակած զառով և առատ փրաւով, որի վերայ աւելացրուած էր արմաւ, պանիր և սոխ։ Կերակուրները եփուել էին հարեմում իր կնոջ և աղջկայ ձեռքով իրանց միակ աղախնի օգնութեամբ։ Ես նրանց ոչ մէկին զեռ չէի տեսել, որովհետեւ արդէն մութը կոխել էր երբ մենք տուն հասանք, և իհարկէ, քաղաքավարի լինելու համար, ես չհետաքրքրուեցի իմանալու նրանց մասին աւելի քան այն՝ ինչ որ Օսմանը տըրամադիր էր պատմելու ինձ։

Բացի ինձանից և իր որդուց, Օսմանը հրաւիրել էր իր մորթավաճառ բարեկամին, որի հետ նա մտերմացել էր Բոխարայում։ Նրանց խօսակցութեան միակ նիւթն էր վաճառականութիւնը, որի մասին ես այնքան տոգէտ էի որ շատ քիչ մասնակցեցի նրանց, թէպէտ քանի որ ես էլ դիտաւորութիւն ունէի վաճառականութիւն անելու, ստիպուեցի ուշադրութեամբ ականջ դնել նրանց։

Նրանք շատ խորը մտան այդ նիւթի մէջ և տաք-տաք քննադատեցին ամենմի տեսակ վաճառքի արժանաւորութիւնը։ Նրանք այնպէս էին խօսում որ նրանց լսողը պիտի կարծէր թէ աշխարհիս վերջը մօտենում էր, և նրանց այդպէս խօսելու պատճառն այն էր որ քաղաքում լուր էր տարածուել թէ գառան մորթու գինն իջել էր Ստամբուլում։

Նրանք համոզեցին ինձ որ ամենեւին գառան մորթու առևտուր չանէի. այլ խորհրդատրեցին որ ինձ հաճար շատ օգտաւէտ կը լինէր ծխամորճներ գնել, որոնք երբէք չէին փչանայ և որոնց համար միշտ մեծ պահանջ կար Ստամբուլի բազարներում։

Երբ հիւրասիրութիւնը վերջացաւ և հիւրերը գնացին, ես սկսեցի խոր կերպով մտածել իմ լաւձների վրայ և շուտով վերջաւորեցի ծխամորճների վաճառականութիւն սկսել։ Սենեակի անկիւնում ամբողջ օրը նստեցի ու հաշիւներ արի թէ իմ 95 թումանովը քանի ծխամորճներ էի կարող գնել, և ինչքան կը շահուէի Ստամբուլում։ Երբ երեւակայութիւնս լաւ տաքացաւ, ես սկսեցի օդում պալատներ կառուցել։ Այն մարդու ծրագիրը, որին Սաադին հանդիպել էր Քուշում, ոչինչ էր համեմատած իմիս հետ։

«Ծխամորճներէս տուած հասոյթով, մտածեցի ես, Իզմի-

ըում թուղ կը գնեմ և կը տանեմ Եւրոպա, ուր մեծ շահով ծախելուց յետոյ, արողջին կը գնեմ ու կը տանեմ Մեծ Գահիրէ (Grand Cairo): Դրանց էլ ծախելով, փողերս պարկերի մէջ կը լեցնեմ ու կը գնամ Հաբեշտան ուր գերիներ կը գնեմ, կտանեմ Մոքքա, մեծ շահով կը ծախեմ, և այնտեղից կը գնամ այցելելու Մարգարէի գերեզմանը: Մոքքայից սուրճ կը տանեմ Պարսկաստան, ուր շատ թանգ գնով կը ծախեմ, և ապա կը գնամ հանգստանալու իմ հայրենի քաղաքում, մինչև որ կարողանամ արքունիքում մի պաշտօն գտնել որը ժամանակով ինձ արքայից-արքայի մեծ վէզիր կը դարձնի»:

Ապագայիս մասին այսպէս վերջաւորելուց յետոյ, ես սկսեցի աշխոյժ կերպով դործել: Եւ պայմանաւորուեցի մի փայտահատի հետ որ գնար Լոր ու Բախտիարի սարերը, որտեղ գտնուում են վայրի կեռասներու անտառներ, այստեղից կտրելու իմ տուած չափերով ծխածորճների փայտեր, ապա վերադառնար Բաղդադ փայտերը ծակել տալու և յարմար խուրճիք կապելու Տաճկաստանի բաղաճների համար:

Այս բոլորը ժամանակին կատարուեց, բայց մինչդեռ ես սպասում էի փայտահատի վերադարձին, ես կրեցի մի հիւանդութիւն որից զերծ չեմ մնում թէ տեղացիներն և թէ օտարականները: Դա մի մեծ խոց (չիրան) է, որ ինքն իրան բացուում է մարդու մարմնի վրայ, և երբ չորանում է՝ տեղը մնում է: Շատ դժբախտաբար այդպիսի մի խոց ունեցայ թշիւս մէջ տեղում՝ մօրուքիս կողին, ուր դա թողնելով իր զգուշի տեղը՝ փչացրեց մազերիս ամենասիրելի մասը:

Լուռ ու մունջ ես կրեցի այս ցաւը, թէև շատշատ անգամ էլ նեղացած՝ կուտում էի ճակատագրիս հետ թէ ինչո՞ւ այդ խոցը երեսիս վրայ պիտի դուրս գար և ոչ մարմնիս մի այլ տեղում:

«Թող այդպէս լինի, ասացի ես հոգոց հանելով. ճշմարիտ է ասել այն մարդը թէ, «եթէ քարին թոյլ տրուի լինել այն» ինչ որ ինքն ուզի, դա շատ հաւանականաբար աղամանդ կը դառնայ, և եթէ մարդ ինքը նշանակելու լինի թէ իր մարմնի ինչ տեղում խոց պիտի բացուի, այն ժամանակ Բաղդադում էլ տգեղ դէմք չէ տեսնուելու»:

Ինչևէ, ինձ մխիթարելու համար յիշեցի Օսման աղայի երեսը որ այլանդակութեան հայելին էր, թէպէտ նա իր մարմնի մի այլ տեղումն էր խոց ունեցել: Փոխարէն ցաւակցելու ինձ, նա կարծես թէ աւելի ուրախանում էր դժբախտութեանս վրայ:

—Հնչի, ասաց նա, եթէ դու կեանքումդ դրանից աւելի մեծ ցաւ կամ դժբախտութիւն չես ունեցել, ուրեմն այդ խոցը բարեւք պիտի համարես. երեսիդ միայն մէկ կողմն է այլանդակուել, միւս կողմը հօ ոչինչ չէ եղել: Փիրուզայի մէկ կողմը գոյնի կատարելութիւն է ցոյց տալիս, իսկ միւս կողմը սև ու կեղտոտ է. այնուամենայնիւ դա փիրուզա է, թանգագին քար է:

—Ա՛խ, հառաչեցի ես, ինչպէս որ փողոցային շան լակոտները մի որական շուն տեսնելիս հաջում են նրա վրայ, բայց չեն համարձակում մօտենալ նրան, այնպէս էլ ոչ տգեղադէմ մարդն է կարող դեղեցկադէմ մարդու երեսին նայել, ոչ էլ մօլի մարդը՝ առաքինի մարդու:

Չնայած թշիւ ալլանդակութեանը, բանից դուրս եկաւ որ ես բաւական գրաւել էի Օսմանի աղջկան՝ Դէլարամին, որը հազարումէկ փոքրիկ հնարքներով կարողացաւ ինձ հասկացնել որ ինքն ինձ սիրում էր: Նրա մայրն ու ինքը Բադդադի խոցը բժշկելու փորձառութիւնն ունենալով՝ յանձն առին բժշկելու և իմս: Իմ խոցն ու Դէլարամի սէրը կարծես միասին, միաժամանակ էին ծնունդ առել, և մինչև այն ժամանակ որ առաջինն իր ամենարարձր աստիճանին հասաւ, վերջինս այլևս ինձ համար նեղիչ, վնասակար դարձաւ:

Ես չէի սիրահարուել նրա վրայ, որովհետև նա ճիշտ իր հօր պատկերն էր, որի երեսն այնքան նմանութիւն ունէր ուղտի գէմքին, որ նրա աղջկայ երեսին նայելիս՝ իսկոյն ուղտինը պատկերանում էր ինձ: Ուստի ես շատ հանգստացայ մտատանջութիւնից երբ ճանապարհորդութեան եղանակը մօտեցաւ և երբ Ստամբուլ վնացող կարաւանն սկսեց հաւաքուել: Ես հաւաքեցի բոլոր ծխամորճներս, յարմար խուրձերի բաժանեցի, հաշիւներս վերջ տուի, ինձ հարկաւոր եղած շորերս պատրաստեցի և անչափ հրճուեցի, երբ յայտարարուեց որ մուրակները միւս յաջողակ հանդիպաւորութեան (conjunction) հետ՝ կարաւանը պիտի ճանապարհուէր:

Խեղճ Դէլարամ, նա յուսահատ գէմքով պտոյտ էր գալիս շուրջ և դարձան անում խոցիս. բայց կարծես թէ խոցիս ուռուցքի իջնելու հետ՝ արագ-արագ թուլացաւ և՛ այն կապը, որով նա միառժամանակ կապուել էր աշխարհիս և նրա ունայնութիւնների հետ:

ԳԼ. ԿԳ.

Հաջի Բարան վաճառական է՝ դառնում, թողնում է Բաղդադը և կարաւանի հետ գնում է Ստամբուլ:

Գարնան մի պայծառ առաւօտ էր, երբ կարաւանը «Ստամբուլի դարվազա» կոչուած մեծ դռնով դուրս գնաց քաղաքից: Նստած իմ ապրանքով բեռնաւորուած ջորու վրայ, անկողինս տակս գցած, քսակներովս շրջապատուած՝ ես գնում էի նայելով գեղեցիկ տեսարանին և ականջ դնելով ջորիների զանգակների ձայներին որպէս երաժշտութեան՝ ինձ վրայ նայելով որպէս բաւական կարեւորութիւն ունեցող վաճառականի: Իմ բարեկամ ուղեկիցներս էին Օսման աղան, նրա մորթավաճառ ընկերը (որին նա հրաւիրել էր ճաշի), և մի-երկու ուրիշ բաղդադցի վաճառականներ: Բացի նրանցից կային և՛ շատ ուրիշ ուղևորներ Պարսկաստանի զանազան կողմերից եկած, որոնք գնում էին առևտուր անելու Ստամբուլում, և որոնց հետ ես փոքրիշատէ ծանօթ էի:

Թէհրանի մոլլա բաշու մահուան խնդիրն արդէն բաւական հնացել, մոռացուել էր, և յիշաւի ես եմ շորերով ու երեսիս խոցի նշանով այնպէս փոխուած էի՝ որ ճիշտ բաղդադցու էի նմանում, և կերպարանքիս մէջ ոչ մի բան չէր երևում որ յիշեցնէր աշխարհին որ ես իսկապէս պարսիկ էի:

Ես չեմ ցանկանում ձանձրացնել ընթերցողին նրան պատմելով թէ մենք ինչ արկածների հանդիպեցինք Տաճկաստանից անցնելիս. բաւական է միայն այսքանն ասել որ, աւագակներից վախենալուց, ջորեպանների հետ շատ կռիւներ տալուց և քարվանսբաններում շատ վէճեր ունենալուց յետոյ, մենք անվտանգ հասանք Ստամբուլ:

Ես, Հաջի Բարաս, սպահանցի մի պարսիկ, միշտ կարծել էի թէ իմ հայրենի քաղաքն ամենաառաջինն էր ամբողջ աշխարհում. չէի կարծել որ աշխարհում կարող էր լինել մի քաղաք՝ որ կարողաճար մրցել Սպահանի հետ, և մինչև անգամ երբ մէկն ինձ համար նկարագրել էր Ստամբուլը որպէս Սպահանից աւելի սիրուն քաղաք՝ ես ծաղրել, նոյնիսկ յանդիմանել էի նրան. բայց երբ առաջին անգամ տեսայ Ստամբուլը, չեմ կարող բացատրել թէ որքան զարմացայ, որքան սքանչացայ:

Ես միշտ կարծել էի որ Սպահանի արքունական մէսչիդը աշխարհիս ամենահոյակապ, ամենափառաւոր շինութիւնն էր,

բայց այստեղ հարիւրաւոր նրանցից շատ աւելի մեծ և գեղեցիկները կային—մէկը միւսից աւելի շքեղ, աւելի փառաւոր:

Ես միշտ կարծել էի որ ոչ մի տեղ չէր կարող Սպահանի չափ մեծ լինել. բայց այստեղ աչքերս յողմեցին նայելով այն բազմաթիւ բլուրներին, խորշիկներին որոնք ծածկուած էին անհամար շէնքերով: Եթէ Սպահանը նէսֆէ ջէնան (աշխարհիս կէսն) է, ուրեմն Ստամբուլն ամբողջ աշխարհն էր:

Քաղաքների այս գոհարը Սպահանի վրայ այն մեծ առաւելութիւնն ունի որ ընկած է ջրերի գեղեցիկ ափերի վրայ, և ոչ թէ Սպահանի պէս շրջապատուած է չոր, ապառաժ լեռներով: Բացի դրանից, Ստամբուլը իր բոլոր գեղեցկութեամբ աւելի ևս գեղեցկանում է երբ նա անդրադառնում է ջրերի մէջ, որպէս հայկիկներին:

Բայց ես երբեք չեմ կարող վերջացնել եթէ ուզեմ փորձ անել նկարագրելու այն բազմաթիւ շարժումն բաները որ գրաւեցին ուշադրութիւնս: Հազարաւոր նաւակներ, զանազան ձկնորով ու մեծութեամբ՝ սահում գնում էին ամեն ուղղութեամբ, մինչդեռ մեծ նաւերը, որոնց կայմերն աւելի շատ անտառներ էին ներկայացնում քան Մադանդրանը, շարան-շարան կանգնած էին նաւահանգիստներում:

«Օ՛, սա դրամխտ է, ասացի ես ինձ շրջապատողներին, սա դրամխտ է, և երանի թէ ես երբեք դուրս չգնամ այս տեղից»։ Բայց երբ յիշեցի որ այդ եղեմը գտնուում էր մի անխժեալ հերետիկոս ցեղի ձեռքում, որոնց մօրուքները անարժան են աւելներ դառնալու մեր փողիները մաքրելու համար՝ վրդովուեցի և մտածեցի որ մեծ շնորհ էի արել որ զիջել էի մտնել նրանց մէջ:

Ինչևէ, ես մխիթարուեցի այն մտածմունքով որ, եթէ տաճիկներին թոյլ է տրուել այս աշխարհում ընտրել իրանց համար Ստամբուլի պէս մի դրախտանման բնակավայր՝ հանդերձ—եալ աշխարհում՝ անտարակոյս զժոխքը կը լինի նրանց տեղը:

Մաքսատան կարգուկանոններին ենթարկուելուց յետոյ, ես ու ընկերս Սկուտարիայում նաւակ նստելով՝ գնացինք Ստամբուլ, և մեր բեռներով իջանք մի մեծ քարվանսայում, որ պարսիկ վաճառականների յաճախատեղին է և որը կառուցուած է քաղաքի կենտրոնում՝ բազարների մէջ:

Հասարակաց փողոցներում անցուդարձ անող բազմութեանը նայելով՝ ես քաշեցի, և ինձ շատ խեղճ մարդ զգացի: Տեսնելով խանութներում ի ցոյց դրուած թանգազին իրերը, բնակիչների (գրեթէ բոլորի) պատուական զգեստները և մեծ

խշխանների ու աղաների գեղազարդ ձիերի վրայ նստած անցողւորձ անելը՝ ես հիացմամբ ասացի. «Փահ, փահ, ճրտեղ է Ստամբուլը իր շքեղութեամբ, և ճրտեղ է Պարսկաստանը իր աղքատութեամբ»:

Օսման ազան ու ես միասին վարձեցինք բարվանսրայի սենեակներից մէկը, որի մէջ տեղաւորեցինք մեր ապրանքները: Օրուայ ընթացքում ես ի ցոյց դրի ծխամորճներս, շարելով նըրանց մի տախտի վրայ, և որովհետեւ նրանք հատընտիր արածներն էին՝ մարդիկ մինչև երեկոյ բաւականաչափ դնեցին, ու ես մեծ շահ ունեցայ: Ինչքան ապրանք էի ծախում, և ինչքան իմ փողերը վերադառնում էին քսակներիս մէջ՝ նրանց համեմատ էլ ես ինձ ղեղկութեան էի տալիս—մի բան՝ որ առաջներն երբէք չէի արել:

Յարմարագոյն և դեղեցկագոյն շորեր պատրաստել տուի ինձ համար. գնեցի մի սաթագլուխ չիբուխ, մի փրուռ գոյնով շալ մէջքիս համար, փուլաքներով (վահանակներով) զարդարուած մի մետաքսէ ծխախոտի քսակ, բաց-դեղին մաշիկներ և մի փայլուն դաշոյն:

Ես շրջապատուած էի փող շռայլելու փորձութիւններով և սկսեցի շռայլել: Այս աշխարհում, մտածեցի ես, փող եղած ժամանակ՝ արժէ ապրել: Բազմաթիւ էին այն հասարակաց տները, ուր մարդ կարող էր ցոյց տալ իր անձնաւորութիւնը: Ես միշտ փորձում էի գնալ ամենաշատ յաճախորդներ ունեցող սրճարանները, ուր մի բարձրաստիճան անձնաւորութեան դիրքով նստելով մի բարձր նստարանի վրայ, մէջքս դէմ տալով փափուկ բարձերին՝ ծխում էի չիբուխս և սուրճ էի խմում:

Պարսկաստանում ես ճյնքան անհաճոյ արկածներ էի ունեցել, որ այժմ ես ոչ միայն հաւատ չէի ընծայում հայրենակիցներին, այլ մինչև անգամ խորշում էին նրանցից ու տաճիկների հետ էի բարեկամութիւն պահում: Բայց նրանք՝ հայրենակիցներս, որոնք հետաքրքիր մարդիկ են, և որոնք վերաւորում են եթէ մէկը նրանց արհամարհում է, կամ ուշադրութիւն չէ դարձնում նրանց վրայ, իմացան թէ ես ով եմ և ինչ գործի տէր մարդ էի, և հետեաբար սկսեցին խեթ-խեթ նայել ինձ: Ինչպէս, ես աշխատեցի կարելոյն չափ լաւ վարուել նրանց հետ, և քանի որ իմ և նրանց մէջ դեռ վաճառականական մրցումն չկար՝ նրանք ինձ չէին նեղացնում:

Հասարակաց ժողովատեղիներում ես ինձ բաղդադցի վաճառական էի հրատարակում, և երեսիս խոցի տեղը որ ցարդ մեծ դժբախտութիւն էի համարում, այժմ հաստատում էր իմ բաղդադցի լինելը: Փորձը ցոյց տուեց որ, ոչ մի բանով մարդ

այնքան հեշտութեամբ չէ կարող խարել տաճիղներն, ինչքան կարող է՝ արտաքին կերպարանքով։ Նրանց լուսկեացութիւնը, նրանց ծանր վարքը, դանդաղ շարժումները, խնամով պատրաստուած ոճերը—բոլորն այնքան հեշտ էր սովորել, որ շատ կարճ ժամանակում ինձ յաջողուեց այնպէս լաւ նշմարել նրանց, որ ցանկացածս ժամանակ եւ կարող էի ինձ ամենածանր և ամենալուջ տաճիկը ձևացնել։

Եւ կատարեալ կերպով ուսումնասիրեցի տաճիկներին։ Ուրիշի խօսքերին ականջ դնելիս, նրանց պէս, հրեանման «Ալլա»-ներով հոգոցներ էի հանում, և այնքան կանոնաւոր ու հաստատուն կերպով «համբում» էի թէսքիս, որ սրճարաններում ինձ շատ յարգանքով էին ընդունում և առանձին ուշադրութիւն դարձնում վրաս։ Սրճարանապետը իր ձեռքով էր սուրճ պատրաստում ինձ համար. իր թեւ վարպետօրէն պտոյտ տալով՝ սուրճը լցնում էր բաժակը և ինձ հրաւիրում «աղաս, սուլթանս» մակդիրներով։

Կերպարանքիս պատուաւորութիւնը այնքան ազդեցիկ դարձրեց ինձ մարդկանց աչքում, որ հրե սրճարանում մի թիթեւ վէճ էր բացւում ձիու, շան, դէնքի կամ ծխախոտի մասին (որոնք զրոյցատուութեան գլխաւոր նիւթերն են), իսկոյն ինձ էին դիմում. եւ էլ մէկ քալի կամ եօխ մըթմըթալով՝ վերջ էի տալիս վէճին։

Գլ. Կէ.

Մի էմիրի այրի կին սիրտհարում է Հաջի Բաքայի վրայ։—Հաջին սկըզբում վախճնում է, բայց վերջը հպարտանում է նրա սիրով։

Մի առժամանակ այսպէս ապրեցի, մինչև մի երեկոյ երբ արեւմտին վերադառնում էի սրճարանից, եւ նկատեցի մի պառաւ կին որը կանգնած էր սրճարանի դիմացի նրբափողոցի անկիւնում։ Երեք երեկոյ յաջորդաբար եւ նոյն պառաւին նոյն տեղում կանգնած տեսայի։ Նա միշտ հիացմամբ էր նայում ինձ, և կարծես թէ ցանկանում էր հետս խօսել, որովհետեւ հրե անցնում էի՝ նա մերթ ինձ էր նայում, մերթ այն տան լուսամուտին որի տակ նա կանգնած էր, և այդպէս շարունակում էր՝ մինչև եւ անցնում, հեռանում էին։

Առաջին երեկոն եւ զրեթէ հրեք ուշադրութիւն չդարձրի նրա վրայ, որովհետեւ մի պառաւի՝ փողոցի անկիւնում կանգնելը դարմանալի կամ ուշադրութեան արժանի բան չէր։

երկրորդ անգամը ես զարմացայ և զգուշացայ. երրորդ անգամը հետաքրքրութիւնս սաստիկ շարժուեց, և վճռեցի չորրորդ երեկոն նրանից հարցնել (եթէ նա այնտեղ լինէր) թէ ինչ նպատակով էր նա միշտ այդ ժամին այնտեղ կանգնելով:

Չորրորդ օրը ես սովորականից աւելի լաւ հագնուեցի, ենթադրելով որ իմ դեղեցիկ տեսքը և պահապան աստղս միացած գործում էին ինձ համար: Սրճարանից դուրս գալով՝ պարապ մարդու դանդաղ քայլերով գնացի դէպի խորհրդաւոր կիւնը, հասայ փողոցի անկիւնը որտեղից ես չէի նկատուիլ սրճարանի լուսամուտից, և հէնց ուզում էի նրան ողջունել, երբ յանկարծ վերոյիշեալ տան լուսամուտներից մէկը բացուեց և այնտեղ երևաց մի անքօղ կին որի դէմքն ու կազմը հրաշալի էին: Նա իր ձեռքում մի ծաղիկ ունէր, որը նա նախ բարձր պահեց ինձ ցոյց տալու համար, ապա դրեց իր կրծքին և գցեց ինձ մօտ, և այնպէս շտապմամբ պատուհանը փակեց ու անհետացաւ, որ ինձ թուաց թէ մի ոգի երևաց աչքումս ու անբերայ թացաւ: Ես կանգնած մնացի, բերանս լայն բաց և աչքերս լուսամուտին յառած, մինչև որ պառաւը կամացուկ քաշեց թևս, ու երբ ես նայեցի, նա ինձ մատուցեց ծաղիկը, որ վերցրել էր:

— Ի՞նչ է սա, հարցրի ես. յանուն Մարգարէի, ասա, ի՞նչ է սա: Արդեօք այս երկրում ջիններ ու փէրինկո կան:

— Միթէ դու դեռ այնքան անփորձ ես որ չգիտես թէ ինչ է նշանակում այս ծաղիկը, պատասխանեց պառաւը: Արդէն բաւական երկար մօրուք ունիս, երեխայ չես, և շորերիցդ էլ երևում է որ ճանապարհորդութիւններ ես արել. բայց եթէ դեռ չես հասկացել թէ մի կին ի՞նչ է նշանակում երբ քեզ մի նշենու ծաղիկ է տալիս, ուրեմն ամենևին չես օգտուել ճանապարհորդութիւնիցդ:

— Ես գիտեմ, ասացի ես, որ ֆիստըղ ու եաստըղ բառերը նոյն յանգն ունին. գիտեմ նաև որ մէկ բարձի վրայ երկու գլուխ դնելը յաճախ համեմատել է մի նշի որ երկու միջուկ ունի, սակայն մօրուքս բաւական երկար է ինձ յիշեցնելու որ այդպիսի բաներն առանց վտանգի չեն լինում, և պատահում է որ երկու գլուխներն էլ կտրւում են ու զոյգ միջուկն էլ կուլ է տրւում:

— Ո՛չինչ բանից մի վախեցիր, ասաց պառաւը յուզուելով: Սուրբ Մուհամէդը վկայ, որ մենք մաքուր ենք, և եթէ դու մերժես մեզ՝ բախտիդ աքացի զարկած կը լինիս: Միթէ դու էջ ես, որ մի ստուերից վախենում ես, խրտչում ես, ես տեսնում եմ որ դու երկիւղի մէջ ես:

—Բայց ասած ինձ, ով էր այն կինը, որին ես միքանի
բողբեցի առաջ տեսայ, և թնշ է իմ աննիւթը:

—Այդքան մի շտապիր, պատասխանեց պառաւը. այս գի-
շեր ոչինչ չի կարելի անել. դու պիտի համբերես: Տեղն ու
ժամանակը անյարմար են, բայց վաղը կէսօրին ինձ հանդիպիր
էջիւրի գերեզմանանոցում, որտեղ ես քեզ կը պատմեմ այն՝ ինչ
որ դու ցանկանոտ ես իմանալ: Ես նստած կը լինիմ աջ թևիդ
վրայ ընկած առաջին էմիրի գերեզմանի կողքին, իբրև նշան՝
ձախ ուսին վրայ կը գցեմ մի կարմիր շալ, որով կարող կը
լինիս ինձ զանազանել ուրիշներից: Գնա, Ալլահը հետդ լինի:

Մենք բաժանուեցինք, ես վերադարձայ իմ սենեակը մը-
տածելու տեսածիս ու լսածիս վրայ: Այլևս կասկած չկար, որ
ինձ համար բարիք էր պատրաստուում. բայց ես սոսկալի պատ-
մութիւններ էի լսել տաճիկ այր ամուսինների նախանձոտու-
թեան մասին, և վախենում էի զո՞հ գնալ այդպիսի մի վիրաւո-
րուած ամուսնու կատաղութեանը: Զինարն ու աշտարակը,
Մարիամն ու Յովսէփը, Դէլարամն ու իր Բաղդադի խոցը, յա-
ջորդաբար եկան պատկերացան առջևս և վհատեցրին ինձ մի-
քանի բողբեցի. բայց արիւնս դեռ տաք լինելով՝ ես վճռեցի թէ-
պէտ յակամայս, սկսել գործը:

Ոոստմանս համաձայն, միւս օրը ճիշտ նշանակուած ժա-
մանակ գերեզմանանոցումն էի, և պառաւի տուած նշանաբա-
նին հետեւելով աջ թևիս վրայ դտայ էմիրի գերեզմանը, որի
կողքին նստած էր նա կարմիր շալը ձախ ուսին գցած: Հեռա-
նալով ճանապարհի մօտից, մենք քաշուեցինք գերեզմանանո-
ցում գտնուող նոճիկներից ամենաբարձրի ստուերի տակ, ուր
նստելով գետնի վրայ—Ստամբուլի գեղեցիկ նաւահանգիստը
մեր առջն ընկած—սկսեցինք կամացուկ խօսել մեր բանակցու-
թեան խնդրի վրայ:

Նախ պառաւն ինձ գովեց ճշտապահութեանս համար և
ապա հաւաստիացրեց ինձ, որ իր աննիւթ առաջարկը երբէք
վտանգաւոր չէր լինի: Նա իր հասակակիցների պէս շատախօս
էր. բաւական ժամանակ նա խօսեց առանց գալու բռն խնդը-
րին: Նա յայտնեց թէ ինքը որչափ էր սիրում ինձ և որքան
էր ցանկանում մի ծառայութիւն անել ինձ, և այդպիսի շատ
ուրիշ խօսքեր: Տեսնելով որ ժամանակ էր վատնուում և ծխա-
մորճներս քարվանսարայում առանց վաճառուելու էին մնում, ես
ստիպուեցի խնդրել նրանից իսկոյն պատմել ինձ տեսածս չըք-
նաղ կնոջ մասին:

Առանց կրկնութիւնների կամ շրջաբանութիւնների, նա
սկսեց համարեա այսպէս.

«Տեսածդ սիրուն կինը, որի աղախինն եմ ես, միակ աղ-
ջիկն է մի հարուստ հալեպցի վաճառականի, որը երկու էլ
տղայ ունէր: Այդ վաճառականը շատ տարիներ առաջ մեռաւ:
Նրա որդիքը շարունակեցին նրա գործը և այժմ նրանք հա-
րուստ վաճառականներ են այստեղ:

«Դեռահաս ժամանակ, խանմիս՝ որի անունը Շաքարլաբ
(շաքարաշրթունք) է, ամուսնացրին մի ծեր, բայց հարուստ էմի-
րի հետ, որը խղճմտօրէն միայն մէկ կին էր պահում. որովհետեւ
փորձը նրան ցոյց էր տուել որ իր տան մէջ ամենէին խա-
ղաղութիւն չէր կարող լինել, եթէ օգտուելով մահմէդական օ-
րէնքի թոյլտուութիւնից՝ մի քանի կին միասին պահէր:

Էմիրը շատ էր սիրում ընտանեկան հանգստութիւնը,
հետեւեալ նա ամուսնացաւ դեռահասակ աղջկայ հետ որպէսզի
կարողանար նրան համակերպել իրան. մէկ էլ որ նա կարծում
էր թէ նա երբէք չէր ընդդիմանալ իր ցանկութիւններին: Այդ
բանում նա իսկապէս բախտաւոր էր, որովհետեւ աշխարհում իմ
խանմից աւելի հեզաբարոյ, հլու, դիւրանսաց կին-մարդ գո-
յութիւն չունի:

Միայն մէկ կէտ կար, որի վրայ մարդ ու կին երբէք
չկարողացան համաձայնել, և որը շուտով էմիրի մահուան
պատճառը դարձաւ. խանումս սերով կարկանդակ էր սիրում,
իսկ էմիրը պանրով: Այս կարկարակը ամբողջ հինգ տարի,
ամեն օր ճաշի վրայ վիճաբանութեան նիւթ էր նրանց համար:
Նրանք այնքան վիճեցին մինչև որ սրանից վեց ամիս առաջ
ծերունի էմիրը իր սիրած պանրով կարկանդակից չափից այն-
քան աւելի կերաւ, որ անմարսողութեան հիւանդութեամբ մե-
ռաւ:

«Մեռնելուց առաջ նա իր հարստութեան մի քառորդը,
այսինքն այն տունը որ տեսար, կահկարասիքը, աղախինները
և մի խօսքով ամեն բան որ մահմէդական օրէնքով նա կարող
էր տալ՝ կտակեց իր սիրուն Շաքարլաբին, որը այժմ այրի
է:

Իր հարստութեան, գեղեցկութեան և երիտասարդութեան
շնորհիւ, խանումս իր ամուսնու մահից յետ, միշտ իր վրայ
հիացողներ է ունեցել. սակայն նա՝ որ իր հասակակից կա-
նանց շատերից աւելի խելօք ու խոհեմ է, միշտ դէմ է եղել
ամուսնանալու որեւէ մէկի հետ և վճռել է սպասել մինչև ի-
րան հանդէպ դայ մէկը, որին ինքը ի սրտէ սիրի, և որը ոչ
շահախնդիր լինի և ոչ էլ փառամոլ:

«Ապրելով այս քաղաքի ամենաառաջնակարգ սրճարանի
դիմացի տնում, Շաքարլաբը միջոց է ունեցել դիտելու բոլոր

յաճախորդներին, և—քեզ հաճոյացնելու համար չիմ ասում —և քեզ բոլորի ամենազեղեցիկն է համարում, և ասում է որ դու իր երևակայած ու սիրած մարդն ես:

«Նղբայրս այդ սրճարանի տէրն է, և որովհետեւ ես յաճախ առիթ եմ ունենում տեսնուելու նրա հետ, ես մի անգամ քո մասին հետաքրքրուեցի նրանից իմանալու թէ դու ով և ինչ բնաւորութեան տէր մարդ ես: Նրա թուած տեղեկութիւնները շատ գոհացուցիչ էին և շատ ուրախացրին խանմիս: Յետոյ մենք վճռեցինք մի եղանակով քո ուշադրութիւնը մեզ վրայ դարձնել, և նոյնիսկ եթէ կարելի լինէր՝ ծանօթանալ հետզ: Դու շատ լաւ գիտես թէ մեզ ինչպէս յաջողուեց այդ բանը, և այժմ կարող ես դատել թէ ես քեզ մի ծառայութիւն արե՞լ եմ, թէ՞ ոչ»:

Սկզբում, երբ պատանւ սկսեց իր ասելիքը, ես երբէք չէի սպասում նրանից լսել այն՝ ինչ որ նա վերջն ասաց: Պատմութիւնը լսելուց յետոյ, ես զգացի այնպէս՝ ինչպէս զգում է մի յանցաւոր, որը դատապարտւում է մահուան, բայց յետաձգւում է շնորհւում նրան:

Փոխանակ գաղտնիքների, ծպտումների, պատերի վրայ սանդուղքով բարձրանալու, պատուհաններից սենեակը թափուողների, մերկացրուած սրերի և արիւնոտ վէրքերի՝ առանց որոնց սիրային դաւակցութիւն (intrigue) չէ կարելի անել Տաճկաստանում, ես իմ առջև տեսայ հանգստութիւն, հարստութիւն և ազազայ հոգեւորից ազատուելու: Ես օրհնեցի իմ բարի աստղին և վերջապէս համոզուեցի որ հարստանալու ժամանակը մօտ էր:

Լսածներովս ես այնքան յափշտակուեցի, որ հաղարումէկ անկապ արտայայտութիւններ արի: Ես խնդրեցի, ռէխտեցի յաւիտենական սիրով սիրել պառաւի խանմին—Շաքարլաբին, և շատ առատ վարձատրութիւն խոստացայ իրան:

—Բայց մէկ բան կայ, տասց նա, որ խանութս հրամայել է ինձ իմանալ նախքան նրա՝ քեզ ընդունելը: Նա կամենում է իմանալ թէ դու ի՞նչ աստիճան պատուաւոր ընտանիքի ես պատկանում, և թէ հարստութիւնդ ի՞նչքան է: Դու պիտի իմանաս որ նրա եղբայրներն ու աղզականները շատ հպարտ մարդիկ են, և եթէ խանութս ամուսնանայ մի անարժան մարդու հետ, նրանք շատ կուպիտ կերպով կը վարուեն նրա ամուսնու հետ, եթէ չեն սպանիլ:

Թէպէտ ես պատրաստուած չէի, այնուամենայնիւ ճարպիկութեամբ բացազանչեցի.

—Ընտանիք, ընտանիք ես հարցնում. ով չէ ճանաչում

Հաջի Բաբային: Եթէ կայ մէկը որ ինձ չէ ճանաչում, թող աղապիսին հարցնի իմ մասին: Եմենի սահմանազլխից մինչև Իրակի սահմանազլուխը, և Հինդի ծովերից մինչև Կասպից ծովի ափերը, և նա կը տեսնէ որ Հաջի Բաբան ամեն տեղ յայտնի է:

—Բայց ո՞վ է հայրդ, հարցրեց պառաւը:

—Հայրս, ասացի ես մի քիչ սպասելուց յետոյ—հայրս, նա մեծ իշխանութեան տէր մարդ էր: Շատ աւելի գլուխներ էին գալիս նրա բոյթի տակ, և նա շատ աւելի մարդկանց մօրուքից բռնած քաշ է տուել քան նոյնիսկ վահաբիների պետը: Ես բաւական ժամանակ ունեցայ մի փոքրիկ ճիւղագրութիւն կազմել ինձ համար, և տեսնելով որ պառաւը բաւական ուրախացել էր ասածներին վրայ, ես շարունակեցի այսպէս.

—Եթէ խառնուող մի մարդ է որոնում, որ ազնիւ տոհմից լինի, թող նա ինձ նայի: Հաւաստի եղիր որ նա և իր եղբայրներն ինչ ծագում էլ որ ունենան, ինձանից աւելի ազնուազարմ չեն կարող լինել: Երակներիս մէջ արարական աւրիւն կայ, այն էլ ամենամաքուր տեսակը: Իմ նախահայրը Մանսուրի արաբն էր, Երջանիկ-Արաբիայի Նէղշ գաւառից, որին իր ամբողջ ցեղով Պարսկաստանի Շահ Իսմայիլը հաստատեց Իրակի ամենալաւ արօտավայրում, ուր նրանք մինչև այսօր ապրել են: Իմ մեծ նախահայրը՝ Ղաթէր բէն Քուռ, բէն Ասը, բէն Ալ Մադիանը Քորէյշի ցեղից լինելով՝ ազգակա-նութիւն հաստատեց մեր օրհնեալ Մարգարէի տոհմի հետ, որ աղբիւրն է իսլամական ամենալաւ արեան:

—Ալլահ, Ալլահ, բացագանչեց պառաւը. դա արդէն բաւական է: Եթէ դու սերուել ես այդ տոհմից, խառնուած կատարելապէս կը բաւարարուի, միայն թէ հարստութիւնդ էլ համապատասխան լինի:

—Հարստութեանս մասին, ասացի ես, պիտի ասեմ որ այս բոլելիս ես չեմ կարող պարծենալ մի խոշոր նաղդով (կանխիկ դրամ). բայց դէ, թր վաճառականն է որ միշտ պատրաստի փող ունի: Դու պիտի իմանաս որ վաճառական մարդը փող չէ պահում. նա իր փողերը միշտ տալիս է ապրանքի, և իհարկէ, ապրանքներն աշխարհիս ամեն կողմերում վաճառելուց յետոյ, դարձեալ փող են դառնում և շահով վերադառնում են նրա արկղը: Իմ պարսկական մետաքսներն ու թաւիշներն այժմ Խորասանի ճանապարհի վրայ են. նրանք շուտով կը ծախուեն, և ինձ համար կը բերեն Բոխարայի գառան մորթի: Իմ գործակատարները՝ որոնց համար ես շատ ոսկի և ջրջնի մորթի եմ ուղարկել, այժմ Մէշէ-

դուռն ինձ համար դնում են Քաղաքի շալ և Հնդկաստանի թանկագին քարերը: Աստուծոյ իմ բաժնակեղծները պիտի փոխուին ապակեղծներին, սամոյրի մորթու և կտակեղծներին հետ, և իմ հնդկական ապրանքները որ Բասրայից գնում եմ և ուղարկում եմ Հալէպ, պիտի ծախուին և նրանց փոխարէն ինձ կ'ուղարկուին արաղչիներ ու շալեղէն: Վերջապէս, ինչքան որ դժուար է մի արտի ցորենի հասկեր համընել, այնքան էլ դժուար է ինձ համար ճշտութեամբ ասել թէ որքան է իմ հարստութիւնը. սակայն դու կարող ես ամենայն վստահութեամբ յայտնել խանութիդ, որ երբ իր ընտրած մարդը հաւաքի իր բոլոր հարստութիւնը՝ կ'ապշեցնի իրան էլ, իր ազգականներին էլ:

— Ահա մի Եփեսոս (գոհութիւն Աստուծոյ) ասաց պառաւր, ամեն բան մեր ուզեցածն է. միայն մնում է որ դուք ծանօթանաք միմեանց հետ: Մութը կոխած՝ ճրագները վառուած ժամանակ դու պիտի մեր փողոցի անկիւնումը լինիս, որպէսզի ներկայանաս Շաքարլարին, իհարկէ, հարկաւոր եղած նախադուրթիւններով, և եթէ նա կը հաւանի քեզ՝ ոչ մի բան չէ կարող մէջ տեղ ընկնել և յետաձգել ձեր ամուսնութիւնը: Միայն մէկ խրատ պիտի տամ քեզ. — դու պիտի միշտ սերով կարկանդակ սիրես և գարշես պանրով շինուածից: Ուրիշ բաների վերաբերմամբ նա առատաձեռն և աննախապաշարուած է: Այլապէս ձեզ խաղաղութեամբ և անվտանգ պահի:

Այս ասելով, պառաւն իր քօղի ստորին մասով ծածկեց իր բերանը և ստանալով ինձանից երկու ոսկի որ ես նրա բուռը դրի, հեռացաւ թողնելով ինձ կրկին զբաղուել իմ մշտածութիւններով:

Գլ. Կը.

Հաջի Բարան տեսակցութիւն է ունենում գեղանի Շաքարլարի հետ, մահր է հաստատում նրա համար եւ ամուսնանում է նրա հետ:

Ես երկար չմնացի ծառի տակին, որովհետեւ ես շատ բան ունէի անելու նախքան Շաքարլարին ներկայանալու: Հարկաւոր էր որ ինձ հարուստ մարդու կերպարանք տայի, մի քսակ ոսկի ունենայի և բնաւորութեանս համապատասխան զգեստ: Բացի դրանցից, անհրաժեշտ էր որ բաղնիք գնայի, և բոլոր հարկաւոր անուշահոտութիւնների գործածութեամբ՝ անձս ընդունելի դարձնէի:

Վերադառնալիս, ես ինքնաբաւականութեամբ կրկին և կրկին անգամ ինձ ասում էի. — «Ա՛, հաջի, բարեկամ հաջի, հօրդ

մօրուքը վկայ, հոգիդ վկայ, որ այս անգամ դու լաւ ցոյց տուիր յիմարի և իմաստունի տարբերութիւնը, Բարեբալւհ, հիւ դու Մանսուրիների սերունդ, հիւ դու Քորէյշի տոհմի շառաւիղ»:

Ապագայ վիճակիս վրայ խորապէս մտածելով ես իվերջոյ հասայ քարվանսարան: Օսմանը նստած էր մեր սենեակի մի անկիւնումը և հաշոււմ էր իր վաճառքների հասոյթը: Իմ ծրագրներով ես այնքան ոգևորուած էի որ իմ ծխամորճները մի շատ աննշան անպէտք բաներ երևացին աչքումս, ու ես էլ այնպէս հպարտ-հպարտ և ինքնաբաւականութեամբ կանգնեցի նրա առաջ որ կ'ասես թէ ես արդէն նրանից շատ աւելի բարձր աստիճանի տէր մարդ էի դառել: Ես չգիտեմ թէ նա նկատեց այդ թէ չէ, բայց նա զարմացաւ երբ ես նըրանից խնդրեցի յիսուն ոսկի փոխ տալ ինձ, որի դիմաց, իբրև ապահովութիւն՝ ես առաջարկեցի նրան վերցնել իմ ապրանքը:

— Ուրդիս, ասաց նա. ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, ինչի՞ համար ես այդքան փող ուզում, այն էլ այդպէս շտապած: Գըժուէ՞ր ես, թէ՞ դումարը ազ (խաղամոլ) ես դառել:

— Ամենակին, Աստուած մի արասցէ, պատասխանեցի ես: Ես ոչ գժուել եմ, ոչ էլ դումարեազ եմ դառել: Ուղեղս առողջ դրութեան մէջ է և աշխարհն էլ հաշտ է հետս. բայց դու դեռ փողը տուր, յետոյ կ'իմանաս թէ ես ինչի համար եմ ուզում այդ:

Առանց ուշացնելու, նա կատարեց ցանկութիւնս. որովհետեւ նա լաւ գիտէր ապրանքիս արժէքը, և գիտէր, որ եթէ ես չկարողանայի իր փողը յետ վճարել, ինքը չէր վնասուելու: Ուստի իսկոյն համրեց յիսուն ոսկին և ես ստանալով դուրս ելայ սենեակից:

Ես իսկոյն մի ձեռք լաւ զգեստ գնեցի ու գնացի բաղնիք, ուր լողացայ, մաքրուեցի և ամենաբարձր մոդայի տէր մարդու պէս հագնուեցի: Երբ բաղնիքից դուրս եկայ, արդէն մեր տեսակցութեան ժամն էր. ուստի բաբախող սրտով գնացի պառաւի նշանակած տեղը, որտեղ նա սպասում էր ինձ: Նա ամեն կողմ նայեց տեսնելու թէ ոչոք չէր նկատում մեզ, և փողոցի վերջին ծայրում բացուող դռնով ինձ առաջնորդեց տան մէջ:

Ես հիացայ այդ տան մէջ տիրող խաղաղութեան և հանգըստութեան վրայ. որովհետեւ ես այժմ ինձ դրա տէրն ու իշխանն էի համարում: Մենք իսկոյն մտանք այն յարկաբաժինը որ սուրբ էին պահել կանանց համար: Ինչպէս երևաց, էմիրի մահից յետոյ, նրա յիշատակը յարգելու համար, շատ քիչ ան-

զամ էի բաց արել տան գլխաւոր դուռը, և այժմ էլ այնքան նախազգուշութիւններով էին ներսուդուրս անում, որ կարծես թէ էմիրը դեռ կենդանի էր:

Անցնելով փոքրիկ փողոցի դռնով, մենք մտանք մի բակ, ուր մի շատրուան կար. յետոյ բարձրացանք մի փայտէ սանդուխքի վրայ, որի գլխին կախուած էր մի զոյնդզոյն վարագոյր: Պատուը յետ բաշեց վարագոյրը և ինձ առաջնորդեց մի նախասենեակ, ուր մի լամպայից և կանացի կօշիկներից զատ ուրիշ ոչինչ չկար: Չորս դռներ էին բացուած այս սենեակի մէջ: Այստեղ պատուը մենակ թողնելով ինձ, ինքը գնաց իր լամպին լուր տալու: Չանազան սենեակներից ես ձայներ էի լսում. երևի այս սենեակում դրուած կօշիկների տէրերն էին՝ որոնք խօսում և նայում էին ինձ, որովհետեւ ես կարողանում էի նրանց տեսնել դռների ճեղքերով: Վերջապէս, սենեակի անկիւնի մօտի դուռը բացուեց, և ես հրաւիրուեցի մօտենալ:

Բարախոզ սրտով ես մօտեցայ և քաղաքավարութեան համար ինձ ծածկելով իմ վերարկուով՝ մտայ մի սենեակ, որ լուսաւորուած էր մի լամպայի մեղմ լուսով: Այդ սենեակում, բաց-կապոյտ սատինով ծածկուած և ոսկեթել ծուլերով զարդարուած մի բազմոցի ծայրում՝ պատուհանի մօտ, նստած էր Շաքարլար խանումը: Նրա ամբողջ մարմինը ծածկուած էր քօղով, և միակ բանը որ ես կարողացայ անանկ նրա անձի վրայ, նրայ երկու փայլուն սև աչքերն էին, որոնք կ'ասես թէ հըրճուած էին այն մտահոգ հետաքրքրութեամբ՝ որ նրանք զարթեցրել էին իմ մէջ, և որը արտայայտուած էր դէմքիս վրայ:

Շաքարլարը իր ձեռքով հրաւիրեց ինձ նստել. սակայն ես այնքան ցանկանում էի նրան ցոյց տալ իմ յարգանքն ու շնորհակալութիւնը, որ մերժեցի նրա հրաւերը. իվերջոյ, երբ տեսայ, որ իզուր էր աւելորդ դիմադարձութիւնը, հանեցի կօշիկներս և բազմոցի հէնց պռունկին նստայ, ձեռքերս ծածկուած պահելով վերարկուիս թևերի մէջ, և այնքան պարկեշտ ու ամօթխած ձևացնելով ինձ, որ երբ յիշում եմ՝ ծիծաղս զաւրիս է:

Միքանի բոլէ այդպէս միմեանց դիմաց նստելուց և միքանի մեծարանաց խօսքեր փոխանակելուց յետոյ, Շաքարլարը հրամայեց Այիշէին (այդ էր պատաւ աղախնի անունը) դուրս գնալ սենեակից, և յետոյ ինքը կոանալով որպէս թէ վերցնելու բարձի վրայ դրած հովհարը, թոյլ տուեց, որ իր քօղը ընկնի, և ցոյց տուեց ինձ աշխարհիս ամենազեղեցիկ դէմքը:

Այս նշանի վրայ, որով նա կամեցաւ ինձ հասկացնել

Թէ այլևս մի կողմը պիտի դրուէր ամօթխածութիւնը, ես չուրեքցի այդ հրեշտականման կնոջ առջև և ամենաշեղծմեծանդ երկրպագուի զգացումներով՝ սէր և հիացումն արտայայտող մի կրակոտ ճառ խօսեցի, ցոյց տալու նրան, թէ ես ինչքան քրնքոյշ սրտի և զգացմունքի, սուր հանճարի և ընտիր ճաշակի տէր մարդ էի։ Վերջապէս ես այնպէս վարուեցի որ էմիրի այրի խանութը ամենայն իրաւամբ բաւականացաւ իր արած ընտրութեամբ և շուտով ցոյց տուեց թէ նա որչափ վստահութիւն ունեցաւ վրաս։

— Ես նեղ դրութեան մէջ եմ, ասաց նա. շատ մարդիկ իրանց չար աչքերով դառնացրել են սիրտս։ Ամուսնուս (յաւերտենական օրհնութիւն լինի նրա վրայ) ինձ կտակած հարըստութեան, ինչպէս և իմ սեպհական մեծ օժտի պատճառով, շատ մարդիկ ետևիցս ընկնելով՝ տանջել, չարշարել, դրեթէ խենթացրել են ինձ։ Իմ բոլոր ազգականները պահանջում են տէր դառնալու ինձ. կարծես թէ ես նրանց ընտանեկան ժառանգութեան մի մասը լինիմ։ Եղբայրներս էլ ինձ համար ամուսնացու ճարելիս՝ իրանց շահերն աչքի առաջ ունին. կարծես թէ ես մի քսակ բուրդ իմ նրանց համար, որ նրանք կարող են փոխել միջանի քսակ բրինձի հետ։ Ամուսնուս՝ հանգուցեալ էմիրի եղբորորդիներէից մէկը, որ իրաւաբան է, պնդում է որ մի հին սովորութեան համեմատ՝ երբ մի մարդ մեռնում է, այդ մարդու ազգականներից մէկնումէկը իրաւունք ունի ամուսնանալ նրա այրի կնոջ հետ, և որ նա կարող է այդ իրաւունքը ցոյց տալ՝ իր վերարկուն այդ կնոջ վրայ ձգելով։ Մի ուրիշ ազգական էլ ասում է, որ իբրեւ ըստ օրինաց, ես իրաւունք չունիմ սեփականացնելու այն բոլորը՝ որ այժմ ունիմ. նա սպառնում է դատ բանալ ինձ դէմ։ Վերջապէս, այս հանգամանքները այնքան շփոթեցրել, շուարեցրել են ինձ, որ դառնութեամբ եմ անցկացնում օրերս. բայց մի հնարք եմ գտել, որով պիտի անպատճառ վերջ տամ խնդրին, այն է՝ կըրկին ամուսնանալու Ճակտագիրը քեզ իմ դէմը բերեց, և այժմ ես այլևս ազատ եմ տարակուսանքից ու վարանմունքից։

Նա յետոյ ինձ յայտնեց թէ ինչ կարգադրութիւններ էր արել որպէսզի մենք անմիջապէս ամուսնանայինք (ի հարկէ եթէ ես դէմ չլինէի) և ասաց որ ինքն արդէն խօսել էր մի օրէնսդէտի հետ (որը այդ ժամին պատրաստ էր իր տնում և որը պիտի կատարէր մեր ամուսնութեան արարողութիւնը) պատրաստելու մեր ամուսնութեան համար հարկաւոր եղած թղթերը։

Ես երբեք չէի սպասում որ նա այդպէս իսկոյն կ'ուղէր

ամուսնանալ: Ես սկսեցի կասկածել ու վախենալ, բայց և այնպէս յաւիտենական սէր խոստացայ նրան և բացի հրճուեցնող խօսքերից՝ ուրիշ ոչինչ չասացի նրան:

Նա այնքան անհամբեր էր, որ իսկոյն կանչեց պառաւ Այիշէին և նրան հրամայեց իսկոյն ինձ առաջնորդել օրէնսդէտի մօտ, որը սպասում էր տան հեռաւոր անկիւնում գտնուող մի փոքրիկ սենեակում:

Օրէնսդէտի մօտ կար մի ուրիշ մարդ էլ, որը, ինչպէս ինձ ասուեց, իմ վէճիւր պիտի դառնար, որովհետեւ, ըստ սովորութեան, այդպիսի մէկը հարկաւոր էր և՛ կնոջ կողմից, և՛ մարդու: Նա ինձ ցոյց տուեց աղղկամէն (ամուսնական դաշնաթուղթը), որի մէջ նա արդէն նշանակել էր հարսնացուիս օժիտը որ բաղկացած էր նրա սեփական ինչքից, և պահանջեց ինձանից ասելու թէ ես ինչ պիտի աւելացնէի նրա վրայ:

Ես կրկին պարտաւորուեցի զօր տալ խելքիս ու հնարագիտութեանս, և որպէսզի մի շնորհքին պատասխան տայի նրան, կրկնեցի այն՝ ինչ որ ես առաջուց էլ ասել էի պառաւ Այիշէին, այսինքն թէ՛ մի վաճառական անհաստատ է իր հարստութեան մասին, քանի որ նրա փողերը ապրանքների ձեռք տարածուած են աշխարհիս բոլոր կողմերում: Բայց ես առանց վարանելու խոստացայ բոլոր ունեցածս հաստատել կնոջս աշուճով, պայմանով որ նա էլ նոյն բանն անէր իր կողմից:

— Դա շատ լաւ է, ասաց իմ խորամանկ վէճիւր: Բայց մեզ հարկաւոր է իմանալ մի աւելի որոշ բան. օրինակի համար, մենք ցանկանում ենք իմանալ թէ դուք որքան հարստութիւն ունիք այստեղ, Ստամբուլում: Անշուշտ դուք այսքան հեռու քաղաք էք եկել շատ կարևոր գործերի համար. ուրեմն նշանակեցէք ձեր հարստութիւնը որ այստեղ ունիք, փոյթ չէ՛ թէ նաղդէ, կամ տնիւր է. այո՛, այդ նշանակեցէք, և մենք կատարելապէս գոհ կը լինինք:

— Թող այդպէս լինի, ասացի ես վստահաբար. թող այդպէս լինի, տեսնենք: Յետոյ ձեռքներով որպէս թէ իմ մտքում հաշոււմ եմ պատրասի դրամիս կամ ապրանքիս որքանութիւնը, համարձակութեամբ ասացի. — Վրուք կարող էք այդ թղթի մէջ գրել որ ես քսան քսակ ոսկի և տասը քսակի արժէքի չափով հագուստ եմ տալիս:

Օրէնսդէտը մի ըրպէս առանձին խօսակցութիւն ունեցաւ Շաքարլարի հետ, յայտնելու նրան իմ խոստացածն ու առաջարկածը և նրա համաձայնութիւնն ստանալու: Քիչ բանակցութիւնից յետոյ, խնդիրը վերջացաւ ի բաւարարութիւն երկու կողմին ևս: Շաքարլարն էլ, ես էլ մեր առանձին կնիքնե-

րով կնքեցինք թղթերը, և մեր վէքիները արտասանելով հարկաւոր խօսքերը՝ ամուսնութիւնը օրինաւոր յայտարարուեց և ինձ շնորհաւորեցին բոլոր ներկայ եղողները:

Եւ չմոռացայ վարձատրել երկու վէքիներին նախքան նրանց հեռանալը, և բաւական խոշոր գումար էլ տուի բաժանելու սիրուն հարսիս տան բոլոր ծառաների ու աղախինների մէջ:

Եւ յետոյ, փոխարէն վերադառնալու Օսման աղայի և ծխամորճներէս մօտ, որոնց մէկ խուրճը ինձ ծառայում էր որպէս բարձ, ես, ամենածանրաբարոյ տաճկի արժանապատուութեամբ և կարեւորութեամբ՝ մտայ իմ հարեմի ամենաներքին առանձնարանը:

Գլ. ԿԹ.

Միամործավաճառ Հաջի Բաբան հարուստ աղա է դառնում, բայց իր կեղծ բնաւորութիւնը պահպանելու համար շատ նեղութիւն է կրում:

Եւ շուտով հասկացայ որ շատ դժուար դեր ունէի կատարելու: Մի չինացի փրկիսփայ ասել է. «Եթէ ուտելը միմիայն բերանի և քիմքի հետ գործ ունենայ, դա շատ հաճելի բան կը լինի, և մարդ կարող է մինչև յաւիտեան անդադար ուտել. սակայն ստամոքսը—մարսողութեան գործարանը, և յիշատակի մարմնի միւս մասերն են, որ իվերջոյ վճռում եմ թէ այդ ուտելը վնասակար է, թէ՛ սոսոջարար»:

Այդպէս է և՛ ամուսնութեան խնդրում: Եթէ ամուսնութիւնը միայն մարդու և կնոջ հետ գործ ունենայ, դրանից աւելի պարզ, հեշտ բան չկայ. բայց յետոյ առաջ են գալիս խնամքները, ընտանեկան շահերը, և նրանք են որ վճռում են թէ դա՛ ամուսնութիւնը երջանկարար է, թէ՛ թշուառացնող:

Մեր ամուսնութիւնից յետոյ, իմ չքնաղ Շաքարլաբը, մի քանի օրեր միմեանց հոռից այնքան բազմադիմի և բարդ պատմութիւններ արեց ինձ համար իր ազգականների կոխնների և հաշտութիւնների, նախանձների և ատելութիւնների, և մասնաւորապէս նրանց շահախնդրութեան շարժառիթների մասին, որով նրանք վերաբերւում էին դէպի իրան, որ ես սկսեցի վախենալ և զգացի որ ընկել էի կարիճների ընթի մէջ:

Նա ասաց որ հարկաւոր էր խիստ մեծ շրջահայեցողութեամբ յայտնել մեր ամուսնութիւնն իր եղբայրներին, և նկատեց որ, թէպէտ մենք ապահով էինք որպէս օրինաւոր մարդ ու կին, այնուամենայնիւ քանի որ մեր ապագայ երջան-

կութիւնը մեծ մասամբ կախուէմ ունէր նրանց բարեացակամութիւնից (որովհետեւ նրանք հարուստ էին, և հետեալաբար ազդեցիկ էին քաղաքում), ուստի մենք ամեն ջանք պիտի գործ դնէինք նրանց սրտերը շահելու, նրանց հաշտեցնելու մեզ հետ:

Որպէս նախագգուշական միջոց, նա լուր էր տարածել, որ իբր թէ ինքը շուտով պիտի ամուսնանար Բաղդադի ամենահարուստ և ամենապատուաւոր վաճառականի հետ: Իր եղբայրների մէկի հետ ունեցած խօսակցութեան միջոցին երբ վերջինքս նրանից հարցրել էր թէ այդ լուրը ճշտութիւն ունի, նա հշուրացել էր և հշ էլ բացարձակապէս խոստովանուել:

Այժմ նա առաջարկեց ինձ որ իր ամուսնութիւնը հրապարակաւ յայտարարուէր, և ասաց թէ հարկաւոր էր որ մենք մի մեծ խնջոյք տայինք իր բոլոր ազգականներին և փող չխնայէինք որքան կարելի էր չքեղ խնջոյք տալ, որպէսզի նրանք համոզուէին որ ինքը չէր անձնատուր եղել մի բախտախնդիր մարդու, այլ ամուսնացրել էր իրան և նրանց արժանի մի պատուաւոր և հարուստ մարդու հետ:

Ես ամենայն յօժարութեամբ և պատրաստակամութեամբ ընդունեցի նրա առաջարկը և շատ էլ ուրախացայ որ այդպէս շուտով առիթ էի ունենալու ցոյց տալու մեր հարստութիւնը: Ամենից առաջ ես մի խումբ ծառաներ վարձեցի, իւրաքանչիւրին տալով իրան յարմար պաշտօնն ու տիտղոսը. յետոյ հանգուցեալ էմիրի ընտանեկան զայլաններն ու չիբուխները փոխեցի աւելի թանկագին և աւելի նոր ձևի տեսակների հետ, գնեցի նաև մի դաստ (ձեռք) սուրճի բաժակներ, որոնց նալքարինները (սկահակալները) շատ թանկագին տեսակիցն էին, և որոնց մի քանիսը ոսկէ հիւսկէն (of filigree gold) էին, մի քանիսը կիտուազարդ (enamelley), մի քանիսն էլ որ իմ սեփական գործածութեան համար էին, թանգագին քարերով ազուցուած էին:

Քանի որ ես էմիրի յաջորդն էի դառել, վճռեցի որ նրա մետաքսէ թիկնոցն էլ վրաս ձգեմ: Էմիրը շատ հեռաժողով և բժախնդիր էր եղել հանդերձանքի և զարդերի մէջ, որովհետեւ նրա հանդերձարանում կային շատ թանգագին զգեստներ ու մուշտակներ, որոնք, ինչպէս Շաքարլարն ասաց, շատ տարիներից ի վեր գոյութիւն էին ունեցել իրանց գերդաստանում, և որոնք ես այժմ առանց կարմրելու վերցրի ու հագայ:

Վերջապէս, դեռ մեր խնջոյքի օրը չհասած, ես արդէն մի մեծ աղայի արժանի դրութիւն էի ստեղծել, և հաւատացած եմ, որ որպէս մի սափրիչի որդի՝ ես շատ մեծ յաջողութեամբ կատարեցի դերս:

Բայց չալտի մոռանամ յիշել որ, մեր խնջոյքից առաջ, ես իմ բոլոր նոր ազգականներին ըստ կարգին այցելեցի, և թէպէտ շատ անհանգիստ էի այցելութիւններս մասին, այնուամենայնիւ երբ փողոցներից անցնում էի նստած էմիրի ամենալաւ ձիու վրայ, որի թաւշայ ծածկոյթը աւելում էր գետինը, և շրջապատուած իմ ծառաներով՝ ես այնքան խնդում, հրճւում էի, որ մոռանում էի ուրիշ մտածութիւններ: Տեսնել որ ամբոխը ճանապարհ է բաց անում ինձ համար, և երբ ես անցնում էի, նրանք վեր էին նայում և իրանց ձեռքերը կրծքների վրայ էին դնում—լսել ձիու սանձի երկաթի չլիկոցը, երբ նա հպարտութեամբ շարժում էր իմ տակում—վայելիլ փափուկ թամբի հանգստութիւնը մինչդեռ շուրջս մարդիկ ոտի վրայ էին— և վերջապէս տեսնել որ մարդիկ ակնածութեամբ, խորին յարգանքով են վերաբերում դէպի ինձ—տեսնել այդ բոլորը և չհարբել, յիշաւի մարդկային ուժից վեր էր. ուստի զարմանալի չէ որ ես բոլորովին կողքել էի ինձ:

Մինչդեռ գնում էի, փողոցում բազմութեան մէջ ես նկատեցի իմ հայրենակիցներից մի քանիսին, որոնք կարծես դիտմամբ իրանց ցոյց էին տալիս ինձ, որպէսզի ինձ աւելի լաւ հասկացնէին թէ ինչ մեծ բարեբախտութեան ու երջանկութեան էի հասել ես: Արդեօք նրանք ինձ իսկապէս ճանաչեցին թէ չէ, ես չգիտեմ. բայց այսքանը յիշում եմ որ նրանց մօտից անցնելիս՝ ես զլուխս միւս կողմն էի դարձնում և երեսս թափցնում էի մօրուքիս, մեծ չալմայիս, և թաւամազ թիկնոցիս ստուերի մէջ:

Այցելութիւններս սպասածիցս աւելի մեծ աջողութեամբ անցան: Ես չգիտեմ թէ ինչ էին կոչւոյ եղբարների շարժառիթները. բայց նրանք շատ քաղաքավարի կերպով ընդունեցին ինձ, և մինչև անգամ ինձ հաւատացրին որ, ես մեծ շնորհ էի արել իրանց՝ առուստանալով իրանց քրոջ հետ: Վաճառականներ լինելով, նրանց խօսակցութեան գլխաւոր նիւթն էր առևտուրը, որի մասին, ես աշխատեցի իմ կեղծ ընտելութեանը համապատասխան զրոյցներ անել նրանց հետ և նրանց հաւատացրի որ իմ վաճառականութիւնը շատ ընդարձակ էր: Միևնոյն ժամանակ ես, իհարկէ մեծ շրջահայեցողութեամբ զգուշանում էի չմտնել ինձ, որովհետև երբ նրանք սկսեցին ինձ հարցաքննել Բաղդադի և Բասրայի վաճառականութեան մասին, նաև այդ երկու քաղաքների՝ ինչպէս և Արաբիայի և Հնդկաստանի ու Չինաստանի մէջ եղած յարաբերութեան մասին ընդհանրապէս, և առաջարկեցին ինձ ընկերանալ իրանց հետ զանազան տեսակ ապրանքների առևտրի մէջ՝ ես իսկոյն իմ նա-

խառնաժողովականութիւնները վերածեցի միավանկների, և իբր թէ համաձայնաբանութիւն յայտնեցի նրանց հետ ընկերանալ:

Վերջապէս շարժեցնելով այցելութիւններս, ես զգացի որ մէկ պարտականութիւնս էլ դեռ ունէի կատարելու, այն է՝ Օսման աղային յշնոյթնալստեի ամուսնութեանս մասին և նրան հրաւիրել մեր խնջոյթնալստեին. սակայն ես այնքան զգում էի թէ ինչ խաբեբայիք եր, էլ չեմ տեսնում, և այնքան վախենում էի բռնութեան, որ չնայած նորա շատ լուսկեաց, բերան-փակ մարդ էր, ես վախեցում էի նրան վստահել և յայտնել գաղտնիքս, ուստի վճռեցի դեռ ոչինչ չասել նրան կամ իմ հայրենակիցներին, մինչև ինձ բոլորովորովորով ապահովուած գտնէի իմ նոր վիճակի մէջ, և այդ վիճակի վիճակից զրկուելու վախս փարատուէր:

Գլ. 5.

Ուրիշի Ուրիշի Գալստանը զրգելու ցանկութեամբ Հաջի Բաբան իր թշուառութեան և խայտախայտառակութեան հիմն է դնում:—Նա կուում է իր կնոջ հետ:

Մեր խմբի խնջոյքն շատ մեծ աշոգութեամբ անցաւ, և ես շատ պատճառաւորութեամբ իրաւունք ունիմ ենթադրելու որ ինձ կատարեալ փեղագիւնութեամբ աշոգութեան հաւատացնել իմ հիւրերին թէ՛ ես իսկապէս կանգնեմ հէնց այն հարուստ վաճառականն էի որ կեղծել էի: Ես, ունեւորութիւն, սկսեցի ինձ ապահովուած զգալ իմ նոր ստացուածքով կրթիւն և ինձ տուի վայելքների վայելչաւոր մարդկանց հետ ընկերակցութեամբ, զուարթագեղ շորեր հագնելով և, մի խօսքով մի տոմի տուն պահելով՝ որը քաղաքի ժողովրդի խօսակցութեան ու նախանքութեան ատարկան դարձաւ: Բայց ես միշտ ճնշում էի երբ մտածումս ընկնում էի որ երջանիկ վիճակիս համար ես պարտական էի կնոջս կնոջս թէպէտ պատաւ Այիշէն արդէն ինձ հաւատացրել էր որ իմ և կնոջս կնոջս մէջ ոչ մի բանի համար անհամաձայնութիւն չէր ծագել ծագել եթէ ես միայն սերով կարկանդակ սիրէի, այնուամենայնիւս այնպիսի ես տեսայ որ մենք միմեանց հետ վիճաբանելու շատ խրդիլաւորներ ունէինք մեր մէջ:

Շատ Շատ ազնիւ, պատուական մարդ է եղել հանգուցեալ Եմիրէյի որդի, մտածեցի ես, որ կարողացել է կեանք վարել միայն մէկ վիճակ վիճաբանութեան նիւթ ունենալով իր կնոջ հետ. սակայն ես պիտի իմտի խոստովանուեմ որ եթէ, մեր մէջ մի խնդիր ծագի—մի խնդիր ծագի որ երկու կողմ ունենայ, մենք երբեք չենք կարող համայնեցնել միմեանց հետ. ես իմ ասածը կը պնդեմ, նա իրսնը:

Երկարեակար ժամանակ ես վայելեցի իմ երջանիկ վիճակի հա-

ձոյքներէից գլխաւորը, այսինքն ես ամենայն ցուցամուտութեամբ եմ
ինձ ցոյց էի տալիս իմ հայրենակիցներին, որոնք ապրում էին էի
քարվանսարաւոր, և հրճուած էի երբ մտածում էի թէ ես ինչեւ ինչ
քան պիտի դարմացնէի իմ նախկին աղային—Օսմանին մասին:

Այժմ որ ամեն վտանգից ազատ էի, ինչպէս ես կարծում էի
էի, մի օր փորձեցի հագնել իմ ամենաթանգագին շորերը որոնք
հեծնել ամենալաւ ձին, բոլոր ծառաներիս շուրջս հաւաքեցաւ և քնել, և
գործի ամենատաք ժամանակ գնալ քարվանսարան, ուր առաջին աշխատանքս
անգամ մտել էի որպէս մի հասարակ ծխամորճավաճառ: Այս
արի և երբ հասայ քարվանսարայի դուռը, հոգ չհանաչեցի ինձ.
բոլորն էլ աշխատեցին պատուել ինձ յուսալով որ յանձնեմ ինձ
նրանք մի լաւ մուշտարի կը գտնէին: Ես հարցրի Օսման Օսման
աղային. ծառաներս իսկոյն մի գեղեցիկ գորգ փոցերէն դնելով գետնի
վրայ, որի վրայ ես նստայ, և միևնոյն ժամանակ նրանք ինձ
մատուցին իմ ամենաթանգագին սաթազուլիս չիբուխս ու խաւ:

Եկաւ Օսմանը և պատշաճ յարգանքով նստաւ գորգի վրայ եր-
րին: Նա չհանաչեց ինձ: Առանց վերապահութեան ես մի քիչ մի քիչ
ժամանակ խօսեցի նրա հետ և նշմարեցի որ նա նայում էր ինձ
ինձ առանձին հետաքրքրութեամբ: Վերջը երբ նա չկարողացաւ
ցաւ այլևս զսպել իրան՝ բացականչեց... «Օրհնեալ Մարգարէի գալիս
մօրուքը վկայ, որ դու կամ Հաջի Բաբան ես, կամ թէ աչք թէ
ոք էլ չես»:

Ես սրտանց ծիծաղեցի՝ նրա բացազանչութեան վրայ և
երբ վերջապէս մենք փոխադարձաբար բացատրուեցինք, երբ նա շու-
տով յայտնեց իրան թէ ես ինչ վիճակի էի արժանացել և
թէ իրանից փոխ առածս յիսուն ոսկին ինչ նպատակի էի օգտու-
նայեցրել:

Բախտիս փոփոխութիւնը կարծես թէ, հակառակ իմ փառքի կար-
ծածին, ամենևին չազդեց նրա փիլիսոփայական մտքին: Բայց
հայրենակիցներս—պարսիկները, հէնց որ նրանք լսեցին որ
մեծ չալմայով, թանգագին թիկնոցով, ծառաներով շրջապա-
տուած մարդը՝ երբեմն իրանց համբար ծխամորճավաճառ էմ
և Հա-
ջի Բաբան է, նրանց ազգային ղգացումները դարձեցին ինչ
նրանք չկարողացան զսպել իրանց նախանձն ու ատելութիւնը:

Ես նոր—աւաղ, շատ ուշ հասկացայ թէ ինչքան էի միայնակ
ուել երբ դուրս էի եկել այնքան ցուցամուտութեամբ, և ամբողջ
ծեցի ծկուել քարվանսարայից առանց աւելորդ յաղթութիւն
անելու:

—Ինչ, դա Հաջի Բաբան է, ասաց պարսիկները: Ես
դա սպահանցի սափրիչի տղան է. այ ապականիւր դրս
գեօղը (գերեզմանը). այ դրա մօր էն ինչն ասեմ...

—Բարձրալլահ, ճշմարիտ զաւակդ Իրանի, ասաց մի ուրիշը. դու լաւ խաղ ես արել տաճկի մօրուքի հետ, ինչալլաւ ուրիշներն էլ քո մօրուքի հետ նոյն խաղը կ'անեն:

—Մէկ նայեցէք դրա մեծ չաւային, դրա լայն վարտիկին, դրա չիբուխին, ասաց մի երրորդը: Դրա հայրը իր կեանքում երազում էլ այդպիսի բաներ չէր տեսել:

Այս կերպով նախանձոտ հայրենակիցներս ինձ այնքան ծաղրեցին, որ ես մնացի շուարած, բայց վերջն ուժ ու սիրտ մէկ անելով կանգնեցի, հեծայ ձիս և դուրս ելայ քարվանսարայից, ետևիցս տանելով հայրենակիցներին ծաղրն ու այպանումը:

Առաջին զգացումս այն եղաւ որ բարկանամ նրանց վրայ, իսկ երկրորդը՝ կատաղել ինձ վրայ: «Այ քեզ մի լաւ դաս, ասացի ինձուինձ: Քէրէլէի Հասան սափրիչի հոգին վկայ որ ես լաւ պատիժ կրեցի: Ա'խր, որ փորը կուշտ թաղին երեւեցէ համարձակուել է մտնել գայլերի մէջ առանց յօշոտուելու: Ո՞ր մի քաղաքացին է երեւեցէ մտել անապատի վայրենի, բարբարոս արաբների մէջ առանց թալանուելու, առանց ծեծուելու: Է՛, գուցէ Հաջի Բաբան մի օր իմաստուն մարդ կը դառնայ, բաց դեռ շատ տանջանքներ, շատ չարչարանքներ, շատ հարուածներ պիտի կրի: Ի՞նչ օգուտ ունի մի մօրուք, մտածեցի ես ձեռքս առնելով իմս, երբ դրա ծայրից կախուած է մի դատարկ կանթիղ, որ գրեթէ նմանում է մի զամբիւղի կանթի՛ որի մէջ արմաւ չկայ: Շատ իմաստուն է եղել այն մարդը որ ասել է թէ՛ «հէոք երբէք չէ՛ ուրախանում իր նմանի բարձրութեան վրայ. մարդս ուրախանում է իր նմանի բարձրութեան վրայ գուցէ այն ժամանակ՝ երբ նա տեսնում է նրան ճօճուելիս բարձր կախաղանից»:

Այսպէս տխուր մի նախօտութիւնով ես հասայ տուն, ուր մտնելով անցայ հարեմս և աշխատեցի օրուայ մնացած մասը անցկացնել զբաղուելով իմ դառն մտածութիւններով. բայց չեղաւ, որովհետեւ իմ թշուառութիւնը աւելացնելու դիտաւորութեամբ, Շաքարլաբը, կարծես թէ չար դէից թելադրուած՝ եկաւ մօտս և պահանջեց ինձանից անյապաղ իրան տալ իր հանդերձագինը, որ ես խոստացել էի իմ ամուսնական դաշնագրում: Նա այնպէս նեղը ձգեց ինձ իր անիրաւացի և դժպատեհ թախանձանքներով, որ համբերութիւնս հատաւ, վայրենացայ, կատաղեցի և, բոլոր մաղձս որ պէտք էր հայրենակիցներին գլխին թափէի, նրա գլխին թափեցի ամենակոպիտ լեզուով ու շարժումներով: Սոսկալի արտայայտութիւններով ես անիծեցի նրանց էլ, կնոջս էլ: Ես որ երբեմն մեղմ և համբերող

Հաջի Բարան էի, աւելի կատաղի գազան էի դառել քան Մազանդրանի առիւծը:

Սկզբում Շաքարլարը ոչինչ չխօսեց: Նա միայն շուարեց, ապշեց վարմունքս վրայ: Պառաւ Այիշէյի ինչպէս և իր բոլոր աղախինների առջև կանգնած՝ նա անհամբեր լռութեամբ սպասում էր մի առթի որ կարողանար խօսել: Իվերջոյ, երբ նրա լեզուն շարժուեց, ճ, նրա բերանը շատ փոքր էր խօսքերի այն հոսանքի համար որ յորդութեամբ դուրս էր վազում այնտեղից: Կնոջ զայրագին խօսքերը կտրեցին պառաւ Այիշէյի լեզուի կապերը, և վերջինինս էլ՝ միւս պառաւներինը, և նրանք բոլորն էլ սկսեցին մոլեգնաբար զգզզել ինձ: Նրանք խօսքերի և ճիշերի այնպէս մի սաստիկ փոթորիկ բարձրացրին, որ ես ընկճուեցի, գլուխս կորցրի:

Ես մտածեցի դիմադրել նրանց, բայց այդ անկարելի էր: Փոթորիկն այնքան սաստիկ էր, որ սենեակը, որի մէջ մենք հաւաքուած էինք, մեզ տեղ չէր անում: Ես պարտաւորուեցի դուրս գնալ հարեմիցս: Կինս և իր բոլոր աղախինները, որոնք աւելի նմանում էին կատաղած խենթերի քան այն գեղանի արարածներին որ Մարգարէն ճշմարիտ հաւատացեալներին խոստանում է դրախտում, սկսեցին յետևիցս նախատել և ծաղրական ծափահարութիւններ անել:

Այդ օրուայ արկածից յոգնած, լքուած՝ ես գնացի իմ առանձնասենեակը, դուռը կողպեցի ու այնտեղ, թէև շրջապատուած վայելքների ամեն տեսակ աղբիւրներով, ինձ ամենաթշուառ մարդն զգացի: Ինքս ինձ ատեցի իմ յիմարութեան համար, և սիրտս լցուեց չար նախազգացումներով ապագայիս մասին:

Ես նոր, աւաղ, նոր էի հասկանում թէ կեղծելը, ստելը, խաբելը ինչ դրութեան մէջ էին ձգել ինձ, և ինձ այնպէս էր թուում, թէ ես ընկել էի հէնց իմ ձեռքով սարքած որոգայթի մէջ, որովհետեւ եթէ ես փորձ անէի աւելորդ ստեր ասելով ազատել ինձ իմ ներկայ անել դրութիւնից, աւելի նեղը կընկնէի, և ի վերջոյ բոլորովին կը կաշկանդուէի:

«Ա՛խ, երանի, երանի թէ ես պարզ ու անկեղծ եղած լինէի: Ափսոս, եթէ ես հէնց սկզբից պարզ լինէի, չխաբէի, այժմ օդի պէս ազատ կը լինէի, և կինս էլ որքան ուզում էր փոթորկէր, կատաղէր մինչև դատաստանի օրը, ինձ ոչինչ չէր լինի. բայց այժմ ես պարտաւոր եմ, համաձայն մեր դաշնագրերին որոնք կնքուած և կրկնակի կնքուած են՝ կատարելու խոստումս, և ես շուտով պիտի երևամ աշխարհում որպէս մի ստախոս, խաբեբայ մարդ թէ գործով և թէ խօսքով:

Գլ. հա.

Հաջի Բարայի խաբերայութիւնն յայտնուում է:—Նա զրկուում է իր կնոջից եւ լայն աշխարհը կրկին նրա առաջն է ընկնում:

Տենդային դրութեամբ ես անցկացրի գիշերը: Ամենակինքուն չեկաւ աչքերիս մինչև այն ժամանակ՝ երբ մուէզիկները յայտարարեցին արևածագը: Այդ ժամին ես թմրեցի և քնեցի. բայց դեռ մի ժամ չանցած՝ ես յանկարծ զարթնեցի մի անսովոր աղմուկից, և իմ ծառաներից մէկը մօտս գալով՝ յայտնեց որ կնոջս եղբայրները միքանի ուրիշ մարդկանց հետ միասին եկել էին ինձ տեսնելու:

Այս լսելով, հակառակ կամքիս մի սարսուռ անցաւ մարմնով, և ես մի րոպէ մնացի շուարած չհասկանալով թէ ինչ անել: Ես իսկոյն զգացի իմ խաբէութեան հետևանքները: Յիսուն զարհուրանքներ մէկը միւսից աւելի սպանիչ պաշարեցին ինձ, և ես մի տեսակ խուտուտ զգացի ոտներիս տակին—մի խուտուտ՝ որ անցած տարիները չէին կարողացել բուժել, որ րովհետեւ Մէշհէգում ինձ տրուած դասը խիստ ազդու էր եղել:

«Բայց այս բոլորից յետոյ, մտածեցի ես, Շաքարլաբն իմ կինս է. ինչ էլ որ լինի՝ նա կինս է, և եթէ ես ինձ աւելի հարուստ եմ ձևացրել քան իսկապէս եղել եմ, ես արել եմ միայն՝ ինչոր հազարաւոր մարդիկ ինձանից առաջ արել են»:

Յետոյ դառնալով ծառաներիս, ասացի.

—Յանուն Մարգարէի, թող նրանք ներս գան. դուք իսկոյն սուրճ ու նարդիլէ պատրաստեցէք:

Ծառաներս իսկոյն դուրս տարան անկողինս սենեակից, և իմ այցելուները մէկը միւսի ետևից՝ լուռ յաջորդութեամբ ներս մտան ու նստան դիմանիս վրայ: Նրանցից երկուսը կնոջս եղբայրներն էին, մէկը նրա հօրեղբայրն ու իր որդին, և միւսը մի դաժանդէմ մարդ՝ որին ես դեռ չէի տեսել:

Նրանց հետ եկել էին մի խումբ ծառաներ, որոնք կանգնած մնացին սուրճի մօտ, սենեակի մէջ: Սրանց բոլորից առաջ կանգնած էին աւագակների կերպարանք ունեցող երկու մարդիկ՝ որոնք զինուած էին հաստ ճիպոտներով, և նայում էին ինձ մի առանձին կատաղութեամբ:

Ես աշխատեցի, ըստ կարելոյն, անմեղ և անվրդով երևալ, և կեղծեցի իբր թէ անչափ ուրախացել էի, որ նրանք եկել է-

ին այցելելու ինձ: Բոլոր հանճարս գործ դնելով, սկսեցի մի շատ մեծարանաց ճառ ուղղել նրանց, որին սակայն, նրանք պատասխանեցին միմեայն միավանկներով: Ես հրամայեցի սուրճ ու նարգիլէ բերել հիւրերիս համար, յուսալով, որ մինչ նրանք կը զբաղուէին խմելով ու ծխելով՝ ես միջոց ու ժամանակ կ'ունենայի ստուգելու նրանց նպատակը:

— Բարեբեր լինին ձեր ժամերը, ասացի ես կնոջս մեծ եղբորը: Արդեօք դուք, այսպէս կանուխ որևէ գործ ունիք, որի մէջ ես օգտակար լինիմ ձեզ: Եթէ այո, հրամայեցէք ինձ, ես պատրաստ եմ ծառայելու ձեզ:

— Հնչի, ասաց նա, մի քիչ սպասելուց յետոյ — հնչի, ինձ նայիր. դու կարծում ես մենք անբան, յիմար անասուններ ենք, թէ կարծում ես էլ քեզ պէս մարդ չկայ աշխարհում, և իրաւունք ունիս մարդկանց մօրուքների հետ խաղ անելու և վարուելու նրանց հետ ինչպէս սիրտդ է ուզում:

— Այդ ի՞նչ էք ասում, աղա, պատասխանեցի ես: Միթէ ես մարդ եմ. ես ոչոք չեմ, ես ոչինչ եմ, ես մի բուռ փողոց էլ պակաս արժէք ունիմ:

— Մարդ, ասաց երկրորդ եղբայրը աւելի խիստ տոնով, դու ասում ես ոչոք չեմ, ոչինչ ես, հա՛. ապա այդ ի՞նչ օյին էր, որ մեր գլխին հանեցիր: Միթէ դու կարծում ես մենք ոչինչ ենք, մարդ չենք, և այդքան հեռու տեղից՝ Բաղդադից եկել ես մեզ մէջմունի (կապկի) պէս խաղացնելու:

— Ո՛վ Ալլահ, մեծ և բարի Ալլահ, գոչեցի ես. այս ի՞նչ խաբար է, դուք ինչո՞ւ էք այդպէս խօսում, միթէ ես բան եմ արել, ի՞նչ յանցանք եմ գործել. խօսեցէք, խօսեցէք և ճշմարիտն ասացէք:

— Ա՛հ հնչի, հնչի, ասաց կնոջս հօրեղբայրը շարժելով իր գլուխն ու ալեխառն մօրուքը. դու վատ դալաթ ես արել, վատ աղտեղութիւն ես կերել: Միթէ քեզպէս աշխարհ տեսած մարդ կարող է ենթադրել, որ ուրիշներն էլ կարող են քեզ պէս աղտեղութիւն ուտել ու փառք տալ Ալլահին: Ո՛չ, ոչ, դու չարաչար սխալուում ես. մենք թերևս կ'ուտենք այդ աղտեղութիւնը, սակայն չենք կարող մարսել քո լրբութիւնը:

— Բայց ես ի՞նչ եմ արել, ի՞նչ յանցանք եմ գործել, հօրեղբայր, ասացի ես. հոգիդ սիրես, ասա, ասա, ի՞նչ եմ արել:

— Ի՞նչ ես արել, ասաց կնոջս հօրեղբորորդին. միթէ դու կարծում ես ստախօսութիւնը, խաբէութիւնը ոչինչ է, յանցանք չէ: Դու շատ անամօթ մարդ պիտի լինես որ այդպիսի բաները ոչինչ համարես:

— Գուցէ, ասաց հօրեղբայրը, դու կարծում ես, որ սպանանցի սափրիչի որդին մեծ շնորհ է անում Ստամբուլի ամենահարուստ գերդաստանին երբ նա ամուսնանում է դրան պատկանող աղջկայ հետ:

— Եւ գուցէ, ասաց միւսը, դու նայում ես մի ողորմելի ծխածորձավաճառի վրայ որպէս մի վաճառականի, և կարծում ես որ նա արժանի է խնամխանալու մի մեծ, մի ազնիւ գերդաստանի հետ:

— Բայց հաշին, փոքր Ալլահին, մեծ վաճառական է, ասաց հօրեղբայրը հեգնօրէն: Նրա մետաքսներն ու թաւիշները... մեզ համար Բոխարայից բերելու են գառան մորթիներ: Նրա շաւերը գալիս են Քաշմիրից: Ջինաստանից մինչև Բասրա ծովերը սևացած են նրա վաճառականական նաւերով:

— Եւ նրա տոհմը, շարունակեց նրա որդին նոյն տոնով, նրա տոհմը—լինչ ասացիր, սափրիչի՞ որդի ասացիր, ճ, Աստուած մի արասցէ. նա իր ծագումը հասցնում է մինչև Քորէյը. նա մինչև անգամ Մարգարէիցն էլ չէ իջել, այլ նրա նախահայրերից, և ով է կարող մրցել մի Մանսուրի արարի հետ:

— Այդ ինչէր էք ասում, բացազանչեցի ես կրկին և կրկին անգամ, և երբ տեսայ, որ փոթորիկն արդէն գլխիս շուրջն էր հասել՝ ասացի.—եթէ դուք կամենում էք սպանել ինձ՝ սպանեցէք, միանգամից սպանեցէք ինձ, կաշիս մաս-մաս մի պոկէք:

— Լսիր, ես քեզ ասեմ, ով անհաւատ մարդ, ասաց դաժանադէմ մարդը, որ մինչև այս ժամանակ լուռ ու անշարժ էր մնացել. Լսիր, դու մի թշուառական ես, որ արժանի ես մահու, և եթէ անմիջապէս չհրաժարուես կնոջիցդ, այս տանից և այն բոլորից, որ պատկանում են այս տանը, այն, եթէ դու առանց մի րոպէ ուշացնելու չհրաժարուես այդ բոլորից, այս մարդիկը (ցոյց տալով երկու ժանտերես, աւաղակի կերպարանը ունեցող երկու սրիկաներին) հոգիդ կը հանեն այնքան հեշտութեամբ՝ ինչպէս նրանք թափ են տալիս իրանց չիբուխի այրուած թուղթովը (ծխախոտը): Լսեցի՞ր, մարդ. ես ասացի ինչոր ասելու էի. այժմ դու ազատ ես անելու ինչ որ կամենաս:

Ամբողջ խումբը կարծես թէ գրգռուած այս մարդու խօսքերից, միաժամանակ արձակեցին իրանց լեզուի կապերը, և առանց խօսք կամ գործողութիւն վերապահելու՝ շատ անհաճոյ ճշմարտութիւններ խփեցին ճակատիս:

Այս փոթորիկը, որ ես թոյլ տուի իր գործը տեսնել առանց շրթունքներս շարժելու, ինձ ժամանակ տուեց մի քիչ

մտածելու, և ես վճռեցի փորձել թէ ինչ հետևանք կ'ունենար մի քիչ դիմադրութիւնը:

— Իսկ դու ո՞վ ես, ասացի ես դաժանադէմ մարդուն, դու ո՞վ ես, որ համարձակուում ես մտնել տունս և ինձ հետ վարժուել որպէս մի շան հետ: Սրանք (մատնացոյց անելով կրնոջ ազգականներին) սրանք եկել են այստեղ, որովհետեւ տունըն իրանցն է, և բարեաւ են եկել. իսկ դու այստեղ թի՛նչ գործ ունիս, դու՛ որ ոչ կնոջս հայրն ես, ոչ եղբայրը, ոչ հօրեղբայրը: Ես ամուսնացել եմ ոչ աղջկադ հետ, ոչ քրոջդ հետ. ուրեմն քեզ թի՛նչ գործ թէ ես ո՞վ եմ:

Մինչդեռ ես խօսում էի, նա ամբողջ ժամանակը յուզւում, կատաղում էր: Նա և իր երկու չարագործները ոլորում էին իրանց բեխերի ծայրերը վեր դէպի իրանց աչքերի անկիւնները, և նայում էին ինձ այնպէս՝ ինչպէս առիւծը նայում է այծեամի վրայ. նախ քան նրա վրայ յարձակուելը:

— Ես ո՞վ եմ, հօ, գոռաց նա կատաղութեամբ. եթէ կամենում ես իմանալ, տեղեկացիր նրանցից՝ որոնք ինձ բերել են այստեղ: Ես և իմ երկու մարդիկը իշխանութիւն ունինք դործելու, և եթէ դու ոչինչ համարես մեր իշխանութիւնը, բանդ աւելի վատ կը դնայ:

— Բայց, ասացի ես մեղմացնելով տոնս, որովհետեւ ես այժմ իմացայ որ նրանք ոստիկանութեան պաշտօնեաներ էին— բայց եթէ դուք պնդէք որ ես բաժանուեմ իմ կնոջիցս, որի հետ ես ամուսնացել եմ օրէնքով, ես էլ պիտի պահանջեմ, որ ինձ ժամանակ տաք խորհրդակցելու օրէնսդէտների հետ: Իսլամի ամեն մի որդու համար սուրբ զորանն ապաւէն է, և իհարկէ, դուք այնքան անօրէն չէք լինի որ ինձ զրկէք այդ իրաւունքից: Բացի այդ, ես դեռ չգիտեմ արդեօք նա՞ կ'իջնա էլ է ընդունում ձեր առաջարկը, արդեօք նա է՞լ ցանկանում որ ես հրաժարուեմ իրանից: Նա ինքն որոնեց ինձ, ես չորոնեցի նրան: Նա սիրեց ինձ առանց աչքի առաջ ունենալու որեւէ աշխարհային շահ և երբ ես ընդունեցի նրա ձեռքը, ես դեռ չգիտէի թէ նա ո՞վ էր, ոչ էլ որեւէ բան գիտէի նրա հարստութեան կամ գերդաստանի վերաբերմամբ: Բոլոր գործը ճակատագրի գործն է, և եթէ դուք մոռնուման էք, չէք համարձակուիլ դիմադրել դրան:

— Շաքարլաբի ցանկութեան մասին դու հանգիստ եղիր, ասաց նրա մեծ եղբայրը: Իմացիր որ նա մեղանից աւելի շատ է ցանկանում, որ բաժանուի քեզանից:

— Բակի, բալի, յանուն Մարգարէի, բակի. թող նա հեռանայ խաղաղութեամբ: Ալլահի սիրոյն համար թողէք մենք ա-

զատուենք դրանից, ասացին յիսուն ձայներ, և երբ ես ետ նայեցի դէպի այն դուռը որ տանում էր կանանց բաժինը և որտեղից լսուեցին ձայները, տեսայ կնոջս իր բոլոր աղախիններով, որոնք եկել էին այնտեղ վկայելու ինձ դէմ: Դիւահարների պէս՝ նրանք ճշում, աղաղակում, և աղաչում էին որ ինձ շուտով հեռացնէին. կարծես թէ ես էի չար ոգին որին նրանք ուզում էին դուրս հանել տնից:

Տեսնելով որ այլևս ճար չկար ինձ համար, և որ զուրկը լինէր կռուել մի խումբ մարդկանց հետ, որոնց զօրութեան առաջ ես երբէք չէի կարող դիմանալ, որովհետեւ ես մի անտէր, անպաշտպան օտարական էի, ես կանգնեցի և սառնասրտութեամբ ասացի.

— Եթէ այդպէս պիտի լինի, թող լինի: Ես ոչ Շաքարլաբին եմ ուզում, ոչ նրա փողը, ոչ նրա եղբայրներին, ոչ նրա հօրեղբօրը, ոչ էլ որեւիցէ բան որ պատկանում է նրան: Այո, ես չեմ ուզում, որովհետեւ նրանք էլ ինձ չեն ուզում. բայց այս պիտի ասեմ որ նրանք վարուել են ինձ հետ այնպիսի մի ձևով՝ որ ամենևին պատիւ չի բերում մուսուլմանների անուանն ու դաւանութեանը: Եթէ ես մի շուն լինէի անհաւատների մէջ, նրանք ինձ հետ աւելի լաւ կը վարուէին: Ես սըրտանց հաւատում եմ, որ ինձ հարստահարողները պիտի կրեն այն պատիժը, որ դատաստանի օրը պիտի կրեն սուրբ Մարգարէին անարգողները:

Ես յետոյ զօրեղ շեշտերով արտասանեցի նրանց դէմ հետեւեալ դատապարտութիւնը, որ որքան կարողացայ՝ յիշեցի ղորանիցը:

«Նրանք պիտի հագնուեն կենդանի կրակէ հանդերձներ, որոնք պինդ կը կաշեն նրանց մարմինն: Եւման ջուր կը թափուի նրանց գլխին: Նրանց փորոտիքն ու կաշին պիտի լուծուին, և այս դրութեան մէջ նրանք պիտի ծեծուին շիկացըրած երկաթներով և հարածուին այնպիսի խաբազաններով, որոնց գնդակները կայծակներ են, և նրանց հարուածները որոտի ձայներ կը հանեն»:

Իմ համառօտ ճառից յուզուելով ու գրգռուելով՝ ես կանգնեցի սենեակի մէջտեղում և հանեցի շորերս որ պատկանում էին կնոջս կամ նրա փողովն էի գնել, և բոլորը դէն շարտեցի որպէս ապականուած իրեր: Յետոյ պահանջեցի իմ սեփական վերարկուն: Դա տրուեց ինձ, ես գցեցի վրաս և դուրս ելայ անիծելով ինձ վրայ պշնող խմբին:

Գլ. 5թ.

Հաջի Բարային փողոցում պատահում է մի դէպք, որ թեթեւացնում է նրա յուսահատութիւնը։ Նա սփոփւում է ծերունի Օսմանի խրատներով։

Դուրս ելայ փողոցը և շտապով քայլեցի առաջ առանց հասկանալու թէ ուր եմ գնում։ Կուրծքս աղմկուած էր հազարումի տեսակ մաքառող կրքերով, և ես գրեթէ այնքան կորցրել էի խելքս, որ երբ ծովի ափն հասայ, սկսեցի լուրջ կերպով մտածել թէ արդեօք աւելի խելացի բան չէ՞ր լինի եթէ ինձ գլորէի նրա մէջ։

Բայց մինչդեռ անցնում էի մի ընդարձակ հրապարակի միջով, մի դէպք պատահեց, որ թէև աննշան՝ բայց մեծ հետեւանք ունեցաւ ինձ համար, որովհետեւ դա մի նոր ուղղութիւն տուեց իմ բոլոր մտածութիւններին և փրկեց ինձ կործանուելուց։ Ես ականատես եղայ փողոցային շների այն կռիւներին մէկին, որ յաճախ պատահում է Ստամբուլի փողոցներում։ Մի շուն մտել էր շների մի ուրիշ՝ այսպէս ասած՝ հասարակութեան սահմանը, անարգել էր նրանց իրաւունքները և գողացել էր մի կտոր ոսկոր։ Իսկոյն խռովութիւն էր ծագել, բոլորը զայրացած ոտքի էին ելել, սկսել էին հաջել և հալածել էին իր սահմանը, ուր նա հանդիպելով իր ընկերների միջանիսին, նրանց հաւաքել էր իր շուրջը և վերադառնալով՝ յարձակուել էր իր հալածիչների վրայ, և հէնց այն ժամանակ երբ ես անցնում էի, նրանք սաստիկ կուռւում էին, և կռիւը ընդհանուր դարձաւ։

Մինչդեռ ես կանգնած նայում էի տեսարանին, մի միտք ծագեց գլխումս, և ես գոչեցի.— «Ալլահ իլ Ալլահ, ինչքան անքրններն են քո խորհուրդները, և նեղամիտ մարդը, կարճատես մարդը որքան քիչ պիտի տրտնջայ քո վճիռների դէմ։ Դժև, ի՞նչ Ալլահ, իմ հանդէպ ես բերում մի տեսարան, որ ինձ սովորեցնում, դաս է տալիս թէ ինչպէս պիտի ընթանամ և ցոյց է տալիս նաև, որ օգնութիւնը մօտ է նրանց՝ որոնք կարօտով փնտրում են դրան, և թէպէտ այդ դուռն ինձ սովորեցնողը մի շուն է, այնուամենայնիւ ես չեմ արհամարհիլ դրան։ Ես ինչպէս պիտի դարձանամ որևէ բանի վրայ, երբ տեսնում եմ անբաններն էլ նոյնն են անում ինչ-որ անում են բանականները։ Ես չեմ վհատուիլ։ Ես կը վերադառնամ այնտեղ՝ որտեղ գուցէ ինձ կը յաջողուի գտնել մի բարեկամ, որը իր խորհուրդներով ու փորձառութիւններով կը մխիթարի ինձ։

Այս խօսքերը մըմնջալով, ես համարեա մեքենայաբար քայլերս ուղղեցի դէպի այնտեղ, ուր ես պիտի գտնէի իմ հաւատարիմ բարեկամ և խրատաւու ծերունի Օսմանին, որը թէև տաճիկ և սոննի՝ միշտ ինձ հետ վարուել էր որպէս հայրենակից և կրօնակից: Նա ընդունեց ինձ իր սովորական հանդարտութեամբ, և երբ ես նրան պատմեցի իմ բոլոր դժբախտութիւնները, նա դուրս փչեց ծխի մի երկար քուլայ իր անբաժան չիբուխից և մի խոր հոգոց հանելով՝ բացազանչեց. «Ալլահ բէրիմ» (Աստուած ողորմած):

— Բարեկամս, ասաց նա, երբ դու այստեղ պարսիկների մօտ երևացիր քո բոլոր շքով ու փառքով, այդ րոպէից ես երկկուղ զգացի որ մի չարիք պիտի պատահէր քեզ: Դու գուցէ դեռ այնքան տարիք չունիս որ սովորած լինիս փորձով՝ թէ համեմատութիւնները որքան ատելի, զգուշի են: Դու պէտք է իմանայիր որ քեզ վիճակակից մարդիկը, որոնք ամեն օր չարչարում են մի ծխամորճ կամ մի քսակ Շիրազի ծխախոտ վաճառելու համար, չէին կարող տեսնել քեզ այդ աջող վիճակի մէջ—մի վիճակ՝ որին նրանք ամենևին յոյս չունին հասնելու: Եթէ նրանք քեզ տեսնէին միայն միքիչ աւելի լաւ վերարկուով կամ գլխարկով քան իրանցը, կամ եթէ դու միայն մէկ ձի ունենայիր, այն, ինչ նրանք էլ ունին, նրանց շատ զգալի չէր լինի քո վիճակը և շատ բան էլ չէին ասիլ նրանք: Նրանք միայն կ'ասէին որ դու իրանցից մի քիչ աւելի գործունեայ և հմուտ ես եղել, և հետեապէս աւելի աջողութեամբ ծախելով ապրանքդ՝ իրանցից աւելի երջանիկ վիճակի ես արժանացել: Բայց քանի որ դու ուզեցիր մի տեսակ յաղթութիւն տանել նրանց վրայ, քանի որ ուզեցիր քո փառահեղ զգեստով, քո սաթագլուխ չիբուխով, քո մի խումբ ծառաներով և, որ ամենից վեր էր, քո այդ ընդհանուր փառաշուք ձևերով առոչինչ համարել նրանց, նրանք, իհարկէ չէին տանիլ այդ բոլորը և հետեաբար թշնամացան հետդ ու վճռեցին ամեն ջանք գործ դնել քեզ կրկին հաւասարացնելու իրանց:

«Անկասկած, շարունակեց Օսմանը, նրանք էին որ յայտնեցին կնոջդ եղբայրներին որ դու բաղդադցի վաճառական չես, այլ մի սպահանցի սափրիչի որդի և մի ողորմելի ծխամորճավաճառ: Նրանք են անտարակոյս հասկացել որ դու երբէք չես կարող կատարել խոստումներդ, որ արել ես կնոջդ քո ամուսնական դաշնաթղթի մէջ: Նրանք են անկասկած հասկացել որ դու չունես այն ծագումը որ դու կեղծել ես ունենալ: Նրանք են, որ ստել են արածդ փայլուն պատմութիւնը քո վաճառականական գործերի վերաբերմամբ, քո առևտուրը Բո-

խարայի հետ և քո նաւերի ճանապարհորդելը դէպի Չինաստան: Եթէ դու սկզբում հանդարտ կերպով ինձ այցելէիր որպէս սպահանցի Հաջի Բաբան և ոչ որպէս տաճիկ աղա Հաջի Բաբա, ես քեզ կը նախադգուշացնէի որ շատ անպատշաճ ձեւերով աջողութիւնդ ցոյց չտայիր հայրենակիցներիդ: Բայց դէ, չարութիւնը դժբախտաբար արուել է, և այժմ ինձ մնում է միայն քեզ խորհուրդ տալ, որ անցեալի փորձից օգտուես ապագայիդ համար:

Իր խօսքը վերջացնելով, Օսմանն սկսեց կրկին ծիւսել իր չիրուխը և կրկնապատիկ ուժով ծուխը ներշնչել ու արտաշնչել:

— Ասածդ ճշմարիտ է, ասացի ես, ինչ որ եղել է՝ եղել է: Բայց այդ բոլորը մի կողմ, ես մոռուլման եմ և իրաւունք ունիմ արդարութիւն պահանջելու: Ես դեռ չեմ լսած որ մի կէն հրաժարեցնի իր ամուսնուն, թէև դրա հակառակը յաճախ է պատահում: Ես դեռ չեմ կարողացել հասկանալ թէ ինձպէս մի ճշմարիտ հաւատացեալ ինչո՞ւ պիտի հրաւիրուի մի տան մէջ և այնտեղից դուրս քշուի աւելի մեծ խայտառակութեամբ քան մի շուն, և այն էլ ինչո՞ւ—նրա համար որ մի կնոջ քմահաճոյքն է առաւօտը սիրել և երեկոյեան ատել ինձ: Այստեղ, ինչպէս և ուրիշ մահմէդական քաղաքներում կան բազմաթիւ դատաւորներ, մուֆտիներ, շէյխօլէսլամներ, ես պիտի դիմեմ նրանց, ինչո՞ւ չդիմեմ: Նրանք վարձ են ստանում գործելու, մարդկանց դատաստան անելու համար: Ի՞նչու պիտի նրանք նստեն ձեռքները ծալած և զբաղուեն միայն իրանց թէսքիներէ հետ և ուշադրութիւն չդարձնեն այս երկրում տիրող անիրաւութեան վրայ: Ինձ անիրաւութիւն են արել և ես պիտի արդարութիւն պահանջեմ:

— Տօ, խենթացել ես, հաջի, ասաց ծերունի Օսմանը. գօռւել ես, որ այդպէս ես խօսում: Դու արդարութիւն, իրաւունք, ուղղութիւն ես պահանջում իսլամ էմիրների ամենազօրեղի ալիի կնոջից և նրա ազգականներից, և միթէ դու չգիտես որ նրա երկու եղբայրները—նրա պաշտպանները Ստամբուլի ամենահարուստ և ամենազդեցիկ վաճառականներն են: Մի՞թէ, դու ձրտեղ ես ապրել, ձրտեղ ես անցկացրել կեանքդ որ դեռ չես իմացել թէ՛ նա որ ամենաշատ ոսկին ունի, ամենաշատ իրաւունքն ունի, և որ եթէ քեզպէս մէկը կանգնելու լինի մուֆտու ատեանում, և թէկուզ զուրանի ամենմի տողը, ամենմի բառը քեզ յաջող լինի, այնուամենայնիւ, եթէ դիմացդ կանգնի կնոջդ եղբայրների մէկը՝ քանի որ ոսկին էլ նրա յաջողը կը լինի, դու որքան ուզում ես դիմիր քո սուրբ գրքին,

այնքան այստեղ կողմն ընկիր մինչև ինքդ էլ, դուրանդ էլ յոգնէք և վերջն էլ արդարութիւն չի լինի քեզ, իրաւունքդ չի պաշտպանուիլ:

—Ո՛վ Ա՛լի, ո՛վ Մոհամէդ, գոչեցի ես, եթէ աշխարհը իրօք այսպէս է, այսքան անիրաւ է, ուրեմն Հաջի Բաբան իսկապէս վատ գործ է բռնել, և երանի՛, երանի՛ թէ այս բոլորից յետոյ կրկին նրան տրուէր իր ծխամորճները և նրանցով պարապէր: Բայց ո՛չ, ես չեմ կարող, չեմ ցանկանում այսպէս հեշտութեամբ ձեռքից տալ ամեն բան, զրկուել ամեն իրաւունքից: աւելի լաւ է որ գնամ, բարձրանամ կտուրը և այնտեղից մարդկանց յայտնեմ իմ դժբախտութիւնները:

Այս ասելով, ես դառն յուսահատութեամբ սկսեցի լալ, հեծել և դուրս տալ մօրուքիս միջանի մագեբը:

Օսման աղան աշխատեց սփոփել ինձ, աշխատեց որ ես հայեացք ձգէի իմ անցեալ կեանքի վրայ, և ինձ յիշեցրեց մեր արկածները, մեր դժբախտութիւնները որոնց մենք պատահել էինք թիւրքմէններէ մէջ:

—Ալլահն ամենողորմ և ամենակարող է, ասաց նա: Մեր ճակատագրերը գրուած ու կնքուած են նրա գրքի մէջ. ուստի մեզ մնում է միայն անձնատուր լինել նրան:

—Բայց ես պարսիկ եմ, ասացի ես (որովհետեւ մի նոր միտք ծագեց գլխումս), այո՛, ես պարսիկ եմ և միւսլիման, ինչո՞ւ ուրեմն թոյլ տամ որ մի տաճիկ ինձ անիրաւի: Մենք էլ մի ազգ ենք, մենք ունեցել ենք Չէնգիզ, Թէյմուր և Նադիր, որոնք իրանց զօրութեամբ մեր անունը յարգելի դարձրին ամբողջ աշխարհում և այրեցին տաճիկներէ հայրերին: Ես կ'որոնեմ մեր դեսպանին, կը գնամ նրա մօտ, կը դիմեմ նրան, և եթէ նա մարդ է, կը պաշտպանի ինձ, կը պահանջի որ արդարութիւն լինի ինձ: Այո՛, ես կը տեսնեմ նրան, և նա յետ կ'առնի կնոջս և կը յանձնի ինձ. ճ, ինչ լաւ կը լինի, և յետոյ մենք կը տեսնենք թէ ո՛վ է կարող կնոջս յետ առնել, բաժանել ինձանից:

Այս միտքն այնքան ոգևորեց ինձ, որ ես էլ չսպասեցի լսելու Օսմանի կարծիքը, այլ իսկոյն դուրս ելայ և ուրախ սրտով հեռացայ՝ գնալու մեր արքայից արքայի ներկարացուցչի մօտ, որը բարեբախտաբար նոր հասել էր Բարձրագոյն Դուռը կատարելու նրա յանձնարարութիւնները:

ԳԼ. ԿԳ.

Հացի Բարան աշխատում է բաւականութիւն ստանալ իր Թշնամիներից:—
Նա մի բարեկամ է գտնում:—Մի հակիրճ նկարագրութիւն Միրզա Ֆի-
րուզի մասին:

Հետաքրքրուելով՝ տեղեկացայ, որ պարսից դեսպանն իր
բնակարանն հաստատել էր Սկուտարում, դէպի ուր ես ճա-
նապարհուեցի նաւակով, երջանիկ զգալով ինձ, որ մինչև այն-
տեղ հասնելս ես բաւական ժամանակ կ'ունենայի դասաւորե-
լու իմ մտքերը՝ մի կանոնաւոր և զօրեղ գանգատ ներկայա-
ցընելու դեսպանին:

Երբ ցամաք իջայ, ես հետաքրքրուեցի նրա տան ինչ տեղ
գտնուելու մասին, դէպի ուր տանող ծառուղիներում խոնուած
էին նրա բազմաթիւ ծառաները, որոնք իրանց շատախօսու-
թեամբ և արագաշարժութեամբ ինձ յիշեցրին հայրենիքս՝ որ
շատ տարբեր էր այստեղից:

Պարսիկներն իմ խօսելուց իսկոյն հասկացան, որ ես ի-
րանցից էի, թէպէտ ես ծպտուած էի: Առանց դանդաղելու
նրանք խոստացան իսկոյն ինձ ներկայացնել իրանց աղային:
Ես շատ ցանկանում էի, նախ քան դեսպանին ներկայանալս՝
մի քիչ տեղեկութիւն ստանալ նրա բնաւորութեան մասին,
որպէսզի իմանայի թէ նրա հետ ինչ կերպ պիտի խօսել. ուս-
տի, սկսեցի խօսակցել նրա ծառաներից մէկի հետ, որը առանց
երկրայութեան կամ վերապահութեան տուեց ինձ իմ ցանկա-
ցած տեղեկութիւնները:

Նրանից ես իմացայ, որ պարսից դեսպանը Միրզա Ֆի-
րուզ անունով մի շիրազցի էր: Նա իր հօր կողմից մի պա-
տուաւոր՝ բայց ոչ շատ ազնիւ ընտանիքից էր, իսկ մօր կող-
մից՝ շատ ազնիւ գերդաստանից էր, որովհետև նրա մայրը այն
նախկին մեծագոր մեծ վէզիրի քոյրն էր, որի միջոցով Շահը
դահ էր նստել: Միրզա Ֆիրուզն ամուսնացել էր իր մօրեղբօր
աղջկայ հետ, որի շնորհիւ կառավարութիւնը նրան բարձր
պաշտօն էր տուել: Նրա անցեալ կեանքը շատ ելևէջներ էր
ունեցել, որոնք հարկադրել էին նրան ճանապարհորդութիւն-
ներ անել դէպի զանազան երկրներ, և որովհետև նա շատ եր-
կրներ էր տեսել, Շահը հաճեցել էր նրան ընտրել որպէս ներ-
կայացուցիչ:

—Նա շատ սրամիտ, հասկացող և հանճարեղ մարդ է, ա-
սաց ինձ հետ խօսող ծառան: Նա շատ դիւրագրգիռ, շատ զայ-

բացկոտ մարդ է, բայց շատ շուտով ողորդուող և շողորթութուող է, և շատ փափկասիրտ ու ներողամիտ է, թէպէտ սկզբում, երբ նա բարկանում է, խիստ բռնութիւն է գործ դնում։ Նա օժտուած է ճարտար և պարտեցնող լեզուով, որի շնորհիւ նա կարողանում է հեշտութեամբ ազատուել նեղ գրութիւնից, որի մէջ նա յաճախ ընկնում է իր լեզուն անխոհեմութեամբ գործածելով։ Նա երբեմն շատ բարի է, երբեմն էլ, ընդհակառակը խիստ, անգութ դէպի իր ծառաներն ու հետևորդները։ Նրբեմըն նա թոյլ է տալիս նրանց՝ անելու և անելու ինչ որ նրանք ուզում են, իսկ երբեմն էլ շատ սառնասրտութեամբ նրանց հեռու է պահում իրանից։ Բայց ընդհանրապէս նա դուրամատչելի է, լաւ վարմունք ունի և շատ էլ ուրախ և ընկերասէր մարդ է։

Այսպէս էր այն մարդը, որի մօտ առաջնորդուեցի ես։ Նա նստած էր մի անկիւնում պարսկական սովորութեան համեմատ։ Ես հնարաւորութիւն չունեցայ ստուգելու նրա հասակի բարձրութիւնը, սակայն նրա գլխից մինչև գոտատեղին շատ վայելչակազմ էր։ Նրա գլուխը լաւ համաչափութիւն ունէր ուսերի հետ, որոնք մի թեթև կորագծով կպած էին վզին։ Նրա զգեստը՝ որ պինդ կպած էր մարմնին, օժանդակում էր նրա կուրծքի լայն երևալուն։ Նրա երեսը, ամենագեղեցիկն էր, որ ես տեսել էի իմ հայրենակից եղբայրների մէջ։ Նրա քիթը արծուային էր, աչքերը՝ մեծ և փայլուն, ատամներն ու բերանը շնորհալի և մօրուքը այնքան գեղեցիկ էր, որ տեսնողների նախանձն էր գրգռում։ Վերջապէս, հշոք նրանից աւելի յարմար չէր լինի ներկայանալու մի օտար երկրում, որպէս նմուշ պարսիկների։

Ճշմարիտ հաւատացեալների սովորութեան համեմատ միմեանց ողջունելուց յետոյ՝ նա ասաց.

— Դու իրանցի ես։

— Բալի, պատասխանեցի ես։

— Ուրեմն, ինչո՞ւ ես օսմանլիի կերպարանք ստացել, հարցրեց նա։ Փառք Ալլահին, մենք մի թագաւոր և մի երկիր ունենք, որ մեր պարծանքն են, և որոնց անունից հշոք չպիտի ամաչի։

— Բալի, պատասխանեցի ես. ձեր հրամայածները ճշմարիտ են, և ես չնից աւելի ստոր արարած եմ դարձել, քանի որ տաճկի կերպարանք եմ ստացել։ Այն օրից, երբ ես ընկայ այս զգուելի, գարշելի ժողովրդի մէջ, ես դառն օրեր եմ անցրել, և այժմ իմ միակ ապաւէնն է Ալլահն՝ երկնքում և դուք՝ երկրիս վրայ։

—Այդ ի՞նչպէս, միթէ մի բան է պատահել քեզ. խօսիր, ասաց նա: Արդեօք մի սպահանցի (շեշտերիցդ յայտնուում է) որ դու սպահանցի ես) խաբուել, յաղթուել է մի տաճկից: Դա յիրաւի շատ զարմանալի է: Մենք այսքան հեռու ճանապարհ ենք եկել, որ նրանց մեր աղտեղութիւնն ուտեցնենք և ոչ թէ ուտենք նրանցը:

Նա պատմեցի նրան իմ բոլոր արկածները սկզբից մինչև վերջ: Նա շատ հետաքրքրութեամբ լսում էր պատմութիւնս, և երբ հասայ ամուսնութեան խնդրին, նա շատ զուարճացաւ. մանաւանդ երբ նա լսեց թէ ես ի՞նչ մահր էի խոստացել կնոջըս, նա այնքան քահ-քահ ծիծաղեց, որ թուլացաւ: Նա մեծ զուարճութիւն պատճառեցի նրան պատմելով թէ մենք ինչպէս խնջոյք էինք տուել կնոջս ազգականներին, թէ նրանք ինչքան յարգանքով էին վերաբերուել դէպի ինձ, թէ ես ի՞նչ փառք ու մեծութիւն էի վայելել ևայլն: Որքան աւելի էի խօսում իմ խաբեայութիւնների մասին, որոնցով ես խաղ էի արել այդ տաճիկ կովերի հետ, ինչպէս նա անուանում էր նրանց, այնքան աւելի նա հետաքրքրութեամբ էր լսում իմ պատմութիւնը, որը նա յաճախ ընդհատում էր բացազանչելով. — «Ա՛յ բարեբալլահ, բարեբալլահ, ո՛վ սպահանցի, ո՛վ խորամանկ սպահանցի: Ալլահը վկայ, որ դու լաւ խաղ ես արել. ես դրանց աւելի լաւ խաղ չէի կարող անել»:

Բայց երբ նրան պատմեցի թէ ի՞նչպէս էին վարուել հետս, երբ նկարագրեցի այն տեսարանը, որ տեղի էր ունեցել իմ տընում և պատմեցի թէ աղախիններս ու կնոջս ազգականները ի՞նչպէս էին ծաղրել ինձ և ինչ խօսքերով էին ինձ խայտառակել, և երբ ես ցոյց տուի թէ ի՞նչ դէմքով, ի՞նչ դիրքով և ի՞նչ խօսքերով էի հեռացել առանց մի համակրող ունենալու, այո՛, երբ այդ բոլորը նա լսեց, նրա սրտի ուրախութիւնն այն աստիճանին հասաւ, որ մօտ էր նրա ճակատի երակները տրաքուէին. ծիծաղի ուժից նա սկսեց թաւալուել իր դիմանի վրայ:

—Բայց, ո՛վ աղահ, հաճեցէք ի նկատի ունենալ իմ վիճակը: Փոխանակ վարդեղէն անկողնու, որի վրայ ես քնում էի, այժմ մի բարձ էլ չունիմ, որ գլուխս վրան դնեմ: Գալով ձիերիս և այն թաւշապատ թամբին, որի վրայ ես նստում էի, ես այժմ երջանիկ կը լինեմ, եթէ մի էջ ունենայի, մի էջ միայն՝ որ իմ սեփականութիւնը լինէր: Եւ երբ յիշում եմ վայելչութիւնները, իմ մեծագոյն հանդերձները, իմ գեղեցիկ ձիերը, իմ ծառաների խումբը, իմ սրճի բաժակները—մի խօսքով—ինչ ասեմ—այն բոլոր բաները, որ մարդ կարող է ցանկանալ, այո՛, երբ յիշում եմ այդ ամենը և տեսնում եմ, որ այս րոպէիս ես մի

թշուառ մուրացկան եմ դառել, անխ, երևակայեցէք, թէ հոգիս ի՞նչպէս է խռովում և ի՞նչ տխուր, տխուր յիշողութիւններ են զարթնում իմ մտքումս—յիշողութիւններ, որոնք ձեր սրտում չգիտեմ ինչ՝ բայց իմ սրտում միևնոյն ժամանակ ծիծաղ են յարուցանում:

—Բայց այդ տաճիկները, այդ հեղգ, այդ ապուշ գոմէշները, որոտաց նա շարունակելով իր բարձրաձայն ծիծաղը—բայց այդ թանձրամիտ գոմէշները... հա, հա, հա... Փանօք Ալլահին, ես այժմ տեսնում եմ նրանց՝ իրանց երկար մօրուքներով, մեծ գլխարկներով, դատարկ գլխներով, տեսնում եմ նրանց հաւատալիս՝ այն բոլոր խօսքերին՝ որ պարսկաստանցի հնարագէտ խենթը աւոււմ է նրանց, և ես վստահ եմ, որ նրանք կը շարունակէին հաւատալ նրան, եթէ նրանց աչքերը բանար մի ուրիշ պարսկաստանցի խենթ:

—Բայց, շարունակեց նա, ես ի՞նչ եմ անելու քո խնդրում, հարցրեց նա: Ես ո՛չ հայրդ եմ, ո՛չ հօրեղբայրդ, որ իրաւունք ունենամ միջամտելու և հաշտեցնելու կնոջդ աղգականներին. ո՛չ էլ դադի եմ, որ կարողանամ դատել ձեզ:

—Ո՛չ, պատասխանեցի ես, բայց դուք իմ պաշտպանն էք այստեղ, և երկրիս վրայ ապրող Ալլահի փոխանորդի ներկայացուցիչն էք: Դուք կարող էք պահանջել, որ արդարութիւն լինի, իմ իրաւունքը ոտնակոխ չլինի և թոյլ չտաք, որ ինձպէս մի օտարական հարստահարուի այստեղ:

—Բայց դու կը ցանկայիր յետ ստանալ կնոջդ, ասաց նա, և կեանքդ մահուան վտանգի ենթարկել: Ի՞նչ օգուտ կ'ունենայ բոլոր հարստութիւնդ, եթէ մի օր դրան ձեռք բերելուց յետոյ, դու մեռած գտնուիս անկողնումդ: Ո՛չ, ո՛չ, դու ինձ լսի՛ր, լսի՛ր իմ բարի խորհուրդը: Հանի՛ր, մի կողմ շարտիր այդ տաճկական շորերդ, վերստին պարսիկ դարձի՛ր, և երբ դու կը ստանաս քո պատշաճ ընաւորութիւնը՝ ես քեզ ի նկատի կ'ունենամ և կ'աշխատեմ մի բան անել քեզ համար: Դո պատմութիւնը շատ հետաքրքիր էր ինձ համար, քո հանճարն ու վարքը հաճելի են, և հաւատաւ ինձ, որ աշխարհում մարդ կարող է շատ աւելի լաւ բաներ անել, քան նստել ամբողջ օրը և անդադար ծխել. միևնոյն ժամանակ բացի վարդեղէն անկողնում քնելու և մի պարարտ ձի հեծնելու ցանկութիւնից՝ ուրիշ իղձ, նպատակ ունենալ կեանքում: Առայժմ դու կարող ես ապրել այստեղ և քեզ համարել, որպէս իմ ծառաներից մէկը: Ի՞նչ ժամանակ որ ես ցանկութիւն կ'ունենամ ուրախանալու, զուարճանալու՝ քեզ մօտս կը կանչեմ, և դու կրկին ինձ համար կը պատմես քո պատմութիւնը:

Դեսպանի այս խօսքի վրայ ես մօտեցայ նրան, համբուրեցի նրա ծունկը, որպէս նշան համաձայնութեան, և հեռացայ, հազիւ հասկանալով թէ ինչ քայլ պիտի անել իմ գործերի այս անորոշ դրութեան միջոցին:

Գլ. 50.

Հստի Բաքան օգնում է դեսպանին, որը մտերմաբար յայտնում է նրան իր գաղտնիքները:

«Կարիքը, այսպէս է ասում բանաստեղծը, նման է մի հզօր ձիաւորի, որը իր սուր ասպանդակներով պարտաւորացնում է իր ողորմելի ձիուն անել այն՝ ինչ որ զօրեղ ձին երբէք չի անել»:

Ես յուսահատուած՝ նեղացած ու վշտազնած էի: Ուրախ և երջանիկ կեանք ունենալու յոյսն ի դերեւ էր ելել, և ես մի անգամ ևս ստիպուեցի գործ դնել իմ խելքն ու հնարագիտութիւնը՝ ազատելու ինձ սովամահ լինելուց:

«Եթէ, մտտացի, ես կորցրել եմ մի տուն, դրա դիմաց գտել եմ մի բարեկամ: Ես չպիտի արհամարհեմ նրա խոստացած պաշտպանութիւնը, և նոյն զօրեղ ճակատագիրը, որ ինձ քայլ-քայլ առաջնորդել է կեանքի լաբիրինթոսի միջով, անտարակոյս դարձեալ ձեռքս կը բռնի և, գուցէ ի վերջոյ անվտանգ կը հասցնի այնտեղ՝ ուր ես այլևս չեմ վարանիլ, չեմ շփոթուիլ և չեմ կորցնել այն շաւիղը, որով ես պիտի գընամ»:

Ես վճռեցի յաճախ ներկայանալ դեսպանին: Բարեբախտաբար ես նկատեցի, որ նրա՝ սկզբում ինձ ցոյց տուած սէրն ու համակրանքը զգալապէս, և աստիճանաբար շատանում էր վեր յաջորդական տեսակցութիւնների ընթացքում: Նա սկսեց ինձ ծառայեցնել, որպէս միջոց՝ տեղեկութիւններ հաւաքելու, և թղաթօրէն խօսակցում էր հետս իր կառավարութեան և դեսպանութեան հետ կապ ունեցող բոլոր գործերի մասին:

Որովհետեւ ամբողջ կեանքումս ես զբաղուել էի միմիայն իմ անձնական գործերով և հարստանալու ջանքերով՝ շատ բիշ ուշադրութիւն էի դարձրել հասարակական գործերի վրայ: Պարսիկ և տաճիկ ազգերից գատ ուրիշ ազգեր չէի ճանաչում աշխարհում: Ես լսել էի չինաստանցի, հնդկաստանցի, աֆղան, թաթար, բիւրդ և արաբ անունները, բայց նրանց մասին ոչինչ չգիտէի: Աֆրիկացիների մասին մի քիչ տեղեկութիւն ու-

նէի, որովհետեւ նրանց զանազան տեսակներէցը եւ տեսել էի որպէս ստորուկներ մեր տներու: Ֆրանսիացիները միայն ուռններին (եթէ նրանք ֆրանսիացիներ են կոչուած) էինք ճանաչում, որոնցից տեսել էինք Պարսկաստանում: Մենք լսել էինք նաեւ ինգլիզ ու ֆրանսիացի անուանները: Երբ եւ Ստամբուլ հասայ, շատ զարմացայ, երբ լսեցի որ բացի վերոյիշեալ երեք ազգերից՝ շատ ուրիշ ֆրանսիացիներ եւ գոյութիւն ունէին. բայց դարձեալ իմ անձնական գործերով զբաղուած լինելով՝ շատ չհետաքրքրուեցի նրանց մասին:

Այժմ որ եւ վայելում էի դեսպանի ընկերակցութիւնը, մտքերս մի նոր ուղղութիւն ստացան: Եւ լսում էի շատ խնդիրների մասին տեղի ունեցող վիճաբանութիւնները, և ինչքան շատ էի լսում, այնքան շատանում էր հետաքրքրութիւնս: Ինձ յայտնուեց, որ յանձին իմ՝ դեսպանը գտել էր մէկը՝ որ շահագրգռուած էր իր հայեացքներով. և այդ համոզմամբ նա վերջապէս յայտնեց ինձ իր բոլոր դադանքները:

Մի առաւօտ նա միքանի նամակներ ստացած լինելով արքունիքից՝ ինձ իր մօտ կանչեց և յայտնեց, որ ինքը ցանկութիւն ունէր մի առանձին խօսակցութիւն ունենալ հետս: Նա հրամայեց, որ ամեն մարդ հեռանայ իր ներկայութիւնից, և ինձ նստել հրամայելով՝ ցած ձայնով ասաց.

— Հաջի, երկար ժամանակ է, որ եւ ցանկութիւն ունիմ հետդ առանձնապէս խօսելու: Իմ հետևորդները խմբի մէջ—խօսքը մեր մէջ մնայ—չկայ մէկը, որ ունենայ ինձ հարկաւոր եղած խելքն ու հասկացողութիւնը: Զշմարիտ է, նրանք բոլորն էլ պարսիկ են և օժտուած են աւելի մեծ հանճարով՝ քան աշխարհի բոլոր մարդիկը, բայց նրանք ոչինչ չեն հասկանում ղոլլաթի (կառավարութեան) գործերից: Նրանք աւելի փչացնում, խափանում են՝ քան առաջ են տանում այդ գործերը, որոնց համար եւ ուղարկուել եմ այստեղ: Դու, իհարկէ, մի մարդ ես՝ որ տեսել եւ աշխարհը և շատ փորձառութիւն ունիս, և եւ յոյս ունիմ, որ ձեռքիցդ մի բան կը գայ: Դու մի մարդ ես, որ կարող ես խաղ անել ուրիշի մօրուքի տակ, և կարող ես որեւէ գործի ծուծը ծծել առանց դիպչելու դրա դրսի կողմին: Քեզ պէս մէկին կարիք ունիմ ես, և եթէ դու քեզ կը նուիրես ինձ և մեր Շահին—արջայից արջային՝ երկուսս էլ ժամանակին պարգեւս կը լինինք ու մեր բարի ճակատագրի օգնութեամբ՝ երկուսիս գլուխն էլ կը դիպչի երկնքի աստղերին:

— Ինչքան որ ուժերս կը ներեն, պատասխանեցի ես, պատրաստ եմ ծառայելու ձեզ: Եւ ձեր ստորուկն եմ, ձեր ծառան եմ, և իմ ձեռքով աշխատեմ ձեր ձեռքը կը դնեմ: Պատուիրեցէ՛ք

ինձ, հրամայեցէք ինձ, ես պատրաստ եմ գլխով ու աչքով ծառայելու ձեզ:

— Թերևս դու լսած կը լինիս աշխարհում տարածուած այն լուրը, ասաց նա, որ իմ դեսպանութեան նպատակն է ստրկուհիներ գնել Շահի համար և նրանց կրթել տալ պարի, երաժշտութեան և ասեղնագործութեան արհեստների մէջ, և գնել նաև մետաքսեղէն և ուրիշ պաճուճանքներ հարեմի համար. բայց, իհարկէ, այդ բոլորը ժողովրդի աչքը կուրացնելու համար է: Ես դեսպան չեմ դարձել այդպիսի չնչին գործերի համար. ոչ, ես շատ կարևոր գործերի համար եմ եկել: Գիտե՞ս, մեր Շահը կարող է շատ խորը թափանցել իրերի դրութեան մէջ. ասանց հիմնաւոր փաստեր ունենալու՝ նա մարդիկ չէ ընտրում վարելու իր գործերը: Նա շատ լաւ է հասկանում ու ընտրել. բաւական է որ նա ինձ է ընտրել... այժմ դու ականջ դիր ինձ և տես քեզ ինչ եմ ասելու:

— Սրանից մի քանի ամիս առաջ, Եւրոպայից մի դեսպան հասաւ Թէհրան-Կայսրութեան դուռը: Նա ասաց, որ ինքը ուղարկուել էր մի ինչ որ Բունապուրտ անունով մէկի կողմից, որը իրմէն Ֆրանսացիների կայսրն է կոչուած, և որը միքանի ընծաներ ու մի նամակ էր ուղարկել Շահին մատուցանելու: Իր խօսքերով՝ նա ցոյց տուեց, որ իրան լիազօր իրաւունք էր տրուած դործելու—իրաւունք՝ որով նա պահանջում էր իր խօսքերն ու գործերն ընդունել, որպէս իր աղայինը: Նա նաև յայտնեց, որ իրան լիազօր արտօնութիւն էր տրուած մի դաշն կապելու մեր տէրութեան հետ: Նա իսկապէս իրան շատ բարձր էր պահում և խօսում էր. միւս Ֆրանսացիների մասին այնպէս՝ որ կարծես նրանք իր ոտի տակի փոշին լինէին, և մինչև անգամ ասում էր, որ նրանք ոչմի անուան արժանի չեն: Նա խոստացաւ ստիպել ուսանելին մեզ յետ տալու Վրաստանում նրանց տիրած հողերը և կրկին Շահի սեփականութիւնը դարձնել Թիֆլիսը, Բաղդադը, Դէրբէնդը ու այն ամենը, որ առաջները Պարսկաստանին էին եղել: Նա ասաց, որ ինքը պիտի տիրէր Հնդկաստանը մեզ համար և անգլիացիներին դուրս քշէր այնտեղից: Մի խօսքով նա խոստացաւ ամենայն պատրաստակամութեամբ շնորհել մեզ այն ամենը՝ ինչոր մենք կամենայինք:

«Արդ, շարունակեց նա, ճշմարիտ է, մենք առաջ էլ լսել էինք Ֆրանսացիների մասին և գիտէինք որ նրանք լաւ հանդերձեղէն ու մեծագին ղիպակ (brocade) պատրաստողներ են, բայց դեռ երբէք չէինք լսել, որ նրանք կարող են կատարել այս դեսպանի բոլոր ասածները: Մենք մի բան էլ լսել էինք. այն է նրանց՝ Եգիպտոսի վրայ յարձակուելու մասին, որովհետև այդ

յարձակման հետևանքն այն եղաւ, որ սուրճն ու հինան թանկացան Պարսկաստանում: Մեր ծերունի խաներից մէկն էլ, որ սէֆի գերդաստանիցն է, յիշում է, որ Ֆրանսացի մի ինչոր Շահ Լուի՝ մի դեսպան էր ուղարկել Շահ Սուլթան Հոսէյնի պալատը, բայց, թէ՛ ո՞վ է այս Բունապուրտ կոչուածը և ինչպէս է նա Շահ դարձել՝ Պարսկաստանում ոչոք չկարողացաւ բացատրել:

«Հայ վաճառականները, որոնք գնում են բոլոր երկրները, ասացին, որ իրանք լուր ունէին այդպիսի մի մարդու գոյութեան մասին, և որ այդ անձը մեծ խռովութիւնների գլխաւոր հեղինակն է: Վերջապէս հայ վաճառականների ասածն ու միջանի հանգամանքներ ստիպեցին Շահին ընդունել նրա ուղարկած դեսպանին, բայց թէ վերջինիս ներկայացրած թղթերը (որ գրուած էին այնպիսի տառերով՝ որ ոչոք չէր կարող կարդալ) կեղծ էին թէ՛ չէ՞, կամ թէ՛ նրա ասածները տեղին էին՝ ոչոք չէր կարողանում հասկանալ: Մեր վէզիրները, մեծ ու փոքր, ոչինչ չէին հասկանում: Մեր Շահը՝ (Ալլահը պահանի նրան) որ գիտէ արեւի տակ գտնուող ամեն բան, ոչինչ չէր իմանում այդ խնդրից, և բացի մի խոջա Աբէդ անունով հայից՝ որը եղել էր Ֆրանսիայի Մարսէյլ քաղաքում, ուր նա քառասուն օր բանտարկուել *) էր և բացի ներսէս անունով մի ուրիշ հայ կրօնաւորից, որը կրթուել էր այդ կողմի երկրների մէկում գտնուող մի դէրվիշների (վարդապետների) վանքում — այո, այդ երկու հայից զատ, ուրիշ մէկը չկար թաղաւորաց թագաւորի պալատի դրան՝ որ կարողանար մի բան հասկացնել մեզ կամ ամենաթեթեւ կերպով բացատրել, թէ արդեօք այդ Բունապուրտը կամ նրա ներկայացուցիչը խաբեբանէր էին, թէ՛ չէ, արդեօք նրանք եկել էին մեր գլխարկները վերցնելու մեր գլխից, թէ՛ բարեբախտութեան խալալթներ պատույ ըզգեստներ՝ հագցնելու մեզ:

«Ինչեւէ մենք երկար չմնացինք կասկածանքների մէջ, որովհետեւ երբ Հնդկաստանի և Պարսկաստանի մէջ վաճառականութիւն անող ինգլիզ անհաւատները, որոնցից միքանիսը ապրում են Արուշահրում, լսեցին այդ դեսպանի թէհրան հասնելու լուրը, իսկոյն պատգամաւորներ, նամակներ և մի գործակալ ուղարկեցին, որպէսզի նրանք աշխատէին խափանել այս Ֆրանսացի դեսպանի ընդունելութիւնը: Նրանք այնպիսի արտակարգ ջանքեր արին արգելք դառնալու նրա աշողութեանը

*) Քառասուն օրուան բանտարկութիւնը՝ մենք կարծում ենք կարանալիս է նշանակում:

որ մենք շուտով տեսանք, որ այդ երկու հակառակորդ շներին շատ բան դուրս կը դար մեզ համար:

— «Երբեք եմ թագովս, ասաց Շահը, որ այս բոլորը գալիս են իմ բարի աստղի շնորհիւ: Մինչդեռ ես այստեղ նստած եմ իմ գահիս վրայ, պիտի շան լակոտները գալիս են հիւսիսից և հարաւից, արեւելքից և արեւմուտքից՝ և ինձ համար մեծ մեծ ընծաներ են բերում, գահիս ոտների ներքև վիճելու և կռուելու ազատութիւն գտնելու համար: Յանուն Մարգարէի թող նրանք մօտենան:

«Կայսերական դռնից իմ հեռանալու ժամանակ՝ մի դեսպան էր սպասում ինգլիզների կողմից, և այս նամակների մէջ, որ հէնց նոր ստացել եմ, մանրամասնօրէն գրուած է, թէ նա՝ այդ դեսպանը իրան ընդունելութիւն տալու համար՝ ինչ առաջարկութիւններ է արել. բայց շահը չէ կարող ընդունել այդ առաջարկութիւնները մինչև ինձանից նամակ չստանայ: Նա գիտէ, որ Մտամբուլում տեսնում են օրինակներ Եւրոպայի բոլոր ազգերից, իւրաքանչիւրը ունենալով իր դեսպանն այստեղ. ուստի նա իր իմաստութեամբ յարմար է դատել ինձ ուղարկել այստեղ, հաւաքելու այն բոլոր տեղեկութիւնները, որ մեզ շատ հարկաւոր են, որպէսզի մենք կարողանանք փարատել այն կասկածները, որ Պարսկաստանում մենք ունենք Ֆրանսացիների և ինգլիզների մասին, և եթէ կարելի լինի՝ ստուգել թէ արդեօք ինչ որ նրանք իրանց մասին խօսում են՝ սրտւոյն է, թէ՞ ճշմարիտ:

«Արդ, հաջի, ես միայն մէկ մարդ եմ, և ինձ յանձնուած գործը մի գործ է, որ, ինչպէս ես տեսնում եմ, բաւական է յիսուն մարդու համար: Փրանզները բաղկացած են շատ շատ ազգերից: Դեռ մէկ խոզի անունը չլսած՝ մարդ մի ուրիշի խանչիւն է լսում, յետոյ մի ուրիշինը և ուրիշինը՝ մինչև մարդ տեսնում է, որ նրանցից մի ամբողջ երամակ կայ: Ինչպէս քիչ առաջ էլ ասացի, իմ հետևորդներն այնպիսի մարդիկ չեն, որ կարողանան օգնել ինձ իմ հետաքրքրութիւնների մէջ, և իմ աչքը քո վրայ է: Ես մեծ ակնկալութիւններ ունիմ քո ջանքերից: Դու պիտի ծանօթանաս միջանի անհաւատների հետ: Դու հասկանում ես տաճիկերէն, և կարող ես նրանցից՝ տաճիկներից շատ բանել իմանալ, որ մեզ հարկաւոր են: Ես քեզ կը տամ մի օրինակ այն հրահանգից, որ Շահն ինձ ուղարկել է: Իհարկէ դու խիստ ծածուկ կը պահես այդ հրահանգները. դրանք քեզ կ'առաջնորդեն, որպէս ուղեցոյց, մեր նպատակին հասնելու համար: Եւ մինչև այդ, դու գնա, նստի՛ր մի անկիւնում և երկար ու բարակ մտածիր, թէ մենք ինչ ծրագրով պիտի գործենք:

Այս ասելով, նա արձակեց ինձ, և ես հեռացայ նրա մօտից կեանքի ասպարիզում յառաջադիմելու նոր յոյսերով:

Գլ. 56.

Հաջի Բաբայի առաջին փորձերը հասարակական կեանքի մէջ:—Թէ նա ինչ ծառայութիւն է անում պարօրից դեսպանին:

Երբ դեսպանն ինձ յանձնեց իր վաքայէնամէյի օրինակը, ես իսկոյն հեռացայ և դնացի մերձակայ գերեզմանանոցը՝ այնտեղ կարդալու առանց խանգարուելու: Ես զգուշութեամբ ծալեցի թուղթը և պահեցի գլխարկիս աստառի տակ, և քանի որ առաջին անգամն էր, որ ես մտնում էի հասարակական գործերի մէջ, դրա բովանդակութեան գլխաւոր մասերը այնպէս տպւորուեւ եմ իմ մտքում, որ ես երբէք չեմ կարող մոռանալ նրանց:

Այդ թղթի մէջ, նախ պատուիրուած էր դեսպանին ճշտութեամբ ստուգել Ֆրանգստան կոչուած երկրի տարածութիւնը և իմանալ թէ արդեօք այն Շահը, որը Պարսկաստանում յայտնի է Շահէ Ֆրանզ (Ֆրանգների թագաւոր) անունով, իսկապէս գոյութիւն ունի՞ և ո՞րն է նրա մայրաքաղաքը կամ աթոռանիստը:

Երկրորդ՝ նրան հրամայուած էր ստուգել, թէ ֆրանգները քանի իլերի (ցեղերի) են բաժանուած, և արդեօք նրանց մէջ էլ շահրնէշին ու սահրանէշին՝ այսինքն քաղաքաբնակ և անապատաբնակներ կան, ինչպէս Պարսկաստանում, և թէ հիւքեր են նրանց խաները և ի՞նչպէս են նրանք կառավարուում:

Երրորդ՝ իմանալ թէ հրքան է Ֆրանսայի տարածութիւնը, և արդեօք ֆրանսացիք ֆրանգների մի ցեղն են՝ թէ՛ մի առանձին ազգ են, և հիւ է այդ անհաւատ Բունապոլտը, որ իրան այդ երկրի կայսրն է կոչում:

Չորրորդ՝ նրան պատուիրուած էր իր ուշադրութիւնը դարձնել մասնաւորապէս այն բաների վրայ՝ որոնք կապ ունեն ինգլիզների հետ, որոնք երկար ժամանակից ի վեր Պարսկաստանում յայտնի են իրանց մահուղներով, ժամացոյցներով և գրչահառներով: Նա պիտի իմանար թէ ինգլիզները ինչ տեսակի անհաւատներ են, թէ արդեօք ամբողջ տարին նրանք ապրում են մի կղզում առանց ունենալու մի որևէ ղիշլաղ (տաք վայր, ձմեռնոց) այնտեղ գաղթելու ձմեռը: Թէ արդեօք նրանցից շատերը նաւերումն են բնակուում և կերակրում ձկներով, և եթէ իսկապէս նրանք նաւերում են ապրում՝ ապա

Թնչպէս է պատահել, որ նրանք տիրել են Հնդկաստանը: Նա պիտի լուծէր Պարսկաստանում երկար ժամանակից ի վեր արծաթծուած այն հարցը, թէ Անգլիան և Լոնդոնն թնչպէս են միացած, և թէ արդեօք Անգլիան է Լոնդոնի մի մասը, թէ Լոնդոնն է Անգլիայի մի մասը:

Հինգերորդ՝ մի ստոյգ լուր իմանալ և հաղորդել, թէ ով և թնչ է կումպանի կոչուածը, որի մասին այդքան բաներ էին ասոււմ. թէ դա թնչ կապ ունի Անգլիայի հետ, թէ արդեօք դա մի պառաւ կի՞ն է, ինչպէս երբեմն ասոււմ է, թէ մի ընկերութիւն է, որ բաղկացած է պառաւ կիներէից, և թէ արդեօք առասպել չէ՞ այն պատմութիւնը, թէ դա՝ այդ ընկերութիւնը անմահ է ինչպէս Թիրէթի Լաման: Նրան նաև պատուիրուած էր պարզել միջանի անհասկանալի պատմութիւններ Անգլիայի կառավարութեան ձևի մասին:

Վեցերորդ՝ մի ստոյգ տեղեկութիւն Եմագէ Դոնիայի (նոր-աշխարհի) մասին շատ անհրաժեշտ էր, և դեսպանը պարտաւոր էր իր ուշադրութեան մի մասը նուիրել այդ խնդրին:

Վերջապէս նրան պատուիրուած էր գրել մի ընդհանուր պատմութիւն Փոսնգնբրի մասին և հետաքննել, թէ որն է ամենահեշտ միջոցը կամ ձևը, որով կարելի լինի պարտաւորացնել նրանց, որ հրաժարուին խոզի մսից ու գինուց, և դարձնել նրանց դէպի ճշմարիտ և սուրբ հաւատը—դէպի իսլամական կրօնը:

Այս թղթի վրայ լուրջ կերպով խորհելուց յետոյ, ես տեսայ, որ ամենահեշտ բանն այն կը լինէր, որ դրա հարցերին պատասխան տրուէր մի քաթէրի (դպիր, գրագէտ) միջոցով, որը գտնոււմ էր այդ ժամանակ Ռէս էֆէնդիի ծառայութեան մէջ, և որի հետ իմ կարճատև փառքի և հարստութեան ժամանակամիջոցում՝ ես խիստ մտերմացել էի: Ես գիտէի, թէ նա միշտ ձր սրճարանն էր յաճախում, և թէ ձր ժամին էր նա սովորաբար այնտեղ լինում: Թէպէտ նա շատ սակաւախօս էր, այնուամենայնիւ ես յոյս ունէի, որ իր սուրճը խմելուց և չիբուխը ծխելուց յետոյ՝ (մանաւանդ եթէ ես հիւրասիրէի նրան), նրա սիրտը կը բացուէր և ես կարող կը լինէի նրա կարծիքները իմանալ:

Ես իսկոյն մտածածս հաղորդեցի դեսպանին, որը շատ ուրախացաւ և բացազանչեց.

—Ես քեզ չասացի, քեզ չմասցի, որ դու հանճարեղ մարդ ես: Ընդունիր ուրեմն, որ ես կորովամիտ և Թափանցող մարդ եմ. ընդունիր, որ սուր դատողութիւն է հարկաւոր իսկոյն իմանալու, թէ ով է ընդունակ մարդ: Ընդունիր, որ եթէ ես չի-

նէի, մենք ամենեւին չէինք կարող գտնել այդ քաթէքին, որը կը պատմի մեզ ամեն բան և մենք մեզ հարկաւոր եղած տեղեկութիւնները նրանից ստանալով՝ կատարած կը լինենք Տիեզերքի կենտրոնի պատուէրները:

Նա յետոյ արտօնութիւն տուեց ինձ, որ եթէ հարկաւոր համարէի, մի պարզե խոստանայի քաթէքին, որպէսզի, եթէ նա որեւէ խնդրի մասին լաւ տեղեակ չլինէր՝ աշխատէր դիմել բուն աղբիւրին՝ այսինքն Ռէս էֆէնդուն:

Յարմար ժամանակին ես գնացի սրճարանը, ուր գտայ իմ բարեկամին: Բարեկամական ջերմ զգացումների արտայայտութիւններով ես մօտեցայ նրան և ձայն տալով սպասաւորին՝ նմենի սուրճ պատուիրեցի: Ես նստայ նրա հանդէպ, սուրճը բերուեց ու մատուցուեց մեզ: Մեր խօսակցութեան միջոցին նա հանեց իր ժամացոյցը, որը ինձ առիթ տուեց հարցնելու.

— Դա եւրոպական ժամացոյց է, չէ՞:

— Այո, ասաց նա. աշխարհում էլ ուրիշ ժամացոյցներ չկան:

— Չարմանալի է, ասացի ես. այդ ֆուանդները արտակարգ մարդիկ են:

— Այո, ասաց նա. բայց նրանք գեավուրներ են:

— Բիսմիլլահ, (յանուն Ալլահի) ապացի ես, և իմ չիրուխը բերանիցս վերցնելով՝ դրի նրա բերանին: Մի բան պատմիր նրանց մասին: Արդեօք այդ ֆուանդատանը մէծ երկիր է: Ո՞րտեղ է բնակւում ֆուանդների թագաւորը:

— Ի՞նչ ես ասում, բարեկամ, պատասխանեց նա. մէծ երկիր է դու հարցնում ես: Անշուշտ դա մի մէծ երկիր է, որի վրայ իշխում է ոչ թէ միայն մի թագաւոր՝ այլ շատ թագաւորներ:

— Բայց ես լսել եմ, որ ֆուանդատանի ժողովուրդը բազմաթիւ է շատ ցեղերից, որոնք թէև ունին իրանց տարբեր անուններն ու տարբեր պետերը, այնուամենայնիւ նրանք իսկապէս մէկ ազգ են:

— Դու կարող ես նրանց մէկ ազգ կոչել, եթէ կամենում ես, ասաց նա, գուցէ այդպէս էլ է, որովհետեւ նրանք բոլորն էլ ածիւրում են իրանց երեսը, երկար մազ են պահում և գլխարկ են դնում: Բոլորն էլ նեղ՝ իրանց մարմինն պինդ կպած շորեր են հագնում, բոլորն էլ գինի են խմում, խոզի միս են ուտում և, չեն հաւատում օրհնեալ Մարգարէին. բայց պարզ է, որ նրանք կառոււարւում են շատ թագաւորներից, իբրև ապացոյց դրան, տես այն բազմաթիւ դեսպանները, որոնք խմբուել են այստեղ իրանց ճակատները տրորելու մեր կայսերա-

կան դրան սեմին: Այդ շներէց այնքան շատեր կան այստեղ և նրանք այնքան պղծուած, ապականուած են այստեղը, որ մարդ ստիպուած է իր յոյսը դնել Ալլահի ողորմութեան վրայ...

— Յանուն Մարգարէի, շարունակիր ասացի ես, դու պատմիր, ես կը գրեմ, փառք Ալլահին, դու իմաստուն մարդ ես:

Եւ ես իսկոյն գօտուա միջից հանեցի թանաք-գրչամանս և պատրաստուեցի գրել: Քաթէճն էլ շոյեց իր ժօրուքը, ոլորեց իր բեխերի ծայրերը, և սկսեց ինքն իր մտքում յիշել Եւրոպայի գլխաւոր ազգերի անունները:

Նա իր պատմելիքն սկսեց այս նախաբանով:

— Բայց դու ի՞նչու ես գլուխդ ցաւացնում: Նրանք բոլորն էլ միանման շներ են. բոլորն էլ ծնունդ են առել նոյն աղբակոյտից: Եթէ երկնքում ճշմարտութիւն կայ և եթէ մենք հաւատում ենք մեր սուրբ դօրանին, բոլորն էլ սրանից յետոյ պիտի խորովուին միևնոյն հնոցում: Բայց սպասիր, ասաց նա, իր մատները համբելով, նախ կայ նէմաէ գեաՎուր—աւատրիացի անհաւատները, մեր դրացիները, որոնք մի հանդարտ, ծխող ցեղեն: Նրանք այստեղ են ուղարկուած կտաւեղէն, պողպատեղէն և ապակեղէն: Նրանք մի Շահ ունեն, որ անհաւատների ամենամեծ ցեղիցն է, և որը մի ներկայացուցիչ է ուղարկուած այստեղ, որ մեզ մօտ հագնուի ու կերակրուի:

«Յետոյ, շարունակեց նա, այդ հերետիկոս մոսկովիտները, որոնք ամենապիղծ և ամենաանիծեալ ազգն են: Նրանց երկիրն այնքան լայնատարած է, որ մէկ ծայրն, ինչպէս ասում են, թաղուած է յաւիտենական ձեան տակ՝ և միւսը՝ այրւում է արևի տակ: Նրանք, ճշմարիտ, մեր թշնամիներն են, և երբ մենք սպանում ենք նրանց, մենք մնշալլահ ենք գոչում: Մարգիկ ու կանայք հերթով են իշխում նրանց վրայ, բայց նրանք նմանում են մեզ, քանի որ նրանք էլ մեզ պէս սպանում են իրանց վեհապետներին:

«Յետոյ, մի ուրիշ պրուսիացի անհաւատներ էլ կան, որոնք մեզ մօտ դեսպան են ուղարկում, Ալլահը գիտէ թէ ինչու, որովհետեւ մենք այդպիսի մի միջատի կարիք չունենք. բայց դու լաւ գիտես, որ կայսերական դուռը միշտ բաց է շրմերի համար ինչպէս և ճշմարիտ հաւատացեալների, որովհետեւ նախախնամութեան անձրևը միաժամանակ երկուսի վրայ էլ իջնում, թափւում է:

«Յետոյ, է՛լ ում ասեմ, յանուն Մարգարէի: Սպասիր տեսնեմ. երկու հիւսիսային անհաւատներ էլ կան, որոնք բոլոր իրերի վերջին ծայրումն են ապրում: Դրանք դանիացիք և

շուէտացիք են: Դրանք փոքրիկ ցեղեր են, որ հազիւ թէ կարող են մարդկանց կարգի մէջ դրուել, թէպէտ, ասուում է որ Դանիմարկայի Շահը՝ Ֆոանգնիւրի ամենաբռնակալ թագաւորն է, որը ենիչերիններ էլ չունի, որ հակառակին նրա կամքին: Շուէտացիք էլ անուանի են իրանց խելագարովը, որը մի անգամ պատերազմում էր Եւրոպայի հետ և շատ քիչ փոյթ էր տանում թէ ինչ երկրում էր ինքը կուում: Մի անգամ նա իր բորբոքուած ժամանակ՝ յարձակուեց մեր ափերի վրայ, բայց նա վերջը վայրենի գաղանի նման շրջապատուեց և գերի տարուեց: Եթէ այս դէպքը պատահած չլինէր, մենք (Ալլահի օրհնութեամբ) երբէք չէինք իմանայ, որ աշխարհում այդպիսի մի ազգ էլ կար:

«Մի ուրիշ ցեղ էլ կայ, որ լեհ է կոչուում: Այդ անհաւատները թմրած, դանդաղ, բիրտ մարդիկ են: Նրանք Ֆոանգնիւրի մէջ այն են, ինչ որ են հայերը մեր մէջ: Շահամուրութիւնից զատ՝ ուրիշ ոչմի բանի մասին գաղափար չունեն, և բացի հարցստանալու փառասիրութիւնից՝ ուրիշ ոչմի իղծ, ձգտում չունեն: Նրանք մեզ մօտ են ուղարկում մի թմրած, քնկոտ դեսպան, բանակցելու մեզ հետ իրանց երկրից պանիր, կարագ և աղ դրած ձուկ մտցնելու մեր երկիրը. բայց նրանց կառավարութիւնը ոչնչացել է այն օրից՝ երբ երևաց մի ինչոր Բունապուրտ անունով երևելի անձն, որը (թող նրանք և բոլոր անհաւատների պաշտպանը կրեն իրանց պատիժը) իսկական մարդ է, մի մարդ՝ որին մենք առանց քաշուելու, առանց ամաչելու պիտի անցկացնենք Պարսից Նազիրի և մեր Սուլէյմանի կարգը:

Այստեղ ես ընդհատեցի քաթէրին, և շտապով բացագանչեցի:

— Բունապուրտ, հա, Բունապուրտ, հէնց այդ բառն էի ուզում ես: Մի բան ասեմ այդ Բունապուրտի մասին, որովհետեւ ինձ ասել են, որ նա մի շատ հազուադէպ ու յանդուգն անհաւատ է:

— Ես, ասաց նա, ոչ այլ ինչ պիտի ասեմ, եթէ ոչ այն՝ որ նա մի ժամանակ ոչինչ մարդ էր, պարզ զինուոր էր, բայց այժմ մի անագին ազգի սուլթանն է, և բոլոր Ֆոանգնիւրի համար նա է օրէնքներ հաստատում: Նա իր վերջին ջանքը գործ դրեց մեզ էլ նեղելու, բայց, մեր վրայ յարձակուելուց առաջ՝ նա մոռացել էր փորձել ճշմարիտ հաւատացեալի թրի բերանը, և հետևապէս, միջանի մամալուքների մի քիչ վախեցնելուց և բէդուլիներին էլ իրանց անապատը քշելուց յետոյ, պարտաւորուեց յետ դառնալ:

—Բայց միթէ չկայ, հարցրի ես, անհաւատներ զի ուրիշ ցեղ էլ, որ ինգլիզ է կոչուում Ասում են, որ այդ ինգլիզները ամենամահասկանալի ժողովուրդն են աշխարհիս երեսին, և ընդհակառակ են մի կղզում և գրչահատներ են շինում:

—Այո, ճշմարիտ է կան, ասաց նա Դրանք այն ֆուսիզներն են, որ դարերից ի վեր ամենից շատ են տըրել իրանց ճակատները մեր կայսերական դրան սեմին, և որոնց վրայ վեհ և մեծահոգի սուլթանը ամենից շատ շնորհ ունի: Նրանք շատ հզօր են իրանց նաւերով, և ոչ ոք չէ կարող մրցել նրանց հետ ժամագործութեան և մահուդի պատրաստութեան մէջ:

—Բայց դու ի՞նչ գիտես նրանց կառավարութեան վերաբերմամբ, հարցրի ես: Արդեօք բացի մի թագաւորից, դա ուրիշ բաներից էլ է կազմուած:

—Այո, պատասխանեց նա. քեզ սխալ չեն հասկացրել, բայց ես ու դու ի՞նչպէս ենք կարող հասկանալ այդպիսի խելագարների տրամադրութիւնը: Ճշմարիտ է, նրանք մի Շահ ունին, բայց իսկապէս նրան այս տիտղոսով կոչելը՝ ծաղրել կը լինի: Նրա կերակուրը, զգեստը և բնակարանը նրա ժողովուրդն է տալիս: Ժողովուրդն է, որ նրան տարեկան ուճիկ է տալիս. Ժողովուրդն է, որ նրան ծաղրում է նոյն շողորձութեան խօսքերով և բարձր պատուանդաններով, որպիսին մինք ծաղիս ենք մեր վեհապետներին. բայց պիտի իմանաս, որ եւնիչերիների մի հասարակ աղա՝ նրանից աւելի մեծ ոյժ ունի, նա մինչև անգամ չէ համարձակուում իր վեզիրներից մէկին ֆալախկայի ենթարկել, ինչ էլ որ լինի նրա յանցանքը, այն ինչ՝ մի ենիչերի աղա, եթէ հարկ համարի, կարող է քաղաքի կէս ժողովրդի ականջները կտրել տալ, և այնուհանդերձ բացի քաջալերութիւնից ու վարձատրութիւնից՝ ուրիշ ոչինչ չստանալ:

«Յետոյ, շարունակեց նա, նրանք որոշ տներ ունին, որ լի են խենթերով, որոնք ամբողջ տարուայ մի կէսը ժողովում են վիճելու: Եթէ նրանցից մէկն ասում է սեւ, միւսը գոռում է սպիտակ, և մի հասարակ խնդիր վերջացնելու համար՝ նրանք շատ աւելի խօսքեր են վատնում, քան մեր մուֆտիներից մէկը՝ մի ամբողջ թագաւորութեան ընթացքում: Պետական ոչ մի գործ—ինչ և լինի—չի կարող կարգադրուել առանց նրանց: Դիցուք թէ հարկաւոր է մի ապստամբ աղայի գլուխը կտրել ու նրա ստացուածքը գրաւել. ոչ ոք ոչինչ չի կարող անել մինչև որ այդ խենթերը չվիճաբանեն: Յետոյ ի՞նչ ենք մենք հաւատալու: Ամենակարող և ամենիմաստ Ալլահը միջանի ազգերի իմաստութիւն է պարգևում, և մի քանի ուրիշներին՝ յիմարու-

թիւն: Թող մենք օրհնենք Նրան և Մարգարէին, օրհնենք Նրա համար՝ որ մենք չենք ծնուել կրելու այն թըշուառութիւնը, որ կրում են այդ ողորմելի ինչլիզ անհաւատները. օրհնենք Նրա համար՝ որ մենք կարող ենք խաղաղութեամբ ծխել մեր չիրութիւնները Վոսփորի խաղաղ ափերում:

— Զարմանալի, շատ զարմանալի բաներ ես պատմում, ասացի ես: Եթէ այդ պատմութիւնները լսած չլինէի, չէի հաւատալ այն՝ որ ասում են թէ ամբողջ Հնդկաստանը նրանց է պատկանում, և թէ մի պառաւ կին է, որ իշխում է այնտեղ: Արդեօք դա իրողութիւն է, գիտե՞ս:

— Ի՞նչ էլ որ նրանց մասին լսելու լինիմ, ես չեմ զարմանայ, որովհետեւ խնթերից շատ բան է սպասելի. բայց թէ մի կին է, որ կառավարում է Հնդկաստանը, դա, դա դեռ երբեք չէի լսել: Գուցէ այդպէս է. Ալլահը գիտէ, շարունակեց նա մտածելով. խնթերը զարմանալի բաներ են անում:

Քիչ լուրսիւնից յետոյ, ես ասացի.

— Արդեօք հիմա ամեն բան իմացել եմ, թէ՞ դեռ ուրիշ անհաւատների մասին էլ պիտի լսեմ: Մօրուքդ սիրես, ասա՛ ինձ, ուրիշ անհաւատներ է՞լ կան. զարմանալի, ով կարող էր կարծել, որ աշխարհս այդպէս է կազմուած:

Նա մի քիչ մտածեց և ասաց.

— Այո՛, այո՛, ես մոռացայ յիշել երկու—երեք ազգերի անուններ էլ. բայց դէ, ճիշտն ասած՝ նրանք արժանի չեն ուշադրութեան: Նրանք սպանիացի, փորդուգալացի և իտալացի անհաւատներն են, որոնք ուտում են իրանց խոզերը և, յատուկ ձևով պաշտում են նրանց պատկերը. բայց իսկապէս նրանք ոչինչ են Ֆրանսիացիների մէջ իսկ: Սպանիացիք մեզ ծանօթ են իրանց փալժականներով (դուարներով). փորդուգալացիք մեզ մօտ հրէաներ են ուղարկում, և իտալացիք՝ մեզ մօտ են ուղարկում զանազան կարգի դէրվիշներ, որոնք բաւական խոշոր գումարներ են տալիս կայսերական զանձարանին եկեղեցիների կառուցանելու և զանգակներ հնչեցնելու արտօնութիւն ձեռք բերելու համար: Ես պիտի նաև յիշեմ պապին—Ֆրանսիացիների խալիֆին, որը ապրում է Իտալիայում և անդադար աշխատում է մարդկանց իր հաւատին դարձնել: Բայց մենք աւելի քան հաւասար ենք նրան, որովհետեւ մենք համեմատաբար շատ աւելի քան թուով անհաւատներ ենք դարձնում մեր ճշմարիտ հաւատին, չնայած թէ մի մարդ ի՞նչքան ցաւ պիտի կրի նախքան ճշմարիտ հաւատացեալ դառնալը:

— Մէկ բան էլ ունիմ հարցնելու, ասացի ես, և ես կատարելապէս բաւարարուած կը լինիմ: Կարող ես դու որևէ

ստոյգ բան պատմել Եանգէ Դոնիայի (նոր աշխարհի) մասին: Ես այնքան հակասական բաներ եմ լսել դրա մասին, որ միտքս շփոթուել է: Արդեօք ի՞նչպէս են գնում այնտեղ. գիտնի տակով՝ թէ ի՞նչպէս:

— Մենք շատ գործ չենք ունեցել Եանգէ Դոնիայի հետ, ուրիմն և շատ բան չգիտենք դրա մասին. բայց այսքանը իրողութիւն է, որ մարդիկ նաւով են գնում այնտեղ, որովհետեւ այդ նոր աշխարհին պատկանող միջանի նաւեր տեսնուել են այստեղ: Այդ երկրի բնակիչները բոլորն էլ անհաւատներ են, բարեկամ, ասաց նա հոգոց հանելով. այո՛, բոլորն էլ անհաւատներ են ինչպէս հին աշխարհին, և Ալլահի օրհնութեամբ նրանք բոլորն էլ պիտի այրուեն նոյն հնոցում:

Տեսնելով՝ որ այս վերջին նիւթի մասին քաթէրը շատ բան չգիտէ, ես այլևս ուրիշ հարց չտուի նրան, և որովհետեւ մեր խօսակցութիւնը արդէն բաւական երկար էր տեւել, ես ազատեցի նրան աւելորդ գլխացաւից և կրկին սուրճ ու չիբուխ պատուիրեցի մեզ համար: Մենք յետոյ բաժանուեցինք, իհարկէ, կրկին միմեանց հանդիպելու փոխադարձ խոստումով:

ԴԼ. ԳԳ.

Հաջի Բաբան գրում է Եւրոպայի պատմութիւնը:—Նա Միրզա Ֆիրուզ դեսպանի հետ վերադառնում է Պարսկստան:

Հարկաւորուած տեղեկութիւնները լիապէս հաւաքելուց յետոյ, ես վերադարձայ դեսպանի մօտ: Միրտոս անչափ ուրախ էր, որովհետեւ դիպլոմատիկ կեանքի մէջ արածս առաջին փորձը աջողութեամբ էր պսակուել: Նա ուրախացաւ, երբ ես նրան ներկայացրի իմ տեղեկագիրը, որ կազմել էի քաթէրի՝ ինձ մատակարարած նիւթերից: Դանի դեռ մենք Օտտոբուրգում էինք, նա ամեն օր ինձ դուրս էր ուղարկում աւելի մանրամասնութիւններ հաւաքելու, և ես այդպէս շարունակեցի՝ մինչև որ երկուսս էլ տեսանք, որ մենք բաւական նիւթ ունէինք կազմելու Եւրոպայի մի ընդհանուր պատմութիւն, որպիսին Տիեզերքի Գնահերոնը, ի միջի այլոց, պատուիրել էր իր դեսպանին ներկայացնել իր վերադարձին:

Անդուռ ու փութաջան աշխատութեամբ ես ինձ նուիրեցի այդ թանկագին պատմութեան շարադրութեանը: Ես կազմեցի մի սևագրութիւն, որը ներկայացրի իմ աղային: Նա համեմեց դրան արքայից արքայի ճաշակին յարմարեցնելով. նա մեղմա-

ցրեց այն մասները, որ բաւական զօրեղ էին թւում իրան, և յանձնեց իր գրագրին, որը գեղեցիկ ձեռագրով արտագրեց ամբողջը: Դա մի շատ գեղեցիկ գործ դարձաւ: Դիրքը ժամանակին կազմել տուինք, զարդարեցինք և դրինք մի մետաքսէ պայուսակի մէջ Շահին մատուցանելու համար:

Միրզա Ֆիրուզը իր դեսպանական գործերը կատարած լինելով, ինչպէս ինքը կարծում էր, պատրաստուեց վերադառնալ Պարսկաստան: Նա ինձ յայտնեց, որ ինքը դիտաւորութիւն ունէր ինձ ոչ միայն իր հետը տանելու, այլ նաև շարունակ պահելու կառավարական ծառայութեան մէջ Թէհրանում: «Որովհետեւ, ասաց նա, մի մարդ որ այդքան լաւ ուսումնասիրել է ֆոռնզների շահերը, շատ պիտանի կը լինի Պարսկաստանում այժմ գտնուող նրանց դեսպանի հետ վարուելու գործում»:

Իմ ցանկութիւններին աւելի յարմար ու աւելի գոհացուցիչ մի ծրագիր նա չէր կարող կազմել, որովհետեւ տաճիկներէից այդքան զրկանք կրելուց յետոյ, ես այլևս չէի կարողանում տեսնել նրանց: Ես ատելով ատում էի ամեն բան, որ վերաբերում էր նրանց: Նրանց քաղաքն ատելի էր ինձ, և ինչ ժամանակ որ Շաքարլարը միտս էր ընկնում, սիրտս ալեկոծւում էր կատաղութեամբ:

Արդէն բաւական երկար ժամանակ էր անցել Թէհրանի Մոլլա բաշու և իմ մէջ պատահած դէպքից: Մոլլա Նադանն էլ, ինչպէս ես լսել էի, արդէն վաղուց սպանուել էր հրասանդով, և Մոլլա բաշու այրի կ'ինն էլ, որին ես թողել էի քիւրդ աւագակների ձեռքում, երբէք չէր վերադարձել Պարսկաստան: Ուստի ես այն եղրակացութեան յանգայ, որ ես կարող էի ելալ Թէհրանում անվախ, անվտանգ: Եթէ նոյնիսկ ճանաչուէի էլ Թէհրանում, իմ կը համարձակուէր նեղել ինձ, քանի որ ես կը գտնուէի պաշտօնական անձանց պաշտպանութեան ներքոյ:

Երբ տարաբախտ Նադանը բռնուել էր, դահճապետի ձին, թամբն և այլն, ետ էր տրուել նրան, և կասկած չկար որ, Արդիւլ Քէրիմն էլ իր խանրմի՝ Մոլլա բաշու կնոջ վիճակակից էր եղել, որովհետեւ այն օրից ոչ մի լուր չէր լսուել նրա մասին: Ուրեմն ես չպիտի վախենայի, որ Թէհրանում նա ինձ կը գտնէր և կը պահանջէր հարիւր թումանը:

Վերջապէս, ես ոչ մի վախենալու բան չէի նկատում, և բաւական էր որ մի անգամ իմացուէր, որ ես Շահի ծառայութեան մէջ էի գտնուում, եթէ հազար անգամ էլ աւելի յանցաւոր լինէի, ես կարող կը լինէի գլխարկա թեք դնել և անպատիժ շրջել ամբողջ կայսրութեան մէջ:

Այս մտածմունքներով քաջալերուած՝ ես շտապով պատ-

ըստտուեցի ուղեկցելու դեսպանին. բայց նախ քան մեր մեկ-
նելը՝ ես վճռեցի այցելել իմ հայրենակիցներին, որոնք ապրում
էին քարվանսարայում, ուր ես յոյս ունէի, թէ ինձ կը յաջողուէր
աւելի լաւ առթով իմ անձին տալ այն կարեւորութիւնը, որը
այդքան վատ էր աջողուել ինձ՝ իմ վերջին ցուցամուտութեան
ժամանակ:

Մի քիչ նեղութիւն կրեցի մարդկանց հասկացնելու, որ ես
այժմ գտնուում էի դեսպանի ծտոռայութեան մէջ. այդպէս անելուց
յետոյ, ես այլևս չէի վախենում նրանց՝ հայրենակիցներէս ար-
համարանքից: Այս անգամն, իհարկէ, որպէս դեսպանատան
մարդու՝ ինձ ամեն կողմից յարգեցին: Ամեն մարդ հետս խօսե-
լիս՝ իր խօսքը նախաբանում էր «ձեր շնորհիւ», «եթէ դուք
կը հաճէք», «ձեր շնորհը չպակսի մեզանից» բառերով, և շատ
ուրիշ մեծարանաց խօսքերով: Նրանք այնպէս էին խօսում հե-
տըս, որ ոչոք չէր կարծիլ թէ ես նոյն մարդն էի, որին երկու
ամիս առաջ նրանք ծաղրել, ծանակել էին: Ընդհակառակը, ով
որ նախապէս ծանօթ չլինէր իմ կեանքին, պիտի անպատճառ
կարծէր, թէ ես մի անձնաւորութիւն էի, որի կամքից կա-
խուած էր կեանք ու մահ: Բայց Օսման աղային մնաս բարով
ասելիս՝ ես տեսայ որ նա դարձեալ անփոփոխ էր: Նա իր ա-
մեն մի խօսքովը ապացուցեց, որ նա շարունակում էր սիրել
ինձ որպէս Սպահանի սափրիչի որդուն և միշտ այդ սիրով էր
վերաբերուելու դէպի ինձ:

— Գնահ, որդիս, ասաց նա բաժանուելիս. գնահ, ինչ էլ որ
լինես—թիրքմէնների դերի, մոլլա, ծխամորձալաճառ, տաճիկ
աղա կամ պարսիկ միրզա—ինչ էլ որ լինես, ես միշտ վեր
կառաքեմ աղօթքներս և կը խնդրեմ Ալլահից, որ քեզ աջողու-
թիւն տայ և հետդ լինի, ուր որ գնաս:

Իր ծիսական այցելութիւնները վերջացնելով, և «մնաք
բարեաւ» ասելով տաճիկ իշխանաւորներին, Միրզա Ֆիրուզը
թողեց Սկուտարին ընկերակցութեամբ մի մեծ խումբ հայրե-
նակիցների, որոնք մեզ ճանապարհ դնելու համար մօտաւորա-
պէս մէկ ֆարսաղ ճանապարհ դուրս եկան մեզ հետ, և յետոյ
թոյլտուութիւն ստացան վերադառնալու:

Մեր ճանապարհորդութիւնը բարեյաջող անցաւ ուշա-
դրութեան արժանի ոչ մի բան չպատահեց մեզ, մինչև հասանք
Պարսկաստան: Երևանում մենք լսեցինք օրուայ լուրը, թէպէտ
շատ անկատար կերպով. բայց Թաւրիզում, որտեղի քաղաքա-
պետն էր Աբբաս Միրզան, մենք ծանօթացանք այլև այլ
խնդիրների հետ, որոնք բաւական մեծ յոյզ էին պատճառել
ամբողջ երկրում և արքունիքում: Գլխաւորը՝ ֆոանսական ու

անգլիական ղեսպանների հակառակութեան խնդիրն էր: Առաջինի՝ որին Շահը արդէն ընդունելութիւն էր տուել, նպատակն էր արքայական գահից հեռու պահել տալ վերջինին, որ ղեռ չէր հասել Թէհրան:

Այլևայլ պատմութիւններ էին անում նրանց մասին: Պատմում էին, թէ նրանք ինչ մեծ ջանքեր էին անում իրանց տարբեր նպատակին հանելու, և ամբողջ Պարսկաստանը ապշել էր տեսնելով՝ որ այդ երկու անհաւատները այդքան հեռու տեղերից, այդքան նեղութիւն կրելով, այդքան ահագին ծախք տեսելով՝ եկել էին կռուելու ճշմարիտ հաւատացեալների մի ամբողջ ազգի առաջ, որոնք անտարակոյս պիտի ծաղրէին անարգէին և խաբէին նրանց:

Դադղիացիին իր պահանջներն առաջ տանելու համար, շարունակ խօսում էր իր թագաւորի զօրութեան, նրա մեծութեան և ամբողջ Եւրոպայի վրայ ունեցած գերակշռութեան մասին: Նա անդադար գովում, բարձրացնում էր նրա անթիւ զօրքերին, որ նա կարող էր պատերազմի դաշտ հանել:

Նրա այդ խօսքերին այս պատասխանն էր տրւում:

— Դա կարող է ճշմարիտ լինել, բայց դա մեզ ի՞նչ: Ամբողջ կայսրութիւններ կան մեր և ձեր մէջ, ուրեմն Ֆրանսան ու Պարսկաստանն ի՞նչ խնամիութիւն են կարող հաստատել միմեանց մէջ:

Բայց, ասում է Ֆրանսացին, մենք կամենում ենք Հնդկաստանն առնել անգլիացիների ձեռքից, և ցանկանում ենք ձեր երկրի միջով մի բաց ճանապարհ ունենալ:

— Մեզ ի՞նչ գործ, դարձեալ ասում է Շահը, դուք կարող էք Հնդկաստանը տիրելու ցանկութիւնն ունենալ, բայց մենք ոչմի կերպով չենք ցանկանայ հիւրասիրելու ձեր զօրքերին:

— Բայց մենք ձեզ համար կը տիրինք՝ Վրաստանը, Թիֆլիսն էլ ձեր սեփականութիւնը կը դարձնենք, և ձեզ այնպէս կապահովացնենք, որ ոռւմներն այլևս չկարողանան ձեզ նեղել:

— Այդ այլ բան է, ասում է Շահը. երբ որ մենք մէկ անգամ մեր աչքով կը տեսնենք ձեր միջամտութեան արդիւնքը, և կը լսենք որ այլևս ոռւս չէ մնացել կովկասի այս կողմում, այն ժամանակ ձեզ կը հիւրասիրենք. բայց մինչև այդ ժամանակը, մենք մեր երկրով ոչմի ճանապարհ չենք տալ ձեզ, ոչ էլ կը խզենք մեր վաղեմի բարեկամ ինգլիզների բարեկամութեան կապը:

Միւս կողմից անգլիական ղեսպանն ասում էր:

Ֆրանսացիները մեզ նեղացնելու համար են գալիս Պարս-

Հաստան. ուրիշ նպատակ չունին նրանք, ուստի մենք պահանջում ենք, որ դուք նրանց հեռացնէք:

— Ինչպէս, ասում է Շահը, մենք այդ չենք կարող անել, որովհետեւ դա հիւրասիրութեան օրէնքին հակառակ կը լինի: Մեր պալատի դռները բաց են ամեն մարդու համար:

— Բայց, ստիպում էր անգլիացին, դուք երկուսից մէկին պիտի պահէք: Դուք պիտի վճռէք, թէ որ մէկիս էք պահելու. կամ համաձայնեցէք մեր բարեկամը դառնալ և հրաժարեցնել Ֆռանսացուն: Կամ թէ չէ, վճռեցէք մեզ ընդունել, որպէս թշնամիներ:

— Ինչո՞ւ ձեզ հաճեցնելու համար մենք թշնամիներ ստեղծենք մեզ համար. մենք ցանկանում ենք բարեկամանալ ամբողջ աշխարհի հետ:

— Բայց, ասում է անգլիացին, մենք ձեզ կօգնենք, ոյժ կը տանք, փող կը տանք:

— Օ՛, այդ անշուշտ ընդհանրացում է, ասում է Շահը, ասացէ՛ք, ի՞նչ քան կը տաք, ասացէ՛ք ու ամեն բան կը վերջանայ:

Դրեթէ այսպէս էր երկրի դրութիւնը, երբ մենք մեկնեցինք Թաւրիզից, և որովհետեւ Թէհրանում անհամբեր սպասում էին դեսպանին, մենք երկար չմնացինք Աբբաս Միրզայի մօտ, այլ աճապարանքով շարունակեցինք մեր ճանապարհը:

Մեր՝ Սուլթանիէ հասնելու առաւօտը, ճանապարհին մենք հանդիպեցինք մի երկար շարք ձիաւորների իրանց բեռներով: Նրանք պարսիկներ չէին. երբ նրանք լաւ մօտեցան մեզ, մենք տեսանք, որ ֆռանգներ էին: Նրանց ուղեկցում էր մի մէհմանդար (հիւրընկալ). Շահի պաշտօնեաներից մէկը մեզ յայտնեց, թէ ճանապարհորդը ֆռանսացոց դեսպանն էր իր հետեւորդներով, որոնց, ինչպէս երեւաց, քաղաքավարութեամբ խնդրել էին հեռանալ: Նա մեզ նաեւ յայտնեց, որ անգլիացոց դեսպանը շուտով նրա տեղը պիտի բռնէր:

Մենք իսկոյն հասկացանք, թէ ի՞նչ էր իրերի դրութիւնը արքունիքում, և իմացանք նաեւ, որ արքայից արքան շատ մեծ արժէքով էր ծախել իր շնորհը երկու հակառակորդ դեսպաններին մէջ:

Միրզա Ֆիրուզը մի քիչ զարմացաւ, թէ ինչպէս էր այդ վճռական քայն առնուել նախ քան իր հասնելը, քանի որ ինքը դալիս էր իր հետ ունենալով ևրդական ազգերի մասին շատ կարևոր տեղեկութիւններ: Բայց, իհարկէ, ամեն դժուարահասկանալի բան հեշտութեամբ բացատրուում է, երբ թոյլ է տրուում, որ դրամը ցոյց տայ իր պերճախօսութիւնը, մանաւանդ եթէ մէկը յիշում է շէյխի այն խօսքը՝ թէ՛ ռթող

դրամը միայն երևայ, ամեն գլուխ կը խոնարհուի։ Այդ այդպէս է. կշեռքի թաթերի մէջ՝ ծանրագոյն կշիռը իջեցնում է երկաթէ լծակը»։

Մենք բարերախտ էինք, որ պատեհութիւն ունեցանք տեսնելու մի ազգի վարքը, որի մասին վերջերս այնքան շատ բաներ էինք լսել, և որովհետեւ մենք այդ օրը միասին անցկացրինք նոյն տեղում, իմ իշխանաւորը առթից օգտուելով իրան ծանօթացրեց ֆրանսացոց դեսպանին։

Մենք ի հարկէ, կարծում էինք, որ նա՝ ֆրանսացոց դեսպանը և իր հետևորդները շատ յուսահատուած, ճնշուած կը լինէին, բնականաբար լաւ, ուրախ տրամադրութիւն չէին ունենալ, որովհետեւ Տիեզերքի Կինտրոնը նրանց մի կերպ քշել, հեռացրել էր. բայց տես, մենք որքան զարմացանք, երբ մեր կարծածի ու սպասածի հակառակը տեսանք։ Պարսկաստանը դեռ երբէք չէր տեսել խելագարների մի այդպիսի խումբ։ Նրանք երգում, պարում և լուծի բազի (խեղկատակութիւն) էին անում ամբողջ երկար օրը։ Նրանք բոլորն էլ խօսում էին միանգամից, մէկը միւսից աւելի բարձրաձայն, առանց գոնէ քաշուելու, ակնածելու միմիանցից, առանց ինկատի ունենալու միմեանց աստիճանը։ Կարծես թէ նրանք բոլորն էլ հաւասար աստիճանի մարդիկ լինէին։ Առանց յարգելու մեր կարպետները, նրանք անդադար և արագաքայլ ման էին գալիս նրանց վրայ, և դեռ այդքանը բաւական չէր, թքում էլ էին նրանց վրայ սաստիկ վիրաւորելով մեր զգացմունքերը։

Քանի որ ես այժմ ինձ համարում էի որպէս մէկը, որ մինչև մի աստիճան նմանում է ֆրանզիներին, (ի նկատի ունենալով թէ ես ի՞նչքան նեղութիւն էի կրել նրանց մասին տեղեկութիւններ հաւաքելիս), ես աշխատեցի իմանալ, թէ արդեօք որևէ կապ կամ նմանութիւն կար մեր և նրանց լեզուի մէջ. բայց զժբախտաբար նրանց լեզուից ոչ մի բառ չկարողացայ ըմբռնել։

Ինչևէ, ինձ թւում էր, որ մի քիչ լառաջադիմել էի նրանց լեզուի մէջ, որովհետեւ ես կարողանում էին յիշել և գրել այն բառերը, որ նրանք յաճախ արտասանում էին իրանց խօսակցութեան ժամանակ. օրինակ, մէկը՝ sacr, միւսը՝ Paris, երրորդը՝ l'Emperenn բառերը։

Ե՛հ, իրար վրայ առած՝ նրանք վատ մարդիկ չէին. մենք սիրեցինք նրանց։ Մենք մտածեցինք որոշել նմանութեան շատ կէտեր մեր և նրանց մէջ, և այն կարծիքին էինք, որ եթէ նրանք, որպէս անհաւատներ դատապարտուած էին ղուզախիւն (դժոխքին), այնտեղ իսկ՝ նրանք, փոխարակ ողբալու իրանց

վիճակը՝ կը շարունակէին նոյն ուրախ տրամադրութեան մէջ մնալ, ինչպէս էին Սուլթանիէյում:

Հետեւեալ առաւօտը մենք բաժանուեցինք, նրանք ծիծաղելով, շաղակրատելով և ուրախութիւններէցը գոռալով՝ իսկ մենք մտահոգ և կասկածաւոր՝ թէ արդեօք թագաւորաց թագաւորն ինչպէս էր ընդունելու իր դեսպանին:

Գլ. 55.

Թէ մի ֆուսկ դեսպան ինչպէս է ընդունում պալատում:

Իմ իշխանաւորը՝ Միրզա Ֆիրուզը շատ քաղցր ընդունելութիւն գտաւ Շահից, որին նա շատ հաճոյացրեց պատրաստ պատասխաններ տալով նրա հարցերին ևրոպական ազգերի վերաբերմամբ: Իսկապէս ոչմի ուրիշ մարդ չէր կարող աւելի յարմար լինել քան Միրզա Ֆիրուզը կատարելու այդ պաշտօնը՝ որ յանձնուած էր նրան: Շահի ամեն մի հարցին նա իսկոյն պատասխանում էր: Տգիտութիւնը ամենակին չէր կաշկանդում, շփոթեցնում նրան: Ո՛չ մի գծուարութիւն չէր ընդհատում նրան: Նրա բերանից երբեք դուրս չէին թռչում նոսմիրանամ (չգիտեմ) բառերը, որոնց արտասանելը միշտ յանցանք է համարւում թագաւորի խօսակցի կողմից: Ամեն նիւթի վրայ նա ճառում էր այնպիսի վստահութեամբ, որ նրա ունկնդիրները հաւատում էին թէ նրա ասածները վճռական էին: Եւրոպացիների մասին խօսելիս՝ նա այնպէս էր խօսում, որ լսողը կարծում էր թէ նա ծնուել ու մեծացել էր նրանց մէջ:

Որովհետեւ մարդիկ ինձ ճանաչում էին, որպէս մէկի՝ որ ծառայել էր Միրզա Ֆիրուզ դեսպանին Եւրոպայի մասին լուրեր բռնելու» և դրա պատմութիւնը գրելու համար, ուստի ես էլ մինչև մի աստիճան հռչակ էի վայելում, որպէս մէկը, որ ուսումնասիրել էր ամեն ինչ, որ վերաբերում էր եւրոպացիներին:

Թէպէտ ես երբեք իմ իշխանաւորի չափ վստահութիւն չունէի, այնուամենայնիւ ես կարողանում էի ինձ ուղղուած բոլոր հարցերին շուտափոյթ պատասխան տալ, թէև միշտ ստիպւում էի շրջանկատ լինել չախալուելու և ինձ չմատնելու համար: Ես անց էի կացնում օրերս երկու վախով, մէկ որ, մի գուցէ տգէտ երեւայի, և երկրորդ որ, մի գուցէ ականջներս կըտրուէին չափազանց իմաստուն երեւյուս համար:

Ինչևէ, քանի-մեր հայրենակիցներն ոչ մէկը չէր կարող

հակասել մեզ, մեր խօսքերը լաւում էին, որպէս պատգամներ (oracles), և մենք մեր օրինակով հաստատեցինք Ալի Միէյի այն իրաւացի խօսքը թէ՛ «Համրերի երկրում որեւէ ձայն՝ նոյն լիակ էշի զոնջիւնն էլ ներդաշնակութիւն կը համարուի»:

Միքանի օր մեր ժամանելուց առաջ, անգլիական դեսպանը հասել էր Թէհրան, և այնքան փառաւոր ընդունելութիւն էր տրուել նրան, որքան մի անհաւատ շուն կարող է սպասել օրհնելու Մարգարէի տեղակալից: Ամբողջ քաղաքը թնդացել էր այս պատիւներով՝ որ տրուել էր նրան, և մեր ամենախիստ մոլլաներից միքանիսը ասել էին, որ մի դեպուրի հետ այդպէս վարուելով, այդքան յարգանքներ ընծայելով՝ մենք ինքնեքս մինչև մի աստիճան մեղսակից էինք լինում նրան և դրժողքը էինք դատապարտում մեզ:

Ճանապարհին միքանի կայարաններում, միքանի կովերի գլուխներ էին կտրուել նրա ձիու ոտերի տակին: Շատ տեղերում նրա ճանապարհի վրայ վանաշաքար էին ցանել, և նրա՝ քաղաք մուտ գործելու առաւօտը, նրան թոյլ էր տրուել հընչեցնել տալ իր փողերը: Վերջապէս շատ պատիւներ էր տրուել նրան, պատիւներ՝ որ մեր շահագրանքներից դատ՝ ուրիշ ոչ ոքի չպիտի տրուէր:

Յետոյ նա հիւրասիրուել էր ամենայն պատշաճ ուշադրութեամբ: Խաներից մէկի տունն առնուել և յանձնուել էր նրան, և ինչ կահ կարասիք, որ նրան հարկաւոր էր եղել՝ պահանջուել էր հարկաններից և տրուել նրան: Մի գեղեցիկ պարտէզ էլ միացրել էին նրա ընակարանին կից գտնուող մի ուրիշի հետ և դրել նրա տրամադրութեան տակ: Արքունի գանձապահին էլ հրամայուել էր իր ծախքով կերակրել օտարականներին ինչքան ժամանակ որ նրանք կամենային, և պալատականներից ու պալատական ծառաներից զգեստներ ու շալեր էին առնուել նուիրուելու նրանց, որպէս պատուոյ զգեստներ, ինչպէս սովորութիւնը պահանջում էր տալ այդպիսի դէպքերում: Շահագրանքներն ու ազնուականներին պատուիրուել էր ընծաներ ուղարկել դեսպանին և մի հրամանագրով յայտարարուել էր, որ նա և իր հետևորդները Շահի հիւրերն էին և որ հաճոյական խօսքերից դատ՝ ոչ ոք ոչ մի ուրիշ խօսք չպիտի ուղղէր նրանց. հակառակ դէպքում Շահը սաստիկ կը զայրանար:

Այդ բոլոր ուշադրութիւնները, իհարկէ, աւելի քան բաւական էին անհաւատների համար, որ գոհ լինէին իրանց վիճակից, բայց, ընդհակառակը, երբ կարգ ու ձևի խնդիր առաջ եկաւ, անվերջ դժուարութիւններ ծագեցին: Դեսպանն ամենադժնդակ, խօսք չհասկացող մահկանացուն էր: Նախ նստելու ձևի

խնդիրն առաջ եկաւ։ Այն օրը, երբ Շահը պիտի ընդունէր ներան, նա չէր ուզում նստել գետնի վրայ, այլ պնդում էր, որ իրան մի աթոռ տրուէր և այն էլ պահանջում էր, որ աթոռը արքայական գահին՝ որոշ հեռաւորութեան վրայ դրուէր և ոչ աւելի հեռու։

Երկրորդ՝ գլխարկի խնդիրը. դեսպանը յայտնեց, որ իր դիտաւորութիւնն էր գլխարաց գլուխ իջեցնել Շահին։ Մենք աշխատեցինք նրան համոզել, որ դա շատ անվայելուչ բան կը լիներ. բայց նա իր ասածն էր պնդում։

Երրորդ՝ կօշիկների խնդիրը. նա պնդում էր, որ ինքը չը պիտի հանէր իր կօշիկները և ոտաբոբիկ ման գար. չէր էլ ուզում կարմիր գուլպաներ հագնել։

Յետոյ զգեստի խնդիրը առաջ եկաւ։ Դա սաստիկ վիճաբանութեան պատճառ դարձաւ։ Սկզբում պատուիրեց, որ պատշաճ զգեստներ ուղարկուէին նրա և նրա հետևորդների համար, որպէսզի նրանք ծածկէին իրանց անձը (որ շատ անվայելուչ կերպով բաց էր) յարմար կերպարանքով Շահին ներկայանալու համար. սակայն այս առաջարկութիւնը նա ծաղրով ու արհամարհանքով մերժեց։

Նա ասաց, որ իր կամքն էր ներկայանալ Շահին ճիշտ նոյն զգեստով՝ որ հագնելիս է եղել իր Թագաւորի մօտ։ Արդ, քանի որ ճշմի պարսիկ չկար, որ որևէ մի Ֆուսնգ Թագաւորի պալատը գնացած լինէր, ճշոք չէր կարողանում ասել, թէ իսկապէս ճշն էր պատշաճ զգեստը, և քանի որ այդպէս էր, իմ գիտէ, դեսպանը գուցէ իր գիշերուան գլխարկով ու շորերով կը ներկայանար Շահին։

Սա մի դժուարութիւն էր, որ ինչպէս երևում էր, շուտով չէր վերանալու։ Երբ ես մտածում էի այդ խնդրի վրայ, յանկարծ յիշեցի, որ Սպահանում Զէհէլ Սուլթուն (քառասուն սլւն) կոչուած պալատի նկարների մէջ, ես տեսել էի ևրոպացոց պատկերներ, որոնք՝ (ևրոպացիները) Մեծն Շահ Աբբասի օրով գնացել էին նրա պալատը, և մինչև անգամ հաստատուել էին այդ քաղաքում։ Ես յատկապէս յիշեցի պատկերներից մէկը, որ նկարուած էր այս խմբի մէջ, ուր էր և՛ Շահ Աբբասը։ Այդ մէկ պատկերի զգեստն, անկասկած միակ պատշաճ տարազն էր որ պիտի հագնուէր մի Թագաւորի գլխի առաջ։ Ես իսկոյն յայտնեցի այս՝ իմ իշխանաւորին. նա էլ յայտնեց մեծ վեղիրին։ Վերջինս էլ հրամայեց, առանց ժամանակ կորցնելու, Սպահանի ամենալաւ նկարչի ձեռքով այդ պատկերի օրինակը վերցնել և ուղարկել Թէհրան։

Երբ այդ պատկերի օրինակն Սպահանից հասաւ, իսկոյն պաշտօնապէս ներկայացուեց անգլիական դեսպանին, որին և

միևնոյն ժամանակ Շահի կողմից ուղարկուեց մի տոմսակ, որով նա յայտնում էր թէ ինքը շատ գոհ կը լինէր, եթէ նա՝ զեսպանը ներկայանար հէնց նոյն զգեստով, որ հագնելիս է եղել իր Թագաւորի մօտ, այսինքն՝ նոյն տեսակ զգեստով՝ որի նկարած օրինակն այժմ ներկայացուած էր իրան:

Շահը յոյս ունէր, որ զեսպանն և իր հետեւորդները կ'ընդունէին իր առաջարկը. բայց անհաւատները պատկերը տեսան թէ չէ՝ այնպէս քրքիջ բարձրացրին, որ անկարելի է նկարագրել: «Միթէ դուք մեզ կապիկների տեղ էք դնում, ասացին նրանք, որ ստիպում էք մեզ հագնել ձեր սիրած զգեստը»: Ներանք այնքան յամառութեամբ պնդում էին հագնել իրանց հաւանած ձևի տարազը, որ ի վերջոյ թոյլ տրուեց նրանց անել՝ ինչպէս կ'ամենում էին:

Շահը, վերջապէս, ընդունեց զեսպանին: Ընդունելութիւնը աւելի լաւ անցաւ, քան սպասելի էր այդպիսի կոպիտ և անքաղաքակիրթ մարդկանցից, և մենք բոլորս՝ ապշեցինք, երբ տեսանք, որ աշխարհիս ձևերին ու գործերին բոլորովին անծանօթ մարդիկ, կարողացան այդպիսի զէպքում իրանց լաւ պահել և ընթանալ առանց մի անվայելուչ գործ կատարելու:

Շահը բազմած էր իր ոսկեկուռ գահի վրայ: Նրա պծնազարդ զգեստը շլացնում էր օտարականներին աչքերը, և մինչև անգամ այնքան ազդում էր իր հպատակներին, որ նրանք գոչեցին. «Ո՞վ էր Զէմշիդը, ո՞վ էր նա, Դարամբն ո՞վ էր, Նուշիրվանն ո՞վ էր, ովքե՞ր էին նրանք՝ որ միևնոյն շնչով յիշուենք»:

Դահի աջ ու ձախ կողմում կանգնած էին շահազանները՝ որոնք աւելի գեղեցիկ էին, քան իրանց հօր անձի վրայ շողշողացող գոհարները: Դահից մի քիչ հեռու նստած էին երեք վեզիրները— իմաստութեան և բարի խորհուրդների աւանդապահները: Մէջքները պատին դէմ տուած՝ իւրաքանչիւրը Թագի պարաֆրնէլեայի (paraphernalia) մի մասը բռնած՝ կանգնած էին սե-սե աչքերով արքայական մանկլաւիկները, որոնք կարծես թէ հրեշտակներ լինէին, որ իրանց ձեռքերի վրայ պահում էին աստեղազարդ երկնքից կախուած մոլորակներ: Նրանց մէջտեղում կանգնած էին Փռանդները, որոնք իրանց բաց սրունքներով, նեղ շորերով, անբեխ ու անմօրուք երեսներով՝ նմանուած էին փետուրները նորոգող կամ փոխող Թոչունների կամ ախտաւոր կապիկների, կամ վերջապէս ամեն բանի՝ բացի մարդկային արարածի: Այո, ներանք երբէք մարդու կերպարանք չունէին, երբ համեմատուած էին լայն և գեղեցիկ զգեստով անձնաւորութեանց հետ, որոնցից նրանք շրջապատուած էին:

Նրանք կանգնած էին վստահ, համարձակ, առանց ամեն-
ին քաշուելու մեծ թագաւորի լուսափայլ ներկայութիւնից.
բայց նրանց դիրքը, վարքը և դէմքի արտայայտութիւնը այն-
պէս էր, որ մարդ կարծոււմ էր թէ նրանք էլ մեղ պէս բոլորո-
վին բարի և անբիծ մարդիկ էին:

Դեպքային ատենախօսութիւնը բնորոշոււմ էր այն ժողո-
վըրդին, որի ներկայացուցիչն էր ինքը: Նրա խօսքերը պարզ,
անպաճոյճ, ողորկ, ճշմարտութիւնից ոչ մի բառ աւելի կամ
պակաս չէին: Նա խօսում էր այնպէս, ինչպէս ուղտապանը խօ-
սում է ջորեպանի հետ, և եթէ թարգմանչի խելքն ու հանճարը
չլինէր, շահը երբէք չէր յարգուիլ իր տիտղոսներով—«Արքայից
արքայ», «Տիեզերքի զըրէ», և այլն: Ֆռանգների և մեր վարքե-
րի ու զգացողութիւնների միջև նկատուած անսահման տարբե-
րութիւնը նկարագրել փորձելու համար՝ հարկաւոր է մինչև
յաւիտեան գրել: Մեր իմաստուն մարդիկներէց մի քանիսը աշ-
խատեցին փիլիսոփայական սկզբունքներով բացատրել այդ
տարբերութիւնը, որը վերագրեցին այն խաւար, ջրալից և
արևազուրկ երկրներին, ուր նրանք ծնուել, սնուել ու մեծացել
էին. «որովհետև, ասում էին նրանք, ի՞նչպէս կարող են ջրով
շրջապատուած և արևի տաքութիւնից զուրկ մարդիկը՝ լինել
այնպիսիների նման՝ որոնք երբէք մէկ օր չեն անցկացնում ա-
ռանց վայելելու արևի ճառագայթների պայծառութիւնը, և ո-
րոնք մինչև անգամ չգիտեն, թէ ծովն ի՞նչ է»:

Կրօնաւորներն աւելի գոհացուցիչ կերպով էին բացա-
տըրում այդ: «Իրանց անհաւատութեան պատճառով է, ասում
էին նրանք, որ նրանք դատապարտուած, անիծուած են նոյն-
իսկ այս կեանքում և որ եթէ դեպքանք, իր հետևորդները և
նրա ամբողջ ազգը կը գիշանեն մուսուլմաններ դառնալ և փա-
րել միայն ճշմարիտ հաւատին, նրանք իսկոյն մեղ նման կը
լինեն, նրանք կը մաքրուեն պղծութիւնից և մինչև անգամ,
հաւանօրէն, միջոց կունենան երկնքի նոյն յարկում ճեմելու,
ուր կը լինեն իսլամի հարազատ որդիների հանդերձեալ աշ-
խարհում»:

ԴԼ. ՆՐ.

Հաջի Բաբան արժանանում է մեծ վէզիրի ուշադրութեանը:—Նրա միջոցով
վէզիրի ընչաքաղցումիւնը յազուրդ է ստանում:

Քիչ առաջ յիշատակուած գործառնութիւնների բոլորն էլ

նպաստաւոր էին իմ առաջադիմութեանը: Շնորհիւ այն բանի, որ կարծւում էր թէ ես գիտակ էի Եւրոպայի մասին՝ Պարսկաստանի ֆեոդալներին վերաբերեալ գործերի շատերի կատարումն ինձ էր յանձնուում, և այդ գործերը ինձ առիթ էին տալիս ծանօթանալու մեծ վէզիրի և միւս նախարարների ու իշխանաւորների հետ:

Միւրդա Ֆիրուզը հարուստ չէր, և որովհետեւ, երբ նա թէհրան հասաւ, դադրեց այն ոռճիկը, որ նա ստանում էր որպէս հասարակական գործիչ, նա այլևս չէր կարողանում պահել ինձ. նա շատ ուրախացաւ երբ տեսաւ, որ ես կարողանում էի հայթայթել իմ ապրուստը: Նա չլլացաւ գովասանքներով խօսել իմ յատկութիւնների մասին, քոթից օգտուելով՝ նա միշտ գովում էր իմ ընդունակութիւններն ուրիշների մօտ: Ես էլ, իհարկէ, իմ կողմից աշխատում էի երկրորդել կամ հաստատել նրա ասածները: Ես այնպէս աշխատեցի, որ ամեն մարդ և ամեն բան, թէ անհատ և թէ ճշմարիտ հաւատացեալ բոլորն էլ սկսեցին պաշտպանել իմ հայեացքները, և ճակատագիրըն էլ, առանց որի օգնութեան՝ մարդու ջանքերը զուր են, կարծես թէ շնչաց ախանջիս, թէ ես այլևս դերձ էի աշխարհի հարուածներին:

Մեծ վէզիրը միակ մարդն էր Պարսկաստանում, որ իր ճարտարութեամբ, նուրբ դատողութեամբ և սրամտութեամբ՝ ամենամեծ ազդեցութիւնն ունէր Շահի վրայ: Նա վայելել էր իր բարձր դրութիւնը գրեթէ ներկայ երկար թագաւորութեան սկզբից, և իր պաշտօնն այնպէս խառնել էր ամեն մի ուրիշ գործի հետ—թէ հասարակական և թէ մասնաւոր— որ նրա խորհուրդները այնքան էին հարկաւորուում երկրի համար, որքան արևի ծագելն ու մարելը:

Իմ նպատակն էր, ամենից առաջ, շահել նրա պաշտպանութիւնը: Ես ամեն օր ներկայանում էի նրա տոեանում և կանգնում էի նրա առջև, որովհետեւ որ նա այժմ իր ուշադրութիւնը դարձրել էր Եւրոպայի հետ կապ ունեցող գործերի վրայ, միշտ ինձ տեսնելիս՝ մի բան հարցնում էր ինձանից: Այդպիսով նա այնքան վստահացաւ վրաս, որ սկսեց իմ միջոցով պատգամներ ուղարկել անգլիական դեսպանին, որի տուած պատասխանները ես միշտ յետ էի բերում ինձանից յաւելուածներ անելով, շողորթութելով նրան, և գովելով նրա ընդունակութիւնները, որպէս մի մեծ պետական մարդու: Այսպէս բարեացակամութիւն ստեղծելով երկուսի մէջ՝ ինքս էլ նրանց սիրելին դարձայ:

Վէզիրի ամենարուեստ տենջանքն էր ընծաներ ստանալ:

Ամեն անգամ, երբ ես գործով գնում էի անգլիական դեսպանի մօտ, ես գործ էի դնում իմ բոլոր հանճարը և աշխատում էի մի որևէ բան կորզել նրանից: Երկու կողմից էլ, որպէս ծէս, ընծաներ պիտի փոխանակուէին, թէև այդ ընծաների փոխանակութեան գործում՝ ես շահուելու միջոց չունէի. բայց մի-երկու անգամ կշռի ծանրութիւնը դարձրի հայրենակիցներու կողմը, այսինքն աջող նրանց, և այդ ժամանակից վէզիրն սկսեց քաղցր հայեացքով նայել ինձ:

Երկու երկրների մէջ՝ մի դաշն պիտի կապուէր: Իմ բարերարը լիազօր գործակալ նշանակուեց Շահի կողմից: Թէպէտ սա մի խնդիր էր, որի մէջ ինձպէս աննշան մարդ չէր կարող խառնուել, այնուամենայնիւ ես անդադար քաշ էի գալիս գործակալների շուրջը, որպէս մի շուն՝ որ քաշ է գալիս մի խնջոյքում մի կտոր ոսկոր գտնելու համար, և երբեմն այնքան հոտ էի առնում, որ գրեթէ համոզւում էի, որ շուտով մի որս էր ձեռքս ընկնելու:

Վերջապէս մի առաւօտ, երբ վերջացաւ երկու գործակալների բաւական երկամբ նիստը, ես հրաման ստացայ ներկայանալ վէզիրին իր իսկ անդէրունումը—մի տեղ՝ ուր իր հաւատարիմ ծառաներից դատ՝ ուրիշ ճշոք չէր կարող մտնել: Երբ ես գնացի, նա նստած էր իր անկողնում, թեք ընկած միջանի փափուկ բարձրի վրայ:

—Հայի, ասաց նա մտերմաբար, մօտեցիր, նստի՛ր մօտս. ես մի կարևոր խօսք ունիմ քեզ ասելու:

Այս բարձր պատիւը գլուխս պտոյտ տուեց, երկբայութեան մէջ ընկայ, բայց որովհետև նրա հրամանը օրէնք էր, ես առանց դանդաղելու չոքեցի նրա անկողնու կողքին:

Առանց շրջաբանութեան՝ նա իսկոյն ինձ ասաց, որ ինքը նեղ դրութեան մէջ էր գտնւում, որովհետև անգլիական դեսպանը միջանի պահանջներ էր արել, որ անհնարին էր կատարել, և ասել էր, որ եթէ իր պահանջները չկատարուէին՝ ինքը կը հեռանար Թէհրանից:

—Արդ, ասաց նա, Շահը սպառնացել է, որ եթէ ես թոյլ տամ, որ դեսպանը դժգոհ հեռանայ Պարսկաստանից, իմ գլխով պատասխանատու պիտի լինիմ նրան, և միևնոյն ժամանակ ես կիսով չափ համոզուած եմ, որ Նորին Մեծութիւնը երբեք չի համաձայնի կատարել անգլիացոց դեսպանի պահանջները. բայց չեմ հասկանում, թէ ինչ պիտի անել:

—Արդեօք չի կաշառուի, ասացի ես, խոնարհութեամբ և դէմքիս այնպիսի արտայայտութիւն տալով, որպէս թէ խօսքերս այլ նշանակութեամբ էի արտասանել:

—Կաշառուի՞, ո՞վ, նա՞ կաշառուի, ասաց վէզիրը: Նախ և առաջ որտե՞ղից պիտի տրուի կաշառքը, երկրորդ՝ այս մարդիկը այնպիսի յիմարներ են, որ չգիտեն թէ ի՞նչ է նշանակում կաշառքը: Բայց դու ինձ լսիր, նրանք ինչ կ'ուզեն լինեն, մենք հօ յիմարներ չենք: Դեպանն անձկութեամբ ցանկանում է, որ իր կամքը կատարուի, և դու գիտես, որ ինձ համար անկարելի ոչ մի բան չկայ, բաւական է, որ մի անգամ ես ձեռնարկեմ այդ բանը: Հնչի, դու պիտի գնաս դեպանի մօտ և խօսիս նրա հետ: Դու նրա բարեկամն ես: Դու նրան կարող ես ասել, որ դու իմն ես: Դու կարող ես շատ բաներ շնջալ նրա ականջին, այո, դու կարող ես նրան շատ բաներ հասկացնել՝ որ ես չեմ կարող, Հասկանում ես:

Այս խօսքերի վրայ, ես բուռն զգացումներով համբուրեցի նրա ձեռքը, որը յետոյ բարձրացնելով և գլխիս վրայ դնելով՝ ասացի.

—Գլխիս և աչքիս վրայ. ես կը գնամ, և ինչալի՞նչ չեմ վերադառնալ առանց «սպիտակ երեսի»:

Նա յետոյ արձակեց ինձ, և ես ապաւայ երջանկութեան ոգևորիչ յոյսերով շտապեցի դէպի անգլիական դեսպանատունը:

Ես չեմ պատմի, թէ ինչեր ասացի, և ինչեր արի նրան համոզելու, որ ընդունէր մեծ վէզիրի պայմանները: Երկու խօսքով պիտի ասեմ, որ ես այնքան կատարեալ աշոգութիւն ունեցայ, որ վերադարձայ՝ մի ծանր քսակ ոսկիով: Արդէն այդ քսակը ցոյց էր տալիս թէ՛ եթէ բանակցութիւնը վերջանար ի բաւարարութիւն դեսպանին՝ հետևանքը որքան լաւ կը լինէր: Բացի այդ քսակից՝ դեսպանը մի խոստում էլ տուեց, որ մի մեծ աղամանդ մատանի շուտով պիտի անցնէր Անգլիայի մատիցը՝ Պարսկաստանի մատը, ի նշան յաւիտենական բարեկամութեան երկու պետութիւնների ներկայացուցիչների մէջ:

Երբ քսակով ոսկին վէզիրի առաջը դրի, նա այնքան զարմացաւ, որ նախ քան ինձ հետ խօսելը՝ մի-երկու անգամ փոփոխակի ինձ և քսակին նայեց, և յետոյ ամեն տեսակ բացազանչութիւններ անելով՝ գովասանեց իմ գործունէութիւնն ու եռանդը:

—Հնչի, ասաց նա, դու այժմ իմ սեփականութիւնն ես: Մենք էլ ախր մի մարդ ենք Պարսկաստանում. դու երկար առանց գլխարկի չես ֆնալու: Մէկ արձ արա (խնդրամատոյց եղիր) և դրա կատարումը ինձ թո՛ղ:

Ես հաւատարիմ և ժիր ծառայութեան շատ խոստումներ արի նրան: Ես հաւատացրի նրան, որ երբէք դիտաւորութիւն

չունէի վարձատրութիւն ստանալու. միայն թէ ինձ արտօնութիւն շնորհուէր նրա առջևը կանգնելու: Ես այնքան խոնարհ մարդ ձեացրի ինձ, և այնքան անտարբերութեամբ խօսեցի նրա հետ, որ եթէ երբէք նա հաւատ էր ընծայելու մի պարսկի՝ այդ պարսկիւր ես էի:

Բայց նա ինձանից շատ աւելի լաւ էր հասկանում այդպիսի խօսքերի կամ ճառերի արժանիքը: Նա ասաց.

— Զնչի, խօսքերդ երբէք մի շոայլի անմտաբար: Ես էլ մի ժամանակ քեզ պէս՝ գլուխս կորցրած շրջում էի աշխարհում, ապրուստ ճարելու համար, և այժմ ես գնահատում եմ այն ծառայութիւնը, որ դու արել ես ինձ: Առաջ գնահատեալ այն շաւղով, որ այժմ բաց է առջևդ: Ֆրանգները լաւ նիւթեր են քո հնարաւորութեան համար: Ես քեզ արտօնութիւն եմ տալիս օգտուել նրանցից: Նրանք առատ ոսկի ունին, և այժմ մեզ կարիք են զգուս: Սրանից աւելին ի՞նչ ասեմ: Իրանի ժողովուրդը նմանում է հողի. նրան ոէշուէ *) է հարկաւոր. պէտք է գրգռել նրա շահերը մինչև նա պտուղ տայ: Ֆրանգները խօսում են ժողովրդի կեանքի համար իրանց ունեցած այնպիսի զգացումների մասին, որպիսին մենք ամենեւին չունենք: Նրանք կեղծում են թէ՛ միակ բանը որ շարժում, գրգռում է իրանց գործելու, դա իրանց հայրենիքի սէրն է, սէր՝ նրան ծառայելու, նրան բարիք անելու: Սրանք խօսքեր են, որ նշանակութիւն չունին մեզ համար, որովհետև Շահի մեռնելուց յետոյ՝ Պարսկաստանի բարօրութեան համար մեր կրած նեղութիւններն, միւր արածները շատ հաւանականօրէն կ'ոչնչանան, և երբ նրա յաջորդը իրան ապահովեցնելու համար լաւ տնաբանդ կանի իր ժողովրդին, յառաջադիմութեան գործը պիտի վերսկսուի: Կան որոշ արտօնութիւններ ու վայելքներ, որոնք Պարսկաստանի թագաւորների օրինաւոր ժառանգութիւններն են: Յանուն Ալլահի թող նրանք վայելեն դրանց: Նրանց վէզիրներն էլ իրանց բաժինն ունեն, և ինչո՞ւ պիտի նրանք զրկուին իրանց բաժնից: Անշուշտ նրանք չեն կարող իրանց բաժինը զոհել երկրի բարութեան՝ համար, որովհետև ամբողջ կայսրութեան մէջ՝ չկայ մի անհատ, որ գոնէ հասկանայ, թէ ինչ է նշանակում բարութիւնը, ուր մնաց որ գտնուի մէկը, որ գործի, աշխատի բարիք անելու համար:

Նրա այս խօսքերը շատ լուսաւորեցին միտքս, և հէնց որ՝

*) Ռէշուէ նշանակում է կաշառք, նաև աղը կամ կարողութիւն հողը պարարտացնելու համար:

մինչև այդ ժամանակ իմացութիւնս ծածկող վարագոյրը յետ քաշուեց, իմ առջև բացուեցին նոր ապագայ յոյսեր, և ես կարողացայ իմ հայեացքը դրել շահի մի նոր և աւելի լայն ասպարէզի վրայ: «Ֆուսնգները լաւ նիւթեր են քո հնարագիտութեան համար» խօսքերը հնչում էին ականջիս, և ես շուտափոյթ սկսեցի գործ դնել հանճարս:

Իւ. Ն/Թ.

Թէ ինչ կերպով Հաջի Բաթան դործ դրեց իր ազդեցութիւնը, եւ թէ ինչպէս վէզիրը կրկին ուշաբուրեւ ղարձրեց նրա վրայ:

Ես մեծ նեղութիւն կրեցի հասկացնելու քաղաքի ժողովրդին՝ թէ ես մեծ վէզիրի հաւատարիմ գործակատարն էի, և ամեն ջանք գործ դրի լաւ հասկացնելու անհաւատներին, որ առանց իմ միջնորդութեան՝ նրանք ոչինչ չէին կարող անել: Իմ այս ջանքերը շուտով բեղմնաւորուեցին և իմ ծառայութեան կարիքն զգացուեց այնպիսի մի ձևով, որ շատ նպաստաւոր էր մեր փոխադարձ շահերին:

Մեր անդլիացի բարեկամները շատ մեծ փափագ ունէին մեզ բարութիւն անելու, հակառակ մեր ցանկութեանը: Նրանք անչափ նեղութիւն էին կրում, ջանքեր և ահագին ծախքեր էին անում իրանց նպատակին հասնելու համար: Ներանք մեզանից աւելի շատ էին զգում մեզ համար, և մենք որ, շարունակ անարգում էինք նրանց, որպէս պիղծ անհաւատների և որպէս յաւիտենական կրակի դատապարտուած արարածների՝ երբէք չէինք կարողանում հասկանալ, թէ նրանք ինչպէս էին մեզ այդքան սիրում:

Ինչպէս, իմ հոգը չէր թէ նրանք ինչ ճաշակներ ունէին. ես միայն պիտի աշխատէի օգտուել նրանցից (ճաշակներից) ինչպէս և օգտուեցի, և պիտի խոստովանուած՝ որ լաւ վարձատրուեցի կրածս նեղութեան համար:

Հնթերցողը թերևս կը մտաբերի այն անհաւատ բժշկին, որի մասին ես խօսել եմ պատմութեանս սկզբներում, և որը ինչպէս ասել եմ, բժշկական նորութիւններ մտցրեց Պարսկաստան և իմիջի այլոց մտցրեց. և՛ մի նոր ձև՝ «ծաղիկ» հիւանդութիւնը բժշկելու: Նրա այդ նոր ձևի բժշկութիւնը այժմ բոլորովին մի կողմ էր դրուել և մեր հաքիմները շարունակում էին բուժել այդ հիւանդութիւնը մեր նախահայրերի ձևով, և հետևապէս սովորական թուով երեխաներ էին մեռնում: Անգլիա-

կան դեսպանի հետևորդները խմբի մէջ կար և՛ մի բժիշկ, որը շատ մեծ ցանկութիւն ունէր մեզ բարութիւն անելու: Նա անսահման եռանդով աշխատում էր վերսկսել կովի ծաղիկով պատուաստելու վարժութիւնը: Նա բազմաթիւ մայրերի հրապուրեց իրանց երեխաները բերելու և պատուաստելու: Ես որ աշխատում էի իրագործել իմ ցանկութիւնը, առաջինն եղայ, որ հրապարակաւ բողոքեցի, թէ՛ ճշմարիտ հաւատին պատկանող կանանց հոսանքը դէպի մի անհաւատի բնակարան—ինչ նպատակով էլ որ լինէր—շատ անվայելուչ բան էր, և համոզեցի մեծ վէզիրին՝ մի ոստիկան նշանակել, որպէս պահապան բժշկի տան դրան՝ արգելելու կանանց մուտքը անտեղ: Այս քայլը շուտով կապ տուեց նրա վարժութիւնը և նա յուսահատուեց:

—Բայց դուք ինչու էք վշտանում, ասացի ես այդ բժըշկին: Դուք ձեր նեղութիւնների համար ոչինչ չէք ստանում, և ժողովուրդն էլ ձեր արած բարութիւնը չէ գնահատում:

—Օ՛հ, ասաց նա (այդ ժամանակ նա և իր հայրենակիցները սովորել էին մեր լեզուն)՝ օ, դուք չէք հասկանում, թէ ինչ էք ասում: Այս բարիքը պիտի տարածուի ամբողջ աշխարհում, և եթէ ձեր կառավարութիւնն արգելք դառնայ դրա տարածուելուն այստեղ, նա արիւնապարտ կը լինի այն բոլոր կեանքերի համար, որոնք պիտի փրկուէին:

—Մեր ինչ գործը, պատասխանեցի ես, թող նրանք մեռնեն, նրանց կենդանի մնալովը մենք ոչինչ չենք շահում:

—Եթէ դուք շահի ետեւից էք, եթէ դուք շահ էք ուզում, ասաց բժիշկը, ես ամենայն յօժարութեամբ ձեզ կը տամ ինչքան փող ուզէք, միայն թէ իմ պատուաստելու նիւթը չփչանայ: Եթէ ես չշարունակեմ իմ վարժութիւնը, այդ նիւթը կը չորանայ և անպէտք կը դառնայ:

Այստեղ մենք բանակցութեան մէջ մտանք, և շատ դժուարութիւններից յետոյ (որովհետեւ ես կեղծում էի, որպէս թէ շատ վախենում էի մեծ վէզիրից), համաձայնեցինք, որ ինձ նպաստաւոր միջանի պայմաններով՝ բժիշկին թոյլ տրուէր շարունակել իր գործը: Ով որ ինձ լաւ ճանաչում է, կարող է գուշակել թէ՛ քանի, քանի երեխաներ սկսեցին տարուել նրա մօտ պատուաստուելու: Ահագին բազմութիւն էր խուժում նրա տան դուռը, և այլևս ոչ մի խօսք չէր ասւում կանանց այնտեղ գնալու անպատշաճութեան մասին:

Բժշկի խնթութիւններից մէկն էլ այն էր, որ նա ցանկանում էր մեռած մարմիններ կտրատել: Երբ նա մի դիակ էր տեսնում, որ տարւում էր թաղելու, այնքան կարօտով էր նա յում դրան, որ ես զարմանում էի, թէ ի՞նչպէս է, որ մարդիկ

չէին յարձակում նրա վրայ իր անմաքուր ցանկութեան համար:

— Բայց մարդկանց դիակները կտրատելով, ասացի ես, դուք ի՞նչ բարիք արած կը լինէք մարդկութեանը:

— Անկարելի է ասել, թէ ի՞նչ բարիք կը կորսուի, ասաց նա, եթէ ես չկտրատեմ դրանց. բայց եթէ ես միշտ ձեռքս չըվարժեցնեմ՝ կը մոռանամ իմ սովորածը:

Նա յետոյ իր յօժար կամքով հրաւիրեց ինձ ստանալ մի խոշոր գումար մի մեռած մարմնի համար, և հաւատացրեց, որ ինքը ամենեւին փոյթ չունէր թէ ինչ մարդու դիակ էր՝ հրէայի, քրիստոնիսայի կամ մի ճշմարիտ հաւատացեալի դիակ՝ նոյնն էր իրան համար, տարբերութիւն չունէր:

Այս բանը մտքուս պահեցի. եւ յիրաւի ինձ այնքան առիթներ ներկայացան կատարելու անհաւատներ ի կամք և միևնոյն ժամանակ իմ գրպանները լցնելու, որ ես սկսեցի կամաց-կամաց հարստանալ:

Դիտպանն ինքն էլ ցանկանում էր յառաջացնելու (ինչպէս ինքը կոչում էր) մեր պետութիւնը, և ես չեմ կարող չպատմել մի հանգամանք, որ տեղի ունեցաւ նրա և մեծ վէզիբի մէջ: Առաջինը յայտնեց, որ ինքը դիտաւորութիւն ունէր մեզ ընծայ տալու, եւրոպայում արդէն լաւ մշակուած երկրի մի տեսակ պտուղ, որը դեռ անծանօթ էր Ասիայի շատ մասերում, և որը անպատճառ անհաշուելի շահ կ'ունենար պարսիկների համար: Նա խնդրեց վէզիբից օգնել իրան, խոստանալով նրա համար ուղարկել մտածուած ընծան: Վէզիբը, որի քիթը միշտ շատ բարձրանում էր, երբ նա մի ընծայ ստանալու յոյս էր ունենում, ամեն օր ինձանից հետաքրքրւում էր իմանալ, թէ ինչպիսի ընծայ պիտի լինէր այն՝ որ դեսպանը շուտով տալու էր իրան: Նա սաստիկ անհամբեր էր ստանալու այդ. իմ միջոցով նա իմացաւ, որ անգլիացոց ներկայացուցիչը իրան հետ բերել էր շատ աղնիւ մահուդ: Նա աչք ունէր այդ մահուդի վրայ, և երբ տեսաւ, որ հասարակութեան օգտի համար խոստացուած ընծան չէր գալիս, նա իր բոլոր իմաստութեամբ մտածեց, որ դեսպանն աւելի թեթեւ կերպով կատարած կը լինէր իր խոստումը, եթէ համաձայնէր դրա փոխարէն մի առանձին պարգև տալ իրան:

Մի առաւօտ, նա իր մօտ կանչեց ինձ և ասաց.

— Ալլահի օրհնութեամբ մենք ունենք ինչոր պէտք ունենք: Մենք ունենք այնպիսի հաց, միս, աղ, բրինձ, ցորեն, մրգեղէն՝ որպիսին անհաւատներն երազում էլ չեն տեսել: Մի խօսքով, մենք ամեն բան էլ ունենք: Ուրեմն ինչո՞ւ պարտա-

կան մնա՞նք այդ անհաւատ դեսպանին այնպիսի բանի համար՝ որ մենք չենք ուզում: Մի լաւ բան եմ մտածել—մի բան՝ որից նա կը շահի և կ'ազատուի այն նեղութիւնից, որ ցանկանում է կրել: Ես համաձայն եմ նրանից մահուդ ստանալ հասարակութեան օգտին խոստացուած պարգևի փոխարէն: Այս այնպիսի մի հեշտ գործ է, որ դու—փա՛նք Ալլահին սրահանձար մարդ ես—դու հեշտութեամբ կարող ես գլուխ բերել: Գնա՛, դեսպանին յայտնի՛ր այս բանը, և առանց ժամանակ կորցնելու մահուդը բեր:

Ես իսկոյն ներկայացայ դեսպանին և հաղորդեցի պատգամը. բայց նա և իր բոլոր հետևորդները այս պատգամը լսելով՝ սկսեցին այնպէս բարձր ձայնով ծիծաղել, հռուալ, որ նրանց ձայները կարող էին լսուել Դէմավանդի գագաթից:

—Ի՞նչ կապ ունի մահուդը գետնախնձորի հետ, ասաց մէկը:

—Մենք ցանկանում ենք ձեզ մի շատ աժանագին ուտելիք տալ, ասաց մի ուրիշը:

—Բայց, ինչպէս երևում է, ձեր վէզիլը ցանկանում է ընծայի ամբողջ օգուտը վերցնել ազգի փորի վրայից և դնել իր մէջքի վրայ, ասաց մի երրորդը:

Ինչևէ, դեսպանը՝ որ խմբի մէջ ամենահասկացողն էր երևում, իսկոյն շատ քաղաքավարի կերպով հրամայեց իր մարդկանց մի կտոր մահուդ տալ ինձ, և խնդրեց ինձանից նրան մատուցանել իմ աղային բարեկամութեան հաւաստիքներով, ասելով նրան՝ որ այդ բանը չէր կարող փոխել պարսից ազգի համար իր ունեցած զգացումները, և որ ինքը դեռ պիտի ուղարկէր գետնախնձորը, որպէս նշան յարգանքի և մեծ համարման:

Աջողութեանս վրայ հրճուելով՝ ես վերադարձայ վէզիլի մօտ: Իմ ընդունակութիւնների, այս, նախընթաց և յետագայ օրինակներով՝ ես այնպէս շահեցի նրա սիրտը, որ ես շուտով յաղթեցի ամեն հակառակորդի և դարձայ նրա ամենասիրելի հաւատարիմը:

Գլ. Ժ.

Վերջաբան.—Դժբախտութիւնը կարծես Թէ հրաժեշտ է տալիս Հաջի Բաբային, որը վերադառնում է իր հայրենի քաղաքը՝ աւելի մեծ մարդ՝ քան եղել էր այն ժամանակ, երբ նա առաջին անգամ հեռացել էր այնտեղից:

Անհաւատների հետ մեր ունեցած բանակցութիւնները վերջանալու վրայ էին, և համաձայնութիւն էր կայացել, որ երկուսի մէջ բարեկամութեան կապն ամրացնելու համար՝ Շա-

հըն իր կողմից անյապաղ մի դեսպան ուղարկէր Անգլիայի թագաւորի մօտ:

Իւրաքանչիւր յաջորդող օրուայ փորձառութիւններն ինձ համոզացնում էին, որ ես մեծ ազդեցութիւն էի գործել մեծ վէպիւրի վրայ, և քիչ առաջ յիշուած հանգամանքն էլ միջոց դարձաւ ինձ ցոյց տալու, թէ նա մինչև ինչ աստիճան էր կախուած իմ ծառայութիւնից և նախանձախնդրութիւնից: Անգլիայի հետ դաշն կնքելու հետեւեալ օրը, նա ինձ կոչեց իր նախասենեակը և հետս խօսեց այսպէս.

— Հնչի, ահանջ դիր ինձ: Ես շատ կարևոր բաներ պիտի հաղորդեմ քեզ, և քանի որ ես քեզ միմիայն իմս եմ համարում, վստահ եմ որ դու լաւ ուշադրութեամբ կը լսես ասելիքս: Ես սկսել էի նրան յայտնել իմ անձնուիրութեան հարկաւոր եղած հաւաստիքները, երբ նա ընդհատեց ինձ ասելով.

— Լաւ կամ վատ, մեր գործը վերջապէս վերջացաւ անգլիական դեսպանի հետ, և Շահը համաձայնել է նրա ցանկութիւնը կատարելով՝ փոխադարձաբար մի դեսպան ուղարկել Անգլիա: Արդ, դու լաւ ճանաչում ես պարսիկներին, ինչպէս ես, և գիտես, թէ ինչքան ատելի է նրանց համար հայրենիքից հեռանալը, և թէ որքան դժուար կը լինի ինձ ընտրել մի մարդու՝ որ նուիրուի այս գործին: Ես աչքի առաջ ունիմ մէկին, որին ես գերադասում եմ ուղարկել, և քանի որ ինձ համար շատ մեծ նշանակութիւն ունի այդ մարդու առայժմ Պարսկաստանից հեռանալը, յատկապէս Տիեզերքի Կենտրոնի ներկայութիւնից՝ ուստի ինձ հարկաւոր է քո միջնորդութիւնը, հարկաւոր է, որ դու ամեն ջանք գործ դնես համոզելու այդ մարդուն որ ընդունի, նշանակուած պաշտօնը:

Ես իսկոյն հաւատացի, որ ինձանից զատ՝ նա ուրիշ ոչ ոքի աչքի առաջ չունէր, թէպէտ ես, միևնոյն ժամանակ, չէի կարողանում հասկանալ, թէ նա ինչ պատճառներով էր կամենում, որ ես հեռանայի Շահի ներկայութիւնից: Այս անակնկալ յառաջադիմութիւնը, բարձր աստիճանն ու պատիւը ինձ այնքան հրճուեցրեց, որ յառաջ ցատկեցի նրա մօտ, և բռնելով նրա ձեռքը ջերմեւանդութեամբ համբուրեցի և բացազանչեցի:

— Ձեր ստրուկների ամենանուաստը միշտ կ'աշխատի ապացուցանել, որ ինքը ձեր ծառաներից ամենահաւատարիմն է: Հրամայեցէք և դուք միշտ ինձ պատրաստ կը գտնէք, այո, միշտ մինչև մահ:

— Այդ լաւ ասացիր, ասաց նա շատ հանդարտութեամբ, լաւ ասացիր, և այժմ ականջ դիր ինձ: Այն մարդը, որին ես աչքի առաջ ունիմ, Միրզա Ֆիրուզն է (այստեղ դէմքս մռայլ-

լուեց, և մի երկար «բալի» ասացի): Ճիշտն ասած՝ ես վերջերս նկատել էի, որ նրա ազդեցութիւնը բաւական շատացել էր Շահի վրայ: Նա այնքան լեզուաճարտար է, այնքան զօրեղ և ազդու լեզու ունի, այնքան մեծ շողոքորթ է, և այնքան մեծ ստախօս է, որ Շահը նրանով աւելի շատ է զուարճանում քան որեւէ ուրիշ պալատականով: Ո՛վ գիտէ թէ՛ նա դեռ որքան հեռուն է գնալու: Ես հաւատացած եմ, որ սրտանց՝ նա իմ ամենաոխերիմ թշնամին է, իսկ ուրիշների մօտ՝ նա կեղծում է որպէս թէ իմ ամենամոռնաշնուէր ծառան է:

Վիճիչ և այսօր, շարունակեց նա, ես ի՛նչ մի ըռպէ որեւէ մէկի ատելութիւնից կամ դաւերից չեմ վախեցել: Բայց պիտի խոստովանեմ որ այժմ, այս դէպքում, բաւական վախենում եմ:

Մի րգա Ֆիրուզին անհաւատների մէջ ուղարկելով՝ որպէս Շահի ներկայացուցիչ՝ ես իսկոյն կ'ազատուեմ իմ անհանգըստութեան բուն պատճառներից, բաւական է որ նա մի անգամ այստեղից գնայ, ես այնպէս կարգադրութիւններ կ'անեմ, որ եթէ նա իր դեսպանութիւնից աշողութեամբ վերադառնայ (Աստուած տայ երբեք չյաջողուի նրան), նա այլևս երբեք չէ կարող Շահի վրայ ունենալ այն ազդեցութիւնը՝ որ նա այժմ փորձում է ունենալ:

Առանց դանդաղելու ես յայտնեցի իմ հաւանութիւնը և մտածում էի, թէ ի՛նչ ձևով ինձ համար հնարաւորութիւն կը լինէր օգտուելու նրա այս գաղտնի նպատակից՝ երբ նա կըրկին խօսեց ասելով:

— Զնշի, ես քեզ յայտնել եմ իմ ծրագրի մէկ մասը միայն: Երկրորդ նպատակս այն է, որ դու, հնշի, ուղեկցես դեսպանին գրագրի կամ ատենադպրի պաշտօնով: Դու, որ իմ խորհրդակից բարեկամն ու հաւատարիմն ես, դու որ գիտես իմ բոլոր ցանկութիւնները, դու որ քաջ ծանօթ ես այն ամեն բաներին, որ անհաւատների այստեղ հասնելու օրից մինչև հիմա պատահել են — այո՛, դու, դու ես ճիշտ այն մարդը, որ կարող է յանձն առնել այդ պաշտօնը, և ինձ մեծ ծառայութիւն արած կը լինիս, եթէ ընդունես:

Սկզբում ես շատ հրճուեցի դեսպանական առաջին մարդը դառնալու յոյսով, բայց երբ այս ստորադասի պաշտօնն առաջարկուեց ինձ, ես տարբեր զգացումներ ունեցայ: Ես զգացի, որ հրաժարուելով այն դրութիւնից, որ այժմ ես վայելում էի, կը կորցնէի դէպի առաջագիծութիւն տանող ճանապարհը, և կ'ընկնէի ծուռութեամբ նրբափողոցներ: Բացի այդ, ես էլ ունէի այն ազգային հակակրօնութիւնը — հայրենիքից հեռանալու սուկումը, մանաւանդ որ ես սարսափում էի ծովից, և երբ մտա-

ծեցի, որ նոյն տեղը, ուր ես պիտի ուղարկուէի, մի անծանօթ, անյայտ վայր էր—մի երկիր՝ որ ընկած է յաւիտենական խաւարի մէջ արեւի ճառագայթներից զուրկ, և որի բնակիչները պիղծ ու անհաւատ ցեղ էին, այն, երբ ես մտածեցի այդ բոլորի վրայ՝ խորհեցի վէզիրի առաջարկութիւնից այնպիսի վախով որ կարծես թէ կորստեան անդունդի պռունկին էի կանգնել:

Վէզիրին՝ իմ տուած պատասխանը բաղկացած էր մի շարք սառն համաձայնութեան բառերից, որոնք միշտ կախուած են պարսկէների շրթունքներից, չնայած թէ ինչ են նրանց իսկական զգացումները: Ես ասացի. «Այ՛քիս վրայ, ձեր ծառան եմ, ականջս ձեր ձեռքումն է, ես պարտաւոր եմ կատարել ինչ որ դուք հրամայէք» և յետոյ քարի պէս համր մնացի:

Վէզիրն հեշտութեամբ նկատեց, թէ ինչ էր անցնում մըտքովս, և ասաց.

—Եթէ դու չես ընդունում իմ հրաւերը, շատ լաւ, դու քո կամքի տէրն ես: Ես կարող եմ շուտով մի ուրիշ մարդ գտնել որ ընդունի: Ես աչքի առաջ ունիմ թէ քո շահը և թէ իմս: Նախ դու պիտի անմիջապէս գնայիր Սպահան, որպէս Շահի գործակալը, ժողովելու այն նուէրների մի մասը, որ արքունիքը որոշել է ուղարկել անգլիացոց թագաւորին և որը պիտի տան այդ քաղաքի բնակիչները: Յետոյ դու միջոց կ'ունենայիր հարստանալու:

Ես թողի որ նա աւելին ասէր: Հայրենիք վերադառնալու հրապոյրը—այն էլ այդ բարձր պաշտօնով ու իշխանութեամբ՝ անդիմադրելի էր, ուստի ես բոլորովին փոխուած տոնով ասացի.

—Երբեք եմ ձեր բարձրութեան աղով, ձեր մահով և Շահի մօրուքով, որ պատրաստ եմ: Այլևս ոչ մի խօսք հարկաւոր չէ: Ես կը գնամ, ուր որ դուք հրամայէք, նոյնիսկ եթէ ինձ ուղարկէք վարի աշխարհի խորքերը, այնանդից բերելու բոլոր ֆուսքների հայրերին՝ ես պատրաստ եմ, կը գնամ:

—Թող այդպէս լինի, ասաց վէզիրը: Ուրեմն որպէս առաջին քայլ, դու անմիջապէս գնա Միրզա Ֆիրուզի մօտ, շողորթիւր և հաւատացրու նրան, որ իբր թէ ինքը միակ մարդն է Պարսկաստանում, որ ամենից յարմար է ուղարկուելու որպէս դեսպան, և հասկացրու նրան՝ թէ այդ պաշտօնից նա որքան օգուտներ պիտի քաղի: Հասկացրու նրան, որ նա կը շահի պատիւ, հարստութիւն, Շահի բարեացակամութիւնը, իմ պաշտպանութիւնը, ամենը, ամենն առատօրէն, և իր վերադարձին էլ, Ալլահը գիտէ թէ ինչ բարձրութեան կը հասնի: Ահնարկ-

ներով նրան հասկացրու, որ իբր թէ այդ պաշտօնի մասին արդէն մի ուրիշի՝ մի հակառակորդի հետ էլ խօսուել է, և դու կը տեսնես, թէ նա որքան հեշտութեամբ, որքան շուտով կուլ կը տայ խայծը: Գնահ, հաջի, գնահ, Ալլահը հետդ լինի:

Ես հեռացայ նրա մօտից, հազիւ հասկանալով՝ թէ արդեօք ես սաւառնում էի երկնքում, թէ՞ քայլում էի երկրիս վրայ:

«Ի՜նչ, մտածեցի, ուրիշն վերջապէս հասնելու եմ աշխարհային երջանկութեան գագաթնակէտին. արդեօք իմ վաղուցուայ նախազուշակութիւնները պիտի վերջապէս կատարուին. արդեօք ես իսկապէս կը մտնեմ իմ հայրենի քաղաքը պատուոյ դրեստով, և զինուած իշխանութեան ձեռքով. արդեօք ես կը մտնեմ այնտեղ փառաց նժոյգի վրայ նստած: Թող, նրանք՝ որ մի անգամ, մի ժամանակ ծաղրում էին ինձ—սափրիչի որդի Հաջի Բարային՝ այժմ զգուշանան, որովհետեւ նրանք պիտի գործ տեսնան Շահի գործակալի հետ: Թող այն կատարները, որոնք մի ժամանակ դրոււմ էին իմ ածելիների տակ, այժմ խոնարհուին իմ առաջ, որովհետեւ ահա մօտենում է նա, որ կարող է գլուխներ կտրել հրամայելով:

Այս մտածմունքներով ոգևորուած, ես այնպէս ուռածփքուած, գլուխս՝ բարձր պահած քայլում էի փողոցում, որ ինձ տեսնողը պիտի շատ դարձանար: Ես չէի կարողանում ուրիշ բանի վրայ մտածել: Ես մտածում էի միմիայն այն բարձր պատիւների վրայ, որոնց շուտով պիտի արժանանայի: Ես տենչում էի տեսնել ինձ՝ նստած՝ մի գեղեցիկ կերպով թամբած՝ վզին ոսկէ շղթայ գցած, արծաթածոպ փունջ վզի տակից կախուած ձիւ վրայ, եղաքները առաջիս, ֆարբաշները առաջիս, և նահանգապետի կողմից ուղարկուած պատգամաւորութիւնը մօտս եկած՝ ողջունելու իմ բարի գալուստը իմ հայրենի քաղաքը:

Ինչեւէ, ես գնացի Միրզա Ֆիրուզի տունը: Նա արդէն պատրաստուած էր խօսելու դեսպանութեան խնդրի մասին, որովհետեւ, ինչպէս երևաց, անգլիական դեսպանն արդէն նրան արել էր միւկնոյն առաջարկութիւնը, որ մեծ վէզիրն իմ միջոցով անկուլ էր: Թէպէտ ես միայն մեծ վէզիրին էի ծառայել, սակայն յարատեւ բարեկամութիւն էի պահել Անգլիա ուղարկուող դեսպանի հետ, որը շատ ուրախացաւ երբ լսեց, որ ես ուղեկցելու էի իրան: Մենք երկար խօսեցինք թէ՛ մեր ապագայ ծրագրերի մասին և թէ՛ մեր անցեալ արկածների, և երբ նա ծիծաղի որոտով ինձ հարցրեց, թէ արդեօք ես կը ցանկանայի կրկին տէր դառնալ իմ անհաւատարիմ Շաքարլաբին, ես խոյս

տուի, դժկամութիւն յայտնեցի, չկամենալով որ, իմ կեանքի այդ դէպքը թարմանար իմ յիշողութեան մէջ:

Հետեւեալ օրը, Շահը վերջապէս յայտնեց, որ ինքը դիտաւորութիւն ունէր Միրզա Ֆիրուզին Անգլիա ուղարկել, որպէս ներկայացուցիչ, և մեծ վէզիրն էլ ինձ պատուիրեց պատրաստուել Սպահան գնալու, հէնց որ պատրաստ կը լինէր ինձ տրուելիք հարկաւոր եղած ֆիրմանը, որ պիտի ծառայէր ինձ, որպէս զէնք՝ իշխանութիւն բանեցնելու:

Ես չեմ ձանձրացնի ընթերցողին նկարագրելով իմ այս պաշտօնական գործիս պատրաստութիւններէ մանրամասնութիւնները, որովհետեւ նա կը զգուի և ես կը կարմրեմ իմ մնալիստութեան համար. բաւական է ասել, որ ես ճանապարհուեցի դէպի Սպահան մեծ, հեղինակաւոր մարդու փառքով ու շքով, և մտայ իմ հայրենի քաղաքը այնպիսի զգացումներով՝ որպիսին հասկանալին է միմիայն այն պարսիկին, որ ծնուած է փառասիրութեան տենջանքների մէջ: Ես, վերջապէս, ինձ հասած դտայ այն բանի գագաթնակէտին՝ որ, ըստ իս, կատարեալ մարդկային երանութիւն էր:

Դժբախտութիւնը կարծես թէ հրաժեշտ էր տուել ինձ, և ամեն բանից երևում էր, որ կեանքիս զգրի մէջ մի նոր գլուխ էր բացուելու ինձ համար: Սափրիչի որդի Հաջի Բաբան մտաւ իր ծննդավայրը, որպէս Շահի գործակալ Հաջի Բաբա:

Ընթերցող, էլ ասեմ, սրանից աւելին հարկաւոր է:

Եւ ահա, ագնիւ ընթերցող, «Հաջի Բաբայի արկածներն» խոնարհ թարգմանիչը համարձակուած է խօսքը ձեզ ուղղել (to address you), և օգտուելով պարսիկ հէքիաթ պատմողների ակնարկից՝ (hint) ընդհատուած է իր պատմութիւնը, գլուխ է իջեցնում և ասում, «Բաշալերեցէք ինձ, և ես ձեզ կը պատմեմ աւելին»: Ձեզ կը յայտնեմ, թէ Հաջի Բաբան ինչպէս ուղեկցեց մի մեծ դեսպանի. դէպի Անգլիա, թէ նրանց ինչ արկածներ պատահեցին ծովի և ցամաքի վրայ, թէ նա՝ ինչից տեսաւ, ինչեր նշմարեց և ինչ պատահեց նրան Պարսկաստան վերադառնալիս: Բայց նա խոնարհաբար աւելացնում է, որ եթէ Հաջի Բաբայի երբորդ դէրվիշի նման նկատի, որ ինքը դեռ չէ սովորել իր ունկնդիրների ուշադրութիւնը գրաւել՝ նա այլևս երբէք չի համարձակուիլ կրկին երևալ հասարակութեան առաջ, մինչև որ ունենայ հաստատ աջողութեան հասնելու համար հարկաւոր եղած փորձառութիւնը: Եւ այսպէս նա խոնարհութեամբ ձեզ ասում է, մնաք բարեմա:

